

# ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Երևան
2021

Norwegian Helsinki Committee

CENTER FOR LEGAL INITIATIVES

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

# ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Երևան 2021

*«Ազատազրկված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հետազոտությունը կատարել է «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ-ն «Զատազովելով սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքը քրեակատարողական հիմնարկներում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում:*

*Ենթադրամաշնորհային ծրագիրն իրականացվել է «Նոր սերունդ» մարդասիրական հկ-ի ֆինանսավորմամբ, Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի աջակցությամբ:*

*Հետազոտության բովանդակության համար պատասխանատու է «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի «Նոր սերունդ» մարդասիրական հկ-ի կամ Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի տեսակետները:*

*Զեկույցը կազմեց Նարե Հովհաննիսյանը:*

*Զեկույցում օգտագործվել են ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կողմից արված լուսանկարները:*

© «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, 2021թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....................................................................................4

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆԿ....................................................................................6

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....................................................................................10

ԳԼՈՒԽ 1....................................................................................12

ՀԱԿԱԽՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ....................................................................................12

1.1. Հակախտրական օրենսդրություն....................................................................................12

1.2. Քաղաքականություն և ռազմավարություններ....................................................................................19

ԳԼՈՒԽ 2....................................................................................27

ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԿԱՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ....................................................................................27

2.1. Քրեական ենթամշակույթ....................................................................................27

2.2. Սեռական բռնություն և շահագործում....................................................................................34

2.3. Տեղաբաշխում....................................................................................39

2.4. Պահման պայմաններ....................................................................................50

2.5. Անձնական խուզարկություններ....................................................................................57

2.6. Առողջապահական ծառայությունների հասանելիություն....................................................................................61

2.7. Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ....................................................................................66

2.8. Սննդի կազմակերպում....................................................................................70

2.9. Աշխատանք....................................................................................73

2.10. Դասընթացներ և միջոցառումներ....................................................................................77

2.11. Արտաքին աշխարհի հետ կապը....................................................................................78

2.12. Բողոքների ներկայացման և քննության կարգը....................................................................................83

2.13. Ազատման նախապատրաստում և վերասոցիալականացում....................................................................................87

2.14. Քրեակատարողական հիմնարկների աշխատողների ուսուցում և վերապատրաստում....................................................................................89

ԳԼՈՒԽ 3....................................................................................95

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ....................................................................................95

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ....................................................................................110

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ....................................................................................126

ԱՄՓՈՓՈՒՄ....................................................................................142

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ....................................................................................144

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

***ԱՄՆ*** *Ամերիկայի Միացյալ Նահանգներ*
***ԱՆ*** *արդարադատության նախարարություն*
***Արտերկիր*** *արտասահմանյան երկիր*
***Բուժաշխատող*** *բուժական՝ բժշկական (բնազավառի) աշխատող*
***Բուժհաստատություն*** *բուժական՝ բժշկական (բնազավառի) հաստատություն*
***Բուժօգնություն*** *բժշկական օգնություն*
***ԳԲՏ*** *գեյ, բիսեքսուալ և տրանս*
***Դիտորդների խումբ*** *ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ*
***ԵԽԽՎ*** *Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով*
***ԼԳԲՏ*** *լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանս*
***ԼԳԲՏԻ*** *լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս և ինտերսեքս*
***ԼԳԲՏԻՔ*** *լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս, ինտերսեքս և քվիր*
***ԽԿԿ*** *Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե*
***ԽԿԵ*** *Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ենթակոմիտե*
***ԿՄԿ*** *կանայք, որոնք սեռական հարաբերություն են ունենում կանանց հետ*
***ՀԿ*** *հասարակական կազմակերպություն*
***ՀՀ*** *Հայաստանի Հանրապետություն*
***ՀՌՎ*** *հակառետրովիրուսային*
***ՁԻԱՀ*** *ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ*
***ՄԱԿ*** *Միավորված ազգերի կազմակերպություն*
***ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման հարցերով հատուկ զեկուցող*** *ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով զեկուցող*
***Մանդելայի կանոններ*** *Բանտարկյալների հետ վարվեցողության վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ*
***ՄԻԵԴ*** *Մարդու իրավունքների եվրոպական դատարան*
***ՄԻԵԿ*** *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա*
***ՄԻԱՎ*** *մարդու իմունային անբավարարության վիրուս*
***Ներքին կանոնակարգ*** *ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ*
***Պաշտպան*** *ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան*

***ՊՈԱԿ*** *պետական ոչ առևտրային կազմակերպություն*
***ՍՀԻԱ*** *սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ*
***ՏՍՏ*** *տղամարդիկ, որոնք սեռական հարաբերություն են ունենում տղամարդկանց հետ*
***ՓԲԸ*** *փակ բաժնետիրական ընկերություն*
***ՔԿԱԳ*** *քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին*
***ՔԿՀ*** *քրեակատարողական հիմնարկ*
***PREA*** *Prison Rape Elimination Act*
***TGIJP*** *"Transgender, Gender Variant and Intersex" Justice Project*

# ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆԿ[1]

**Ատելության խոսք**. խոսք, արտահայտություն, որը նպատակ ունի վիրավորել, վախեցնել, սպառնալ անձին կամ անձանց խմբի՝ այդ անձին կամ անձանց խմբին հատուկ որևէ հիմքով (ինչպես՝ սեռ, սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն, կրոն, դավանանք, ազգական և էթնիկ պատկանելիություն և այլն):

**Ատելության (հիմքով) հանցագործություն**. իրավախախտում, որը բխում է որևէ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելությունից կամ կանխակալ վերաբերմունքից: Հանցագործությունների այս տեսակը կոչվում է նաև «կանխակալության հիմքով հանցագործություն»:

**Բիսեքսուալ (երկսեռական)**. անհատ, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի/գենդերների անձանց նկատմամբ:

**Բիֆոբիա**. վախ, չհիմնավորված զայրույթ, անհանդուրժողականություն և/կամ ատելություն բիսեքսուալության կամ բիսեքսուալ անձանց հանդեպ:

**Գեյ.** [նույնասեռական տղամարդ] անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն գենդերի անձի հետ:

**Գենդերային արտահայտում.** անձի իր իսկ (կամ այլոց կողմից ընկալվող) գենդերային ինքնության դրսևորումը: Մարդիկ սովորաբար աշխատում են իրենց գենդերային արտահայտումը համապատասխանեցնել իրենց գենդերային ինքնությանը/ինքնություններին՝ անկախ ծննդյան պահին իրենց վերագրված սեռից:

**Գենդերային ինքնություն**. անհատի իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ հաստատված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անհատի նույնականացմանը որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր:

[1]Եզրույթների ցանկը կազմելիս օգտվել ենք հետևյալ գրականությունից՝ Եվրոպայի խորհուրդ, Ղազարյան, Ա., «Իրավական պաշտպանության եղանակները խտրականության գործերով», 2015թ., http://bit.do/fMV8G: «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հկ (Փինք Արմենիա), Նիկողոսյան, Ա., «ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի ուղեցույց», Երևան, 2017թ., էջեր 60-63, http://bit.do/fMLMJ: «Նոր սերունդ» մարդասիրական հկ, Ղարիբյան, Ա., «ԼԳԲՏԻՔ եզրութաբանական ձեռնարկ լրագրողների և բլոգերների համար», Երևան, 2017թ., http://bit.do/fM2je: «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիա» հկ, Սիմոնյան, Ա., «Հավասարության լեզու» տերմինաբանական բառարան, Երևան, 2016թ., http://bit.do/fM2jt:

**Ինտերսեքս (միջսեռական)**. վերաբերում է ֆիզիկական հատկանիշների կամ վարիացիաների մի ամբողջ շարքի, որոնք ընկած են արական և իգական սեռերի մասին կարծրատիպային իդեալների արանքում: Ինտերսեքս անձինք ծնվում են ֆիզիկական, հորմոնալ կամ գենետիկ առանձնահատկություններով, որոնք կամ ոչ ամբողջությամբ են արական կամ իգական, կամ երկուսի զուգակցումն են, կամ էլ ո՛չ արական են, ո՛չ էլ իգական: Քանի որ գոյություն ունեն տարբեր ինտերսեքս կարգավիճակներ, ինտերսեքսն ավելի շուտ ընդհանուր հովանի եզր է, քան մեկ հստակ կատեգորիա: Այն փոխարինել է մասնավորապես 18-րդ և 19-րդ դարերում արևմտյան բժշկության մեջ օգտագործվող «հերմաֆրոդիտ» տերմինին:

**Լեսբի**. [նույնասեռական կին] անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն գենդերի անձի հետ:

**Խտրականություն**. անհավասար կամ անարդար վերաբերմունք, որը կարող է պայմանավորված լինել տարբեր հիմքերով, օրինակ՝ տարիքով, էթնիկ ծագմամբ, հաշմանդամություն ունենալով, սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ:

**Խտրականության արգելքով պաշտպանված հատկանիշ**. Անձի կամ անձանց խմբի հատկանիշ կամ առանձնահատկություն, որի հիմքով դրսևորվել է խտրական վերաբերմունքը:

**Կենսաբանական սեռ**. անձի կենսաբանական ստատուսն է, որը կանխորոշվում է օրգանիզմի վերարտադրողական համակարգով: Հենց այդ համակարգի կառուցվածքով ու ֆունկցիաներով էլ միմյանցից տարբերվում են արական, իգական կամ ինտերսեքս անհատները:

**Հետերոսեքսուալ (տարասեռական)**. անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի այլ գենդերի անձանց հետ:

**Հոմոֆոբիա**. վախ, անհիմն զայրույթ, անհանդուրժողականություն և/կամ ատելություն նույնասեռականության նկատմամբ:

**Նույնասեռական / հոմոսեքսուալ (լեսբի կամ գեյ)**. անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և

սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն գենդերի անձանց հետ:

**Սեռ**. անհատի կենսաբանական ստատուս որպես արական, իգական կամ ինտերսեքս: Որոշվում է այնպիսի չափորոշիչներով, ինչպիսիք են սեռական քրոմոսոմները, գոնադները, արտաքին ու ներքին սեռական օրգանները:

**Սեռական կողմնորոշում**. անհատի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները և/ կամ հարաբերությունների ցանկությունն այլ անհատի հետ:

**Սեռական վարքագիծ**. սեռական բնույթի գործողություններ, սեռական կենսակերպ արական, իգական կամ այլ սեռի անձի, ինչպես նաև սեփական մարմնի հետ (ձեռնաշարժություն):

**Սեռափոխության վիրահատություն (գենդերի վերահաստատման վիրահատություն).** բժշկական վիրահատություն, որը ենթադրում է հիմնական/առաջնային և երկրորդային սեռային հատկանիշների հարմարեցում անձի գենդերային ինքնընկալմանը:

**Տրանս**. հովանի եզրույթ է, որը ներառական է մի շարք ոչ նորմատիվ գենդերային ինքնությունների և արտահայտումների համար: Այն վերաբերում է մարդկանց, որոնց գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից, և ներառում է տրանսսեքսուալ անցյալով կանանց և տղամարդկանց, տրանսսեքսուալ նույնականացող անձանց, տրանսգենդեր անձանց, տրանսվեստիտ/ հագուստափոխ անձանց և այլն:

**Տրանսգենդեր**. անձ, որի գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից, ընդ որում՝ բժշկական միջամտության ենթարկվելը պարտադիր պայման չէ:

**Տրանսսեքսուալ**. այն անձն է, ով ունի հստակ գենդերային ինքնություն և դեր, որոնք հակառակ են իր կենսաբանական սեռին: Տրասնսեքսուալը սովորաբար իրեն հաստատված է համարում իր գենդերային դերում և ցանկանում է այն պահպանել մշտապես: Օրինակ, կենսաբանական սեռով պայմնավորված կինը կարող է իրեն զգալ տղամարդ և ցանկություն ունենալ մշտապես հանդես գալ տղամարդու դերում: Տրանսսեքսուալները հաճախ դիմում են բժշկական միջամտությունների՝ իրենց մարմինն իրենց ցանկալի սեռի մարմնին համապատասխանեցնելու համար:

**Տրանսֆոբիա**. բացասական մշակութային և անձնական համոզմունքներ, կարծիքներ, վերաբերմունք և վարքագծեր, որոնք հիմնված են տրանս անձանց կամ գենդերային ինքնության և գենդերային արտահայտումների վարիացիաների հանդեպ նախապաշարումների, զզվանքի, վախի և/կամ ատելության վրա:

**Ցիսգենդեր կամ սիսգենդեր.** այն անհատն է, ում գենդերային ինքնությունը համապատասխանում է իր կենսաբանական սեռին:

**Քվիր.** քվիրը նախկինում դիտվել է որպես ոչ հետերոսեքսուալ կենսակերպ ունեցող անձանց հովանի եզրույթ, իսկ այնուհետև վերածվել հակաինքնության, որը բնութագրում է ցանկացած անձի այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք հակառակ են ընդունված նորմերին, լեգիտիմությանն ու դոմինանտությանը, և նպատակ են հետապնդում դիմադրելու, մերժելու, ապակառուցելու և այլաշրջելու նորմալությունն ու հետերոնորմատիվությունը որպես ճնշման համակարգեր:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ազատազրկված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հետազոտությունը կատարել է «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ-ն «Զատագովելով սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքը քրեակատարողական հիմնարկներում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է «Նոր սերունդ» մարդասիրական հկ-ի ֆինանսավորմամբ, Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի աջակցությամբ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ազատազրկված լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանս (այսուհետ՝ ԼԳԲՏ) անձանց հիմնախնդիրները և ներկայացնել նրանց վիճակի բարելավմանն ուղղված առաջարկություններ: Հետազոտության խնդիրներն են ուսումնասիրել քրեակատարողական ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը, ազատազրկված անձանց իրավունքների պաշտպանության նպատակով պետության որդեգրած քաղաքականությունը, ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորումները, միջազգային իրավական չափանիշների և լավագույն փորձի համեմատության հիման վրա մշակել ազատազրկված ԼԳԲՏ անձանց վիճակի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող օրենսդրության և ազատազրկված անձանց իրավունքների պաշտպանության նպատակով պետության որդեգրած քաղաքականության արդյունավետությունը հետազոտության մեջ գնահատվում է այն տեսանկյունից, թե որքանով է երաշխավորում ազատազրկված ԼԳԲՏ անձանց պաշտպանությունը: Միջազգային իրավական չափանիշների և լավագույն փորձի հետ համեմատական ուսումնասիրության արդյունքում ներկայացվում են այն սկզբունքները, որոնցով պետությունը պետք է առաջնորդվի՝ ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորումները բացառելու համար: Միևնույն ժամանակ գնահատվում է, թե միջազգային իրավական չափանիշներն ինչպես են արտացոլվել կամ արտացոլվել են արդյոք համապատասխան իրավական ակտերում և քաղաքականության մեջ:

Իրավիճակը համակողմանիորեն վերլուծելու և գնահատելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք է բերվել տեղեկատվություն ստանալու վերաբերյալ գրավոր հարցումների միջոցով: Հարցումների արդյունքում ձեռք բերված տվյալները համադրվել են օրենսդրության և այլ փաստաթղթերի վերլուծության հետ: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են վերաբերելի միջազգային և ներպետական իրավական ակտերը, ռազմավարական ծրագրերը, քաղաքականության փաստաթղթերը, հետազոտությունները, մամուլի հրապարակումները, ուղեցույցները և այլն:

Հետազոտության մեջ չենք անդրադարձել Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկված ինտերսեքս անձանց հիմնախնդիրներին, քանի որ մեր կողմից ուսումնասիրվող փաստաթղթերում նշված անձանց վերաբերյալ վերլուծություններ չեն եղել: Այդ պատճառով կիրառում ենք ԼԳԲՏ հապավումը, որն օգտագործվում է լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանս անձանց համար: Քրեակատարողական հիմնարկներում խտրական վերաբերմունքի են արժանանում ոչ միայն ԼԳԲՏ, այլև ԿՍԿ և ՏՍՏ անձինք, որոնք նույնականացվում են ԼԳԲՏ անձանց հետ: Սակայն սեռական վարքագծի հետ կապված խնդիրներին չենք անդրադարձել, քանի որ մեր նպատակն ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորումների ուսումնասիրությունն էր: Չենք անդրադարձել նաև այն խնդիրներին, որոնց ԼԳԲՏ անձինք կարող են առերեսվել ձերբակալվածներին պահելու վայրերում, փոխադրման և հարցաքննությունների ժամանակ կամ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում:

Քրեակատարողական հիմնարկներում կրկնակի խոցելի վիճակում են հայտնվում անչափահաս, տարեց, հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող, օտարերկրյա քաղաքացի կամ ազգային փոքրամասնության ներկայացուցիչ հանդիսացող, ցմահ ազատազրկման դատապարտված ԼԳԲՏ անձինք, ովքեր սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից բացի խտրականության են ենթարկվում նաև տարիքի, առողջական վիճակի, հաշմանդամության, քաղաքացիության, ազգային պատկանելության և այլ հիմքերով: Սակայն այս հիմնախնդրին նույնպես չենք անդրադարձել, քանի որ հետազոտության շրջանակներում նշված հիմքերով խտրականության դեպքերն ուսումնասիրելու նպատակ չենք հետապնդել:

Հետազոտությունը հասցեագրվում է այն որոշում կայացնող և քաղաքականություն մշակող կառույցներին, որոնք պատասխանատու են Հայաստանի քրեակատարողական համակարգի բարեփոխումների և ազատազրկված անձանց պաշտպանության արդյունավետության բարձրացման համար: Այն նաև արժեքավոր տեղեկատվական աղբյուր է ոլորտի մասնագետների համար, ովքեր իրենց գործունեության ընթացքում առնչվում են կամ կարող են առնչվել ազատազրկված ԼԳԲՏ անձանց և նրանց խնդիրներին:

Ակնկալում ենք, որ հետազոտության մեջ բարձրացված խնդիրները կնպաստեն ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ հանրության, որոշում կայացնող և քաղաքականություն մշակող կառույցների զգայունության բարձրացմանը և վերաբերմունքի փոփոխությանը, ինչը կարևոր նախապայման է համարժեք բարեփոխումների իրականացումն ապահովելու համար:

# ԳԼՈՒԽ 1

# ՀԱԿԱԽՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## *1.1. Հակախտրական օրենսդրություն*

Խտրականության արգելքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ[2] և մի շարք ներպետական իրավական ակտերում: Քրեակատարողական ոլորտը կարգավորող օրենսդրությունը ևս պարունակում է խտրականությունն արգելող դրույթներ: ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը[3] և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը[4] սահմանում են, որ պատիժը կատարելու և կալանքի տակ պահելու կարգն ու պայմանները տարածվում են բոլոր ազատազրկված անձանց վրա՝ անկախ նրանց սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծննդից, գույքային կամ այլ դրությունից:

Սակայն խնդիրն այն է, որ մի կողմից ներպետական օրենսդրությունը, այդ թվում՝ վերոնշյալ իրավական ակտերը, սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը չեն ներառում որպես խտրականության արգելքով պաշտպանվող հիմքեր, այլ սահմանում են բաց ցանկ՝ «գույքային կամ այլ դրություն»: Այսինքն՝ ոչ անմիջականորեն են արգելում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը: Մյուս կողմից էլ ներպետական օրենսդրության մեջ խտրականության արգելքը սահմանող իրավանորմերը հռչակագրային բնույթ են կրում և պահանջում են գործնական կիրառման մեխանիզմներ[5]: Ընդ որում, այդ իրավանորմերից յուրաքանչյուրը կարգավորում է միայն այն ոլորտը, որի համար ընդունված է տվյալ իրավական ակտը[6]: Բացի այդ, Հայաստանը դեռևս չունի խտրականությունն արգելող համապարփակ օրենսդրություն, որը կարող է իրավական և դատական պաշտպանության մեխանիզմներ տրամադրել խտրականությունից տուժած անձանց:

Խնդրի լուծման նպատակով ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշմամբ հաստատված «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի» շրջանակներում

---

[2]ՀՀ Սահմանադրություն, հոդված 29, http://bit.do/fLtgQ:
[3]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 8, http://bit.do/fLtgT:
[4]«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 2, կետ 3, http://bit.do/fLtgV:
[5]«Հասարակության առանց բռնության» ՀԿ, «Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների գործնական գնահատում», Հայաստան, 2016թ., էջ 26, http://bit.do/fLtgi:
[6]Եվրոպայի խորհուրդ, Ղազարյան, Ա., «Իրավական պաշտպանության եղանակները խտրականության գործերով», Երևան, 2015թ., էջեր 5-7, http://bit.do/fMozU:

ուսումնասիրվել է ՀՀ օրենսդրության համապատասխանությունը խտրականության արգելքին վերաբերող միջազգային իրավական նորմերին, ինչպես նաև քննարկվել է «Խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենք ընդունելու նպատակահարմարության հարցը[7]: «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի» շրջանակներում նախատեսված էր ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավահավասարության ապահովման համար օրենսդրական կառուցակարգեր ստեղծել, այն է՝ մշակել և ՀՀ կառավարությանը ներկայացնել համապատասխան իրավական ակտի նախագիծը[8]: ՀՀ կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրով «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքը պետք է մշակվեր և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացվեր 2019թ. 3-րդ տասնօրյակում[9]: «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի» 39-րդ կետով նշված օրենքի նախագիծը մշակելու և ՀՀ ազգային ժողով ուղարկելու վերջնաժամկետ էր սահմանվել 2020թ. 1-ին կիսամյակը[10]:

Նշենք, որ օրենքի նախագիծն արդարադատության նախարարությունը մշակել և շրջանառության մեջ է դրել 2018թ., որը դեռևս չի ընդունվել: Նախագծով սահմանվում են խտրականության հասկացությունը և տեսակները, կանոնակարգվում են խտրականությունից պաշտպանվելու իրավական մեխանիզմները, ինչպես նաև իրավահավասարության հարցերով զբաղվող մարմնի կազմավորման և գործունեության երաշխիքները[11]: Սակայն խնդիրն այն է, որ որպես խտրականության դեմ պայքարի նպատակով ընդունվող առաջին համապարփակ օրենք՝ նախագիծը չի համապատասխանում հակախտրական օրենսդրության համար սահմանված միջազգային և եվրոպական նվազագույն չափանիշներին: Ի թիվս այլ խնդրահարույց կետերի՝ նախագծում խտրականության արգելքով պաշտպանված հիմքերը սահմանափակ են և ուղղակիորեն չեն պաշտպանում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության ենթարկվող անձանց, ինչը նշանակում է, որ օրենքի ընդունվելու դեպքում անձինք ուղղակիորեն

[7]«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշում, հավելված, գործողություն 8, http://bit.do/fLtgX:

[8]«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 483-Ն որոշում, հավելված 1, գործողություն 77, http://bit.do/fLtg4:

[9]«ՀՀ կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. մայիսի 16-ի թիվ 650-Լ որոշում, հավելված 1, միջոցառում 43, http://bit.do/fLtg8:

[10]«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 16-ի թիվ 1978-Լ որոշում, հավելված 2, գործողություն 39, http://bit.do/fLtha:

[11]«Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, http://bit.do/fLq4i:

ապահովված չեն լինելու նշված հիմքերով խտրականությունից պաշտպանվելու իրավական մեխանիզմներով[12]:

Խտրականության հասկացությունը սահմանված է նախագծի 4-րդ հոդվածում, որը նախատեսում է պաշտպանվող հատկանիշների բաց ցանկ՝ «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանք»: Ձևակերպումից բխում է, որ եթե, օրինակ, անձը խտրականության է ենթարկվել սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքերով, որոնք անմիջականորեն նշված չեն ցանկում, ապա խտրականության գործով որոշում կայացնողների հայեցողությանն է թողնվում այն, թե արդյոք «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» եզրույթը ենթադրում է նաև սեռական կողմնորոշում կամ գենդերային ինքնություն: Այսինքն՝ անձը կարող է զրկվել պաշտպանության իրավական միջոցներից, եթե որոշում կայացնող մարմնի կողմից «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքները» չմեկնաբանվեն որպես վերոնշյալ հիմքեր[13]:

Ըստ փորձագիտական գնահատականի՝ սեռական կողմնորոշումը Հայաստանում առավել հաճախ դրսևորվող խտրական մոտեցումների հիմքերից է, իսկ խտրականության տեսանկյունից առավել ռիսկային ու խոցելի խմբում են նաև սեռական փոքրամասնությունները և փակ հաստատություններում գտնվող անձինք[14]: Հետևաբար սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը խտրականության արգելքով պաշտպանվող հիմքերի մեջ ներառելով՝ պետությունը խտրական վերաբերմունքի նկատմամբ առավել խոցելի խմբերի համար պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ է սահմանում: Սակայն նշված նախագծի 4-րդ հոդվածում խտրականության հասկացության սահմանումը լայն մեկնաբանման հնարավորություն է տալիս՝ չնախատեսելով այն շարժառիթները, որոնցով պայմանավորված խտրականության դեպքերը զգալի տարածում ունեն Հայաստանում[15]:

Այս առնչությամբ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դ. Միյատովիչը 2018թ. սեպտեմբերի 16-20-ը Հայաստան կատարած այցից հետո նշել է, որ խտրականության դեմ օրենսդրության մեջ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ կոնկրետ հղում ներառելը հստակ ազդակ է առ այն, որ այդպիսի խտրականությունն արգելված է: Ավելին, հանձնակատարը մտահոգություն է հայտնել, որ ինքը տեղյակ չէ որևէ նախադեպի մասին, որը ցույց կտար, որ Հայաստանի ներպետական օրենսդրության մեջ արդեն գոյություն ունեցող

---

[12]«Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիա» հկ, «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ, http://bit.do/fLj6N:

[13]«Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, ամփոփաթերթ, առաջարկություն 10, http://bit.do/fLtgH:

[14]«Եվրասիա համագործակցության հիմնադրամ», «Խտրականության փորձագիտական ընկալումները Հայաստանում», Երևան, 2015թ., էջ 18, http://bit.do/fLtgF:

[15]«Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, Ամփոփաթերթ, Առաջարկություններ 15, 19, http://bit.do/fLtgH:

ընդհանուր հակախտրական չափորոշիչները դատարաններում կամ վարչական վարույթներում կիրառվում են ԼԳԲՏ անձանց նկատմամբ[16]:

Մի շարք իրավապաշտպան կազմակերպություններ նախագծում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես խտրականության արգելքով պաշտպանվող հատկանիշներ ավելացնելու վերաբերյալ առաջարկություններ են ներկայացրել արդարադատության նախարարությանը, որոնք չեն ընդունվել[17]: Նախարարության հիմնավորմամբ՝ նախագծում խտրականության արգելքի բառային ձևակերպումը կազմվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ ՄԻԵԿ) կից թիվ 12 արձանագրության և ՀՀ սահմանադրության համապատասխան դրույթների համաձայն, որոնք այդպիսի ձևակերպում չեն պարունակում, այլ թվարկում են խտրականության հիմքերի ոչ սպառիչ ցանկ[18]:

Այս առումով հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքը սեռական կողմնորոշումը համարում է խտրականության արգելման հիմք[19], իսկ ՄԻԵԿ-ին կից թիվ 12 արձանագրության 1-ին հոդվածը սահմանում է խտրականության համընդհանուր արգելքը՝ անկախ հիմքից, ինչը նշանակում է, որ նշված հոդվածի շրջանակներում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ևս պաշտպանված հատկանիշներ են[20]:

Բացի այդ, 2010թ․ մարտին ընդունված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)5 առաջարկությունը սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմունքներով խտրականության դեմ պայքարի միջոցառումների շրջանակներում առաջարկում է, որ անդամ պետություններն ապահովեն «սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմունքներով խտրականության դեմ պայքարելու համար օրենսդրական և այլ միջոցառումների ընդունումն ու արդյունավետ իրականացումը»[21]: «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականություն» վերնագրով ԵԽԽՎ 1728(2010) բանաձևը կոչ է անում անդամ պետություններում «ընդունել և կիրարկել հակախտրական օրենսդրություն, որը սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ներառում է խտրականությունն արգելող հիմքերի շարքում, ինչպես նաև ընդունել և կիրառել պատիժներ խախտումների համար»[22]: Միավորված ազգերի

---

[16]Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչի զեկույցը 2018թ. սեպտեմբերի 16-20-ը Հայաստան կատարած այցին հաջորդիվ, CommDH(2019)1, Ստրասբուրգ, 2019թ., էջ 40, http://bit.do/fLtkf:

[17]«Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, Ամփոփաթերթ, Առաջարկություններ 8, 10, 15 և 19, http://bit.do/fLtgH:

[18]Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչի զեկույցը 2018թ. սեպտեմբերի 16-20-ը Հայաստան կատարած այցին հաջորդիվ, CommDH(2019)1, Ստրասբուրգ, 2019թ., էջ 39, http://bit.do/fLtkf:

[19]European Court of Human Rights, Factsheet - Sexual orientation issues, January 2021, http://bit.do/fMqWK.

[20]Protocol No. 12 to the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Article 1, http://bit.do/fM2mK.

[21]CM/Rec(2010)5 Recommendation on Measures to Combat Discrimination on Grounds of Sexual Orientation or Gender Identity, 31 March, 2010, http://bit.do/fMqXm.

[22]Parliamentary Assembly of the Council of Europe, Resolution 1728(2010), Discrimination on the basis of sexual orientation and gender identity, 29 April, 2010, http://bit.do/fMqXt.

կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) Մարդու իրավունքների կոմիտեն «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի՝ խտրականությունն արգելող 26-րդ հոդվածը մեկնաբանելիս նշել է, որ այն ընդգրկում է նաև սեռական կողմնորոշման հիմքով խտրականությունից պաշտպանությունը: Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն, որը ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 2.2-րդ հոդվածը մեկնաբանելիս որպես պաշտպանված առանձին հատկանիշ ներառել է նաև գենդերային ինքնությունը[23]:

Անդրադառնալով տարբեր երկրների փորձին՝ նշենք, որ որոշ պետությունների ազգային օրենսդրություններ ԼԳԲՏ անձանց համար խտրականությունից պաշտպանության մեխանիզմներ են նախատեսում[24]: Ի դեպ, Հայաստանում 2013թ. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմը մշակել էր «Խտրականության դեմ» ՀՀ օրենքի նախագիծը, որը չի ընդունվել հենց այն պատճառով, որ նախագծով պատասխանատվություն էր սահմանվում ԼԳԲՏ անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման հիմքով խտրական վերաբերմունք ցուցաբերելու համար[25]:

Ինչ վերաբերում է ազատազրկված ԼԳԲՏ անձանց, ապա միջազգային իրավունքն այս խմբի համար հատուկ պաշտպանություն չի նախատեսում: Միջազգային իրավական փաստաթղթերը[26] նախատեսում են ընդհանուր պաշտպանություն՝ հիմնված մարդու իրավունքների հիմնարար սկզբունքի՝ խտրականության բացառման վրա: Այդ փաստաթղթերն առանց որևէ վերապահության և տարբերակման վերաբերում են բոլոր ազատազրկված անձանց և պետություններին պարտավորեցնում են իրենց վերահսկողության ներքո գտնվող բոլոր ազատազրկված անձանց համար ապահովել պաշտպանություն և խնամք: Ավելին, այդ փաստաթղթերում տեղ գտած հավասարության սկզբունքը պահանջում է դրական գործողություններ ձեռնարկել խոցելի խմբերի, ներառյալ ԼԳԲՏ անձանց նկատմամբ հնարավոր խտրականության դրսևորումները բացառելու համար:

Ազատազրկված ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն նաև 2006թ. նոյեմբերին Ինդոնեզիայի Ջոկյակարտա քաղաքում մի խումբ իրավապաշտպանների կողմից մշակված

---

[23]«Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, Ամփոփաթերթ, Առաջարկություն 10, http://bit.do/fLtgH:

[24]ILGA World, "State-sponsored Homophobia, Global Legislation Overview Update", Geneva, 2020, http://bit.do/fMWzw.

[25]«Նոր սերունդ» մարդասիրական հկ, «ՀՀ օրենսդրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված ԼԳԲՏ անձանց իրավունքների համեմատության զեկույց», Երևան, 2014թ., էջ 7, http://bit.do/fM2of:

[26]«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիա, «Եվրոպական բանտային կանոններ», «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ» և այլն:

Ջոկյակարտյան սկզբունքները[27], որոնք լրացվել են 2017թ.[28] և սահմանում են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության համատեքստում մարդու իրավունքների մի շարք միջազգային սկզբունքներ: 9-րդ սկզբունքը վերաբերում է անազատության պայմաններում մարդասիրական վերաբերմունքին և սահմանում է, որ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի նկատմամբ պետք է արժանապատվությունը հարգող վերաբերմունք ցուցաբերվի, ինչպես նաև հավելում է, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը յուրաքանչյուր անձի արժանապատվության անբաժանելի մասն են կազմում:

Տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեակատարողական ոլորտի օրենսդրության մեջ ըստ անհրաժեշտության առանձին կարգավորումներ են նախատեսված նաև ազատազրկված ԼԳԲՏ անձանց համար: Օրինակ, Իռլանդիայի Բանտային կանոններն ազատազրկված անձանց գենդերային ինքնությանն առնչվող տարբեր դրույթներ են նախատեսում[29]:

Ինչ վերաբերում է քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությանը, ապա այն հատուկ դրույթներ չի նախատեսում ազատազրկված ԼԳԲՏ անձանց համար: Կալանքի տակ պահելու կամ պատժի կրման առանձնահատկություններ սահմանված են միայն հղի, կերակրող ու երեխա ունեցող կանանց, ցմահ դատապարտյալների ու անչափահասների[30] և կալանավորված կանանց ու անչափահասների համար[31]:

Այս առումով, փաստորեն, Հայաստանում անբարենպաստ է նաև ազատազրկված ԼԳԲՏ անձանց վիճակը: Մի կողմից քրեակատարողական ոլորտը կանոնակարգող օրենսդրությամբ նախատեսված չեն նրանց հատուկ պաշտպանությունը երաշխավորող կարգավորումներ և սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունից պաշտպանվելու իրավական մեխանիզմներ: Մյուս կողմից էլ ազատազրկման պայմանները մեծացնում են իրավախախտումների ու չարաշահումների և դրանք վարչակազմի կողմից քողարկելու հավանականությունը, քանի որ սահմանափակված են մարդու ազատությունը և հանրային վերահսկողությունը: Համապատասխան օրենսդրական կարգավորումների բացակայության պատճառով, բնականաբար, քրեակատարողական հիմնարկներում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորումները պատշաճ իրավական որակում չեն ստանում, և դրանց արդյունավետ քննություն չի կատարվում:

---

[27]The Yogyakarta Principles on the Application of International Human Rights Law in Relation to Sexual Orientation and Gender Identity, 2007, http://bit.do/fM3Q3.

[28]Additional Principles and State Obligations on the Application of International Human Rights Law in Relation to Sexual Orientation, Gender Identity, Gender Expression and Sex Characteristics to Complement the Yogyakarta Principles, 2017, Geneva, http://bit.do/fMq92.

[29]Republic of Ireland, Prison Rules, 2007, http://bit.do/fMtgF.

[30]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդվածներ 82, 108, 109, http://bit.do/fLtmH:

[31]«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 27, http://bit.do/fLtmC:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաշվի առնելով ազատազրկման բացասական հետևանքները ԼԳԲՏ անձանց վրա, ինչը պայմանավորված է նրանց խոցելի կարգավիճակով, խրախուսվում է դրական խտրականություն ցուցաբերել և ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող խափանման միջոցներ կամ պատժատեսակներ կիրառել նրանց նկատմամբ: Օրինակ, ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգում "Transgender, Gender Variant and Intersex" Justice Project-ի (TGIJP) կողմից իրականացվող ծրագրերը խրախուսում են այս խմբի իրավախախտների նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների և պատժատեսակների կիրառումը: Ընդունելով, որ տրանսգենդեր և ինտերսեքս անձինք ազատազրկման ընթացքում ենթարկվում են ֆիզիկական, սեռական և հուզական բռնությունների, TGIJP-ն փորձում է կրճատել նշված խմբի անձանց թիվը բանտերում՝ նրանց այնտեղից հնարավորինս շուտ դուրս բերելով: Մասնավորապես, TGIJP-ն միջնորդում է դատավորներին, որպեսզի նրանք այդ անձանց ներգրավեն առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրերի մեջ, այլ ոչ թե ուղարկեն բանտ: Այդ այլընտրանքային ծրագրերը շահառուներին ապահովում են այն ծառայություններով և հնարավորություններով, որոնց բացակայությունը նրանց մղում է հանցագործություն կատարել: TGIJP-ն նաև զբաղվում է բանտում պահվող տրանսգենդեր և ինտերսեքս անձանց շահերի պաշտպանությամբ[32]:

Կարևոր է նաև Իսրայելի Գերագույն դատարանի 2013թ. նախադեպային որոշումը, որտեղ անդրադարձ է կատարվել ազատությունից զրկված տրանսգենդեր անձանց հատուկ խոցելիությանը: Տրանսգենդեր անձը գողություն կատարելու համար 15 ամսվա ազատազրկման էր դատապարտվել: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա մյուս ազատազրկված անձանցից պաշտպանվելու նկատառումներից ելնելով պետք է պահվեր մենախցում, դատարանը կրճատել է ազատազրկման ժամկետը մինչև 10 ամիս՝ պահման խիստ պայմանները մեկնաբանելով որպես պատիժը մեղմացնող հանգամանք[33]:

Արգենտինայում տղամարդկանց բանտում պահվող տրանս կնոջ նկատմամբ տնային կալանք կիրառելու որոշում է կայացվել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նա բանտում հսկիչների կողմից ենթարկվում էր վիրավորանքների, սպառնալիքների և ծեծի: Բացի այդ, նրան բանտում չեն տրամադրել պատշաճ բուժօգնություն և խնամք այն դեպքում, երբ նա ուներ ՄԻԱՎ-դրական կարգավիճակ: Տնային կալանք կիրառելու վերաբերյալ որոշումը կայացնելիս հիմք է ընդունվել անձի հատուկ խոցելիությունը: Բացի այդ, դատավորը քրեակատարողական ծառայություններին կոչ է արել ծրագրեր մշակել և միջոցներ ձեռնարկել՝ խուսափելու համար ազատազրկման ընթացքում անձանց մարգինալացումից՝ զենդերային

[32]"Transgender, Gender Variant and Intersex", Justice Project, http://www.tgijp.org/.
[33]Yona, L., (2015), "Keepin' It "Real": Israel's Segregation of Transgender Prisoners and the Transgender/Cisgender Binary", Buffalo Journal of Gender, Law & Social Policy, Volume 24, Article 4, pages 52-53, http://bit.do/fMGsD. Stuart, W., (2013), "Supreme Court rules leniency for transgender prisoner", Times of Israel, http://bit.do/fMWzP.

ինքնության պատճառով: Դատավճռում ուղղակիորեն հղում է կատարվել Ջոկյակարտյան 9-րդ և 10-րդ սկզբունքներին[34]:

Արգենտինայում տրանս կանայք պատժի կրման ավարտից առաջ չէին կարողանում պատիժ կրել կիսաբաց ռեժիմում այն պատճառաբանությամբ, որ նրանց անվտանգությունը հնարավոր չէ երաշխավորել: Բանտերի դաշնային պաշտպանի առաջարկությունից հետո նախատեսվել է կիսաբաց ռեժիմի բանտի շենքերից մեկը տրամադրել կիսաբաց ռեժիմում պատիժ կրող տրանս անձանց: Այդկերպ նրանք կարողանում են օգտվել կարճաժամկետ մեկնումներից և պատշաճ կերպով նախապատրաստվել ազատ արձակմանը[35]:

Այս առումով պետք է նշել, որ Հայաստանում սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված խոցելիության հիման վրա անձանց նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցներ կամ պատժատեսակներ կիրառելու, նրանց պատժաչափը կրճատելու, պատժատեսակը կամ ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու վերաբերյալ դատական նախադեպեր առկա չեն:

## *1.2. Քաղաքականություն և ռազմավարություններ*

Ազատազրկված ԼԳԲՏ անձինք քրեական արդարադատության համակարգում դիտարկվում են որպես ծայրահեղ խոցելի խումբ, ինչը պետություններից պահանջում է համապատասխան քաղաքականություն և ծրագրեր մշակել նրանց կարիքների ապահովման համար: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրներում գործում են ազատազրկված ԼԳԲՏ անձանց վերաբերյալ քաղաքականություններ: Օրինակ, Շոտլանդիայի Բանտային ծառայությունում գործում է «Գենդերային ինքնության և գենդերի վերափոխության» քաղաքականությունը[36], Մեծ Բրիտանիայում՝ «Ազատազրկված տրանսսեքսուալ անձանց խնամքի և կառավարման» քաղաքականությունը[37], որը 2016թ. վերանայվել և փոխարինվել է նոր փաստաթղթով՝ «Իրավախախտ տրանսգենդեր անձանց խնամք և կառավարում»[38]:

Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում չեն գործում ազատազրկված ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանը կամ կարիքների ապահովմանն ուղղված քաղաքականություններ: Միակ փաստաթուղթը, որը սահմանում է ազատազրկված անձանց իրավունքների իրականացման ընթացակարգը, «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգն» է (այսուհետ՝

---

[34]Association for the Prevention of Torture, "Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide", 2018, Geneva, page 22, http://bit.do/fM94i.

[35]Association for the Prevention of Torture, "Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide", 2018, Geneva, page 22, http://bit.do/fM94i.

[36]Scottish Prison Service, "Gender Identity and Gender Reassignment Policy", 2014, http://bit.do/fMsdU.

[37]Ministry of Justice, National Offender Management Office, UK, "The Care and Management of Transsexual Prisoners", 2011, http://bit.do/fMtgc.

[38]Ministry of Justice, UK, "Review on the Care and Management of Transgender Offenders", 2016, http://bit.do/fMkma.

Ներքին կանոնակարգ), որտեղ խոցելի խմբի անձանցից ներկայացված են միայն հղի կանանց, իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձանց և անչափահասների պահելու պայմանների առանձնահատկությունները[39]: Բացի այդ, Ներքին կանոնակարգով նախատեսված չեն ազատազրկման ընթացքում անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքն ապահովելուն ուղղված ընթացակարգեր:

Հայաստանում ազատազրկված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները ներկայացված չեն նաև մարդու իրավունքների պաշտպանության կամ քրեակատարողական ոլորտին վերաբերող ռազմավարություններում:

Օրինակ, «Մարդու իրավունքների պաշտպանության 2020-2022թթ. ազգային ռազմավարության» մեջ ազատազրկված ԼԳԲՏ անձանց իրավահավասարության ապահովմանն ուղղված որևէ գործողություն նախատեսված չէ, թեև հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը կառավարությունը ներառել է մարդու իրավունքների գերակայությունների մեջ՝ նախատեսելով համապատասխան գործողություններ[40]:

ՀՀ կառավարության 2019թ. նոյեմբերի 28-ի թիվ 1717-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը: Նշված ոլորտների բարեփոխումների շրջանակներում պետությունը կարևորել է նաև ազատությունից զրկված անձանց պահման ու քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավումը և քրեական ենթամշակույթի հաղթահարումը: Սակայն ազատազրկված ԼԳԲՏ անձանց համար պահման հավասար պայմանների ապահովումը կամ նրանց վիճակի բարելավումը չեն դիտարկվել որպես ռազմավարական նպատակ: Խոցելի խմբի ազատազրկված անձանցից ռազմավարության մեջ կարևորվել են միայն անչափահասների պահման պայմանների բարելավումը և հաշմանդամություն ունեցող անձանց պահման մատչելի պայմանների ապահովումը[41]:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրներում մշակվել և գործում են ԼԳԲՏ անձանց վիճակի բարելավմանն ուղղված ռազմավարություններ, որոնք հասցեագրում են նաև անազատության մեջ պահվող ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները: Այս առումով ուշադրության է արժանի Մեծ Բրիտանիայի փորձը, որտեղ վերջին տարիներին զգալի առաջընթաց է գրանցվել ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից: ԼԳԲՏ անձինք

[39]«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, բաժին 9, http://bit.do/fLtkt:

[40]«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշում, հավելված 1, էջեր 38-40, https://bit.ly/3lUVaTH, հավելված 2, գործողություններ 39-48, https://bit.ly/36Jv3Zn:

[41]«ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023թթ. միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. նոյեմբերի 28-ի թիվ 1717-Լ որոշում, http://bit.do/fLtkH:

արդեն օգտվում են ամուսնանալու, ընտանիք կազմելու և գենդերի իրավական ճանաչման իրավունքից: Այնուամենայնիվ, կառավարությանը մտահոգության տեղիք է տվել այն, որ օրենքով երաշխավորված հավասարությունը չի ապահովվում առօրյա կյանքում: Ուստի 2017թ. հուլիսին կառավարության կողմից իրականացվել է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ԼԳԲՏ անձանց փորձառության ազգային ուսումնասիրություն՝ պարզելու համար անհավասար վերաբերմունքի առաջացման պատճառները[42]: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա Մեծ Բրիտանիայի Կանանց և իրավահավասարության նախարարության կողմից մշակվել է ԼԳԲՏ գործողությունների 2018թ. ծրագիրը, որի նպատակն է բարելավել ԼԳԲՏ անձանց կյանքը: Մի շարք կարևոր գործողությունների շարքում Մեծ Բրիտանիայի կառավարությունը նշված ծրագրում կարևորում է նաև ազատագրկված տրանսգենդեր անձանց նկատմամբ հարգանքի ապահովումը, արդար, արժանապատիվ և օրինական վերաբերմունքի երաշխավորումը: Նախատեսվում է բարեփոխել 2004թ. ընդունված «Գենդերի ճանաչման ակտը»՝ նվազեցնելով գենդերի իրավական ճանաչման գործընթացում թղթավարությունը, բարելավել սեռափոխության վիրահատության և համապատասխան բուժհաստատությունների աշխատանքի որակը, անվանափոխության գործընթացը[43]: Ազատազրկված ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրներն ըստ անհրաժեշտության ներառվում են նաև Շոտլանդիայի կառավարության ծրագրերում: Օրինակ, կառավարության 2016թ. գործողությունների ծրագրով նախատեսվել է վերանայել և բարեփոխել «Գենդերի ճանաչման ակտը»՝ այն համապատասխանեցնելով միջազգային լավագույն փորձին[44]:

Հայաստանի կառավարությունը մինչ այժմ նմանատիպ ռազմավարություն կամ գործողությունների ծրագիր մշակելու նախաձեռնությամբ հանդես չի եկել՝ չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի կողմից պատրաստված զեկույցում առաջարկվել է, որպեսզի կառավարությունը համապատասխան մարմնին հանձնարարի մշակել ԼԳԲՏ հարցերի վերաբերյալ գործողությունների ծրագիր, որը պետք է ներառի ԼԳԲՏ անձանց իրավունքների և նրանց կենսապայմանների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացման, ԼԳԲՏ անձանց ընկալման խթանման, հավասար վերաբերմունքի նրանց իրավունքն իրականություն դարձնելու, ԼԳԲՏ անձանց պաշտպանող օրենսդրության սահմանման և առավել հրատապ հարցերի լուծման նպատակներ[45]:

---

[42]Government Equalities Office, UK, “National LGBT Survey”, Research Report, 2018, http://bit.do/fMpAi.
[43]Government Equalities Office, UK, “LGBT Action Plan 2018: Improving lives of Lesbian, Gay, Bisexual and Transgender people”, 2018, http://bit.do/fMoBX.
[44]Scottish Government, “Fairer Scotland Action Plan”, 2016, http://bit.do/fM3YR. Scottish Government, “Review of the Gender Recognition Act 2004”, A Consultation, 2017, http://bit.do/fMupF.
[45]Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի զեկույցը Հայաստանի մասին (մշտադիտարկման 5-րդ փուլ), CRI(2016)37, 2016թ., էջ 45, http://bit.do/fLtkQ:

Այս համատեքստում «Փինք» իրավապաշտպան հկ-ի կողմից մշակված «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրադրության բարելավմանն ուղղված ջատագովության երկարաժամկետ ռազմավարությունը» առաջին փաստաթուղթն է, որը սահմանում է Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում առկա առաջնահերթ խնդիրները և դրանց հաղթահարմանն ուղղված ջատագովության ուղղություններն ու գործողությունները, որոնց նպատակն է նպաստել ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ամբողջական պաշտպանությանը: Փաստաթղթի ռազմավարական ուղղությունների մեջ ներառվել են նաև քրեակատարողական հիմնարկներում ԼԳԲՏ անձանց առնչվող խնդիրները[46]:

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության հարցերով գրասենյակի կողմից մշակված «Հատուկ կարիքներ ունեցող բանտարկյալների վերաբերյալ ձեռնարկում» նշվում է, որ ազատազրկված ԼԳԲՏ անձանց խնամքն ու պաշտպանությունը պետք է ներառվեն բանտի կառավարման ընդհանուր ռազմավարությունների մեջ[47]:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության միջոցառումների 9-րդ կետով նախատեսվում է արդիականացնել Հայաստանի քրեակատարողական ծառայության և հիմնարկների կառավարման և գնահատման մոդելը: Այդ նպատակով ուսումնասիրություն է իրականացվել, որի արդյունքներն ուղարկվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: Մեր հարցմանն ի պատասխան՝ արդարադատության նախարարությունից պարզաբանել են, որ քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների կառավարման մոդելի ընտրության հարցում վերջնական որոշման կայացումը համակարգային կապի մեջ է ռազմավարական այնպիսի կետերի հետ, ինչպիսին են քրեակատարողական հիմնարկների օպտիմալացումը, քրեակատարողական հիմնարկներում կադրերի վերաբաշխումը, կադրային քաղաքականության փոփոխությունը[48]: Այս դեպքում ևս մտահոգիչ է այն, որ նշված մոդելի մշակման նպատակով իրականացված ուսումնասիրության մեջ ազատազրկված ԼԳԲՏ անձանց կարիքների ուսումնասիրությանը և նրանց ներհատուկ խնամքի ու պաշտպանության ապահովմանն անդրադարձ չի կատարվել:

2015թ. վերանայված «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները» (այսուհետ ՝ Նելսոն Մանդելայի կանոններ) բանտի վարչակազմին պարտավորեցնում են հաշվի առնել բանտարկյալների, մասնավորապես առավել խոցելի խմբերի անհատական կարիքները՝ հավելելով, որ հատուկ կարիքներով բանտարկյալների իրավունքները պաշտպանելուն ու

[46]«Փինք» իրավապաշտպան հկ, «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրադրության բարելավմանն ուղղված ջատագովության երկարաժամկետ ռազմավարություն», էջեր 26-29, http://bit.do/fMq7B:
[47]United Nations Office on Drugs and Crime, “Handbook on Prisoners with Special Needs”, New York, 2009, page 114, http://bit.do/fMsep.
[48]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 21-001 գրության պատասխան, http://bit.do/fM3ZS:

իրացնելուն ուղղված միջոցներն անհրաժեշտություն են և չպետք է դիտարկվեն որպես խտրականություն[49]:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությամբ կարևորվել է նաև հատուկ պաշտպանության կարիք ունեցող ազատազրկված անձանց իրավունքների երաշխավորման հարցը: Նախատեսվում է գնահատել ազատությունից զրկված և հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքների երաշխավորմանն ուղղված առկա օրենսդրական կարգավորումները և ըստ անհրաժեշտության մշակել իրավական ակտի նախագիծ: Սակայն խնդրահարույց է այն, որ ռազմավարության մեջ սահմանված չէ հատուկ պաշտպանության կարիք ունեցող ազատազրկված անձանց շրջանակը: Բացի այդ, արդարադատության նախարարության դիրքորոշումն ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ միանշանակ չէ: Օրինակ, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (այսուհետ՝ Դիտորդների խումբ) տարեկան հաշվետվությունների վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունների մեջ նախարարությունը մի կողմից ժխտում է, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ քրեակատարողական հիմնարկների վարչակազմի կողմից կանխակալ և բացասական վերաբերմունք է դրսևորվում՝ նշելով, որ նմանատիպ պնդումները չեն համապատասխանում իրականությանը: Մյուս կողմից ընդունում է, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ այլ ազատազրկված անձանց կողմից խտրական վերաբերմունք է դրսևորվում՝ այն կապելով հասարակության մեջ տարածված կարծրատիպերի հետ, ինչն էլ մի շարք խնդիրներ է առաջացնում[50]: 2019թ. տարեկան հաշվետվության պաշտոնական մեկնաբանության մեջ պարզաբանել է, որ առկա չէ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հաստատված այնպիսի դեպք, որով կհաստատվի ազատությունից զրկված անձանց նկատմամբ խտրական մոտեցման ցուցաբերում[51]: Այս համատեքստում քիչ հավանական ենք համարում այն, որ ԼԳԲՏ անձինք արդարադատության նախարարության կողմից կդիտարկվեն որպես հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձինք և նրանց կարիքներին համահունչ օրենսդրական փոփոխություններ կկատարվեն:

Հայաստանում ազատազրկված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրների ուսումնասիրությանն ուշադրություն չի դարձվում նաև ոլորտին առնչվող հետազոտություններում, որոնք իրականացվում են պետության կողմից:

---

[49]The United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (the Nelson Mandela Rules), Rule 2.1, http://bit.do/fM32d.

[50]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2013թ. գործունեության տարեկան հաշվետվություն», Հայաստան, 2014թ., էջեր 78-79, http://bit.do/fLto8:

[51]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2019թ. գործունեության տարեկան հաշվետվություն», Հայաստան, 2020թ., էջեր 110-111, http://bit.do/fMZ5g:

Նշենք, որ Պաշտպանին վերապահված է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի 1984թ. կոնվենցիայի 2002թ. դեկտեմբերի 18-ին ընդունված Կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակ[52]: Մանդատի իրականացման շրջանակներում Պաշտպանի աշխատակազմի Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության ներկայացուցիչները և Կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետները մշտադիտարկման այցեր են իրականացնում ազատությունից զրկման վայրեր, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներ[53]: Որպես կանխարգելման ազգային մեխանիզմ՝ Պաշտպանը յուրաքանչյուր տարի հրապարակում և ՀՀ ազգային ժողովին է ներկայացնում առանձին զեկույց նախորդ տարվա ընթացքում խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի կանխարգելմանն ուղղված գործունեության վերաբերյալ:

Մեր հարցմանն ի պատասխան՝ Պաշտպանի աշխատակազմի Քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտից պարզաբանել են, որ Պաշտպանի հաղորդումներում և զեկույցներում ներառական կերպով է անդրադարձ կատարվում փակ հաստատություններում գտնվող անձանց իրավունքներին: Կառուցվածքային առումով դրանք բաժանված չեն ըստ առանձին խմբերի, ուստի այնտեղ հնարավոր չէ տեղեկատվություն գտնել ազատազրկված ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտման մասին[54]: Պաշտպանի տարեկան հաղորդումներում վերջին տարիներին անդրադարձ կատարվել է սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դրսևորումների դեպքերին[55]: Սակայն քրեակատարողական հիմնարկներում սեռական կողմնորոշման կամ գենդերային հիմքով խտրականության դեպքերը ներկայացված չեն Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցներում:

Հարկ է նշել, որ Արգենտինայի Բանտերի դաշնային օմբուդսմենը, որը նույնպես ազգային կանխարգելման մեխանիզմի գործառույթ է իրականացնում, Գենդերային և սեռական բազմազանության հարցերով աշխատանքային խումբ է ստեղծել, ինչը հնարավորություն է տալիս տեսանելի դարձնել ազատազրկված ԼԳԲՏ

[52]ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, «Մարդու իրավունքների պաշտպանը «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ է», http://bit.do/fMZ5U:

[53]«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 28, կետ 4.1, http://bit.do/fMpxb:

[54]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 18-33 գրության պատասխան, http://bit.do/fM33o:

[55]ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, «2017թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում», Երևան, 2018թ., http://bit.do/fLtkT: ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2019թ. տարեկան հաղորդում», Երևան, 2020թ., http://bit.do/fLtkU:

անձանց խնդիրները և նրանց կողմից ընկալվել որպես իրենց հիմնարար իրավունքների պաշտպան[56]:

Այս առումով Հայաստանում բացառություն են կազմում Դիտորդների խմբի տարեկան զեկույցները, որտեղ ներկայացվում են հաշվետու ժամանակահատվածում ազատազրկված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները և նրանց վիճակի բարելավմանն ուղղված առաջարկություններ[57]: Ազատազրկված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրներին ժամանակ առ ժամանակ անդրադարձ է կատարվում նաև մամուլի հրապարակումների կամ ոլորտային գործունեություն ծավալող հկ-ների կողմից իրականացվող հետազոտությունների շրջանակներում[58]:

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրներում ազատազրկված ԼԳԲՏ անձանց առնչվող հարցերը խորությամբ ուսումնասիրվում են ինչպես պետության, այնպես էլ հկ-ների կողմից, կազմվում են ուղեցույցներ, այդ թվում՝ մշտադիտարկման, մշակվում են քաղաքականության փաստաթղթեր: Առկա են թեմայի վերաբերյալ մի շարք գիտական հրապարակումներ և հոդվածներ[59]: Ավելին, ազատազրկված ԼԳԲՏ անձանց առնչվող հարցերն ըստ անհրաժեշտության ներառվում են նաև ոլորտի վերաբերյալ պետության կողմից կազմվող հաշվետվություններում: Օրինակ, Մեծ Բրիտանիայի բանտային և պրոբացիոն ծառայության 2018թ. տարեկան հաշվետվության մեջ անդրադարձ է կատարվում ազատազրկված տրանսգենդեր անձանց[60]:

Հայաստանում քրեակատարողական ոլորտի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են արդարադատության նախարարության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվության մեջ[61], ինչպես նաև տեղադրվում են ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պաշտոնական կայքէջում[62]: Սակայն նշված հրապարակումների մեջ ազատազրկված ԼԳԲՏ անձանց առնչվող հարցերին որևէ ձևով անդրադարձ չի կատարվում:

Այս համատեքստում հարկ է նշել, որ ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ենթակոմիտեն (այսուհետ՝ ԽԿԵ) իր 9-րդ տարեկան զեկույցում նշում է, որ պետական մարմինները, այդ թվում՝ կանխարգելման մեխանիզմներն իրենց իրավասության շրջանակներում պետք է հավաքագրեն և հրապարակեն ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի և

---

[56]Association for the Prevention of Torture, “Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide”, 2018, Geneva, page 45, http://bit.do/fM94i.

[57]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կայք, http://bit.do/fM33u:

[58]Հղումները հասանելի են «Օգտագործված գրականության ցանկում», էջեր 144-154:

[59]Հղումները հասանելի են «Օգտագործված գրականության ցանկում», էջեր 154-160:

[60]Ministry of Justice, UK, “Her Majesty’s Prison and Probation Service Offender Equalities Annual Report 2018/19”, 2019, pages 14-15, http://bit.do/fMtkp.

[61]ՀՀ արդարադատության նախարարություն, Արդարադատության նախարարության կողմից 2019թ. ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն, http://bit.do/fMZ7h:

[62]ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պաշտոնական կայք, http://bit.do/fMtkB:

խոշտանգումների տեսակների և թվերի վերաբերյալ վիճակագրությունը, համապատասխան քննությունների արդյունքները, ինչպես նաև մշակեն տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության մեխանիզմներ[63]:

[63] 9th Annual Report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 22 March 2016, CAT/C/57/4, para. 75, http://bit.do/fNj9E.

# ԳԼՈՒԽ 2

# ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԿԱՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

## *2.1. Քրեական ենթամշակույթ*

Քրեակատարողական հիմնարկներում հիերարխիկ հարաբերությունների և քրեական ենթամշակույթի առկայությանն անդրադարձել են մի շարք միջազգային կառույցներ: Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (այսուհետ՝ ԽԿԿ) 2015թ. Հայաստան կատարած այցի ժամանակ արձանագրել է, որ քրեակատարողական հիմնարկներում առկա են ոչ ֆորմալ աստիճանակարգված հարաբերություններ, ղեկավարության և անձնակազմի կողմից որոշ բանտարկյալների (այսպես կոչված՝ «զոն նայողներին») լիազորություններ մասամբ պատվիրակելու և մնացած ազատազրկված անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար նրանց օգտագործելու միտում[64]: Քրեական միջավայրին անդրադարձ է կատարվել նաև ՄԱԿ-ի ԽԿԿ-ի կողմից Հայաստանի վերաբերյալ 2017թ. 4-րդ պարբերական զեկույցի ամփոփիչ եզրահանգումներում: Նշվել է, որ ազատությունից զրկված անձանց միջև բռնության դեպքերի բարձր ցուցանիշը կարող է լինել քրեական ենթամշակույթի և ոչ ֆորմալ աստիճանակարգության արդյունքը[65]:

Ազատազրկված անձանց միջև առկա ոչ կանոնադրական հարաբերությունների հետ կապված հիմնախնդիրներին իր տարեկան հաշվետվություններում մշտապես անդրադառնում է նաև Դիտորդների խումբը: Օրինակ, 2011-2012թթ. հաշվետվության մեջ մանրամասն կերպով ներկայացված է «զոն նայողի» ինստիտուտը, նկարագրվում է, թե ինչպես են «զոն նայողները» ստանձնում իրենց պարտականությունները և ինչ գործառույթներ են իրականացնում, խոսվում է «զոն նայողների» և քրեակատարողական հիմնարկների վարչակազմի միջև սերտ կապերի և համագործակցության մասին և այլն[66]:

---

[64]Report to the Armenian Government on the Visit to Armenia Carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 5 to 15 October 2015, Strasbourg, 22 November 2016, para. 51-54, http://bit.do/fLtpe.

[65]Concluding Observations on the on the 4$^{th}$ Periodic Report of Armenia, Committee against Torture, 26 January 2017, CAT/C/ARM/CO/4, para. 31, http://bit.do/fM4bn.

[66]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգը 2011-2012 թվականներին», Երևան, 2013թ., էջեր 28-29, http://bit.do/fLtqW:

«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ-ի կողմից իրականացված հետազոտությունը ևս փաստում է, որ ըստ ոչ ֆորմալ «օրենքների»՝ ազատազրկված անձինք բաժանվում են մի քանի խմբերի, որոնցում հայտնվելն ինքնըստինքյան ենթադրում է վարքագծի հստակ ակնկալիքներ և այդ անձի նկատմամբ որոշակի վերաբերմունք: Բարձր խավի ներկայացուցիչներն արտոնյալ կարգավիճակ են ունենում, իսկ ամենաստորին խավի ներկայացուցիչներն արժանանում են անմարդկային վերաբերմունքի, ստորացվում և ենթարկվում են բռնության, այդ թվում՝ սեռական[67]:

Որոշ աղբյուրների համաձայն՝ այդ հիերարխիկ աստիճանակարգումն ունի հետևյալ կառուցվածքը.

1.Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցողներ, որոնց մեջ մտնում են «օրենքով գողերը», «քրեական հեղինակությունները», այդ թվում՝ «զոն նայողները», և «2-րդ ցուցակը» (անձ, որը վարում է «օբշակի» վերաբերյալ 2-րդ ցուցակը):

2.Քրեական աստիճանակարգության պայմանականորեն միջին կարգավիճակ ունեցողներ, որոնց մեջ մտնում են «կամեր նայողները» և «բարաք նայողները» («անկյունային քնողներ», «ուզլավիկ» կամ «պերվի պրախոդ»):

3.Քրեական աստիճանակարգության պայմանականորեն ստորին կարգավիճակ ունեցողներ, որոնց մեջ մտնում են «ճուտը» և «գլազը»:

«Աբսլուզը» և «արվամոլները» քրեական աստիճանակարգությունից դուրս են, սակայն նրանք ներգրավված են քրեական ենթամշակույթ կրող խմբի նպատակների իրականացմանը[68]:

«Արվամոլների» խմբում հայտնվում են գեյ, բիսեքսուալ և տրանս (այսուհետ՝ ԳԲՏ) և որևէ պատճառով նրանց հավասարեցված անձինք: Այսինքն՝ քրեակատարողական հիմնարկներում անձինք կարող են պիտակավորվել որպես նույնասեռական՝ անկախ նրանից՝ իրենք իրենց նույնականացնում են որպես այդպիսին, թե՝ ոչ: Քրեական ենթամշակույթում «նույնասեռականությունը» կարգավիճակ է, որը կարող է որևէ առնչություն չունենալ անձի սեռական կողմնորոշման հետ, իսկ նույնասեռական տերմինը խարան կամ պիտակ է, որով նվաստացնում և պատժում են այն անձանց, ովքեր կատարել են քրեական ենթամշակույթի օրենքներով արգելվող կամ անընդունելի որևէ արարք[69]: Հետևաբար

[67]«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ, «Քրեական ենթամշակույթը բանտերում հանգեցնում է բռնության, խտրականության և վատ վերաբերմունքի դրսևորումների», http://bit.do/fMuq8:

[68]ՀՀ արդարադատության ակադեմիա, Բիշարյան, Ա., «Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը: Գիտագործնական մեկնաբանություններ», Երևան, 2020թ., էջեր 23-26, http://bit.do/fM43Q:

[69]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգը 2011-2012 թվականներին», Երևան, 2013թ., էջ 30, http://bit.do/fLtq3: ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2013թ. գործունեության տարեկան հաշվետվություն», Հայաստան, 2014թ., էջ 13, http://bit.do/fLtqY:

անձինք այդ խմբում կարող են հայտնվել, օրինակ, ԳԲՏ անձանց իրերից և սպասքից օգտվելու, նրանց ձեռքով բարևելու, նրանց հետ հաց կիսելու կամ մոտ հեռավորությունից շփվելու պատճառով: Բանտային չգրված օրենքների համաձայն՝ եթե հետերոսեքսուալ անձը շփվում է նույնասեռական անձի հետ, ապա «կոտրվում» է և զրկվում է «նորմալ մարդ» կարգավիճակից[70]:

Ըստ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ-ի իրականացրած հետազոտության՝ նույնասեռականները հիերարխիայում զբաղեցնում են ամենացածր դիրքը՝ անկախ այլ որակներից, իսկ նույնասեռականներին հավասարվում կամ գրեթե հավասարվում են «պռազոնը» կոպտորեն խախտած դատապարտյալները՝ «թռածները»[71]: Քրեակատարողական հիմնարկներում «թռածներ» են անվանում այն անձանց, ովքեր հրաժարվում են ենթարկվել հանցագործ աշխարհի կողմից ընդունված կանոններին կամ խախտել են դրանք: Նույնասեռականի կարգավիճակում կարող են հայտնվել նաև այն անձինք, ովքեր մեղադրվում են սեռական բնույթի հանցագործություն կատարելու մեջ կամ ազատազրկման են դատապարտվել այդ արարքի համար[72]: Քրեակատարողական հիմնարկներում տարածված են սեռական բռնության և բռնաբարության դեպքերը: Այդ գործողություններից տուժած անձինք նույնպես պիտակավորվում են որպես նույնասեռական և դիմում են ներկայացնում՝ իրենց «արվամոլների» խուց տեղափոխելու համար[73]: Ուշագրավ է, որ քրեական ենթամշակույթի չգրված օրենքների համաձայն՝ ԳԲՏ անձի հետ սեռական հարաբերություն ունեցող հետերոսեքսուալ տղամարդը, ով սեռական հարաբերության ժամանակ հանդես է եկել տղամարդու, այսինքն՝ ակտիվ դերում, չի ընկալվում որպես նույնասեռական[74]: Ընդ որում, անկախ նույնասեռականի կարգավիճակում հայտնվելու պատճառներից՝ այդ խավից այլ խավ տեղափոխվելու որևէ հեռանկար չկա, և ազատազրկման ողջ ընթացքում այդ խավին դասվող անձինք ենթարկվում են արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի[75]:

Հիմնարկների աշխատակիցները և մնացած ազատազրկված անձինք նշված խմբի անձանց անվանում են «արվամոլներ», «համասեռամոլներ»,

---

[70] ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2016թ. գործունեության տարեկան հաշվետվություն», Հայաստան, 2017թ., էջեր 110-113, http://bit.do/fLtq6:

[71] «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ, «Ոչ ֆորմալ հարաբերությունները Հայաստանի ազատազրկման վայրերում «Նուբարաշեն» ՔԿՀ-ի օրինակով», 2017թ., էջ 8, http://bit.do/fLtrb:

[72] «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ, «Քրեական ենթամշակույթը բանտերում հանգեցնում է բռնության, խտրականության և վատ վերաբերմունքի դրսևորումների», http://bit.do/fMuq8:

[73] «Հասարակություն առանց բռնության» հկ, «Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների գործնական գնահատում», Հայաստան, 2016թ., էջ 41, http://bit.do/fLtgi:

[74] ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2014-2015թթ. գործունեության տարեկան հաշվետվություն», Հայաստան, 2016թ., ծանոթագրություն թիվ 32, էջ 53, http://bit.do/fM4c5:

[75] «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ, «Քրեական ենթամշակույթը բանտերում հանգեցնում է բռնության, խտրականության և վատ վերաբերմունքի դրսևորումների», http://bit.do/fMuq8:

«միասեռականներ», «շեղվածներ», «այլազգիներ», «այլմոլորակայիններ», «գոմիկներ», «հարսներ» և այլն: Նրանք «գողական» կարգավիճակ չունեն, քրեակատարողական հիմնարկներում առանձնացված են պահվում, չեն ընդգրկվում կրթական կամ վերասոցիալականացման ծրագրերում, կատարում են ամենակեղտոտ և այլ ազատազրկված անձանց ոչ հարիր աշխատանքները և այլն: Քրեակատարողական հիմնարկների, այդ թվում՝ կոյուղու մաքրությունը և աղբահանությունը կատարելու պատճառով նրանց անվանում են նաև «բրիգադներ»[76]: Ուշագրավ է, որ այս խմբի անձանց շրջանում ևս գործում են միջանձնային հիերարխիկ հարաբերություններ: Նրանց շրջանակից ընտրվում են «նայողներ» («բրիգադիրներ»), ովքեր կազմակերպում, վերահսկում և ուղղորդում են տվյալ քրեակատարողական հիմնարկում գտնվող կամ անազատության մեջ պահվող մյուս նույնասեռական անձանց[77]:

Հիմնախնդրի վերաբերյալ արդարադատության նախարարությունը պարզաբանել է, որ բոլոր այն դեպքերում, երբ ի հայտ են գալիս քրեակատարողական հիմնարկների Ներքին կանոնակարգի պահանջները դիտավորությամբ խախտողներ, ազատազրկված անձանց շրջանում հիերարխիկ դիրքեր ստեղծելու փորձ կատարողներ, քրեակատարողական ծառայության կողմից վերջիններիս նկատմամբ կիրառվում են օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ[78]: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնախնդիրը դեռևս առկա է, կարող ենք եզրակացնել, որ նախարարության կամ քրեակատարողական ծառայության կողմից ձեռնարկված քայլերն արդյունավետ չեն:

2018թ. Պաշտպանի աշխատակազմը մշակել է «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգը» (այսուհետ՝ Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգ), որի նպատակն է վեր հանել քրեական ենթամշակույթի գոյության բարենպաստ պայմանները բացառելու, ենթամշակույթի ազդեցության նվազեցման ու դրա տարածման կանխարգելման հնարավոր ուղիները և ներկայացնել խնդրի լուծմանն ուղղված համալիր առաջարկություններ[79]: Սակայն հայեցակարգում քրեական ենթամշակույթին առնչվող գործնական խնդիրների ու օրենսդրական բացերի և դրանց լուծման ուղղությամբ ներկայացված առաջարկությունների շրջանակներում անդրադարձ չի կատարվում ազատազրկված ԳԲՏ անձանց նկատմամբ քրեական ենթամշակույթի

---

[76]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2013թ. գործունեության տարեկան հաշվետվություն», Հայաստան, 2014թ., էջ 13, http://bit.do/fMuAB:

[77]ՀՀ արդարադատության ակադեմիա, Բիշարյան, Ա., «Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը: Գիտագործնական մեկնաբանություններ», Երևան, 2020թ., էջ 29, http://bit.do/fM43Q:

[78]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2014-2015թթ. գործունեության տարեկան հաշվետվություն», Հայաստան, 2016թ., էջ 111, http://bit.do/fLtrf:

[79]ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգ», Երևան, 2018թ., https://bit.ly/3pwU8PY:

հետևանքով դրսևորվող խտրականության դեպքերի կանխարգելմանը և նրանց վիճակի բարելավմանը:

Որպես ռազմավարական ուղղություն՝ քրեական ենթամշակույթի վերացման համար անհրաժեշտ օրենսդրական հիմքերի ստեղծումն ամրագրված է «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարության» մեջ, որով կառավարությունը նպատակադրվել է քրեական միջավայրի, դրա կողմից սահմանված ու ճանաչված հատուկ վարքագծի կանոնների տարածման դեմ համակողմանի մոտեցում դրսևորել՝ քայլեր ձեռնարկելով ինչպես գործնական, այնպես էլ օրենսդրական մակարդակներում[80]:

Քրեական ենթամշակույթի հաղթահարումը նաև քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության առանցքային նպատակներից է: Պայքարը քրեաիրավական հարթությունում իրականացնելուն զուգահեռ ռազմավարությամբ նախատեսվում է 2020-2023թթ. ընթացքում մշակել և հասարակության շրջանում անցկացնել քրեական ենթամշակույթի նկատմամբ զրո հանդուրժողականության ապահովմանն ուղղված հանրային իրազեկման ծրագրեր[81]:

Հռչակված սկզբունքներին համահունչ՝ 2020թ. հունվարի 22-ին ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագիծը[82], որով քրեական պատասխանատվություն է սահմանվել քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու, ստանալու կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու համար:

«Քրեական ենթամշակույթ կրող խմբավորում» հասկացության սահմանումը տրված է ՀՀ քրեական օրենսգրքի 223.2 հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ այդ խմբավորման հատկանիշներց մեկն այլ անձանց հանցավոր արարքի կատարմանը ներգրավելն է[83]: «Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը» ձեռնարկի հեղինակները, անդրադառնալով «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում» հասկացության և դրա հատկանիշների մեկնաբանությանը, նշում են, որ «արվամոլները» քրեական աստիճանակարգությունից դուրս են և մերժված են քրեական ենթամշակույթ կրողների կողմից, սակայն վերջիններիս միջնորդավորված

---

[80]«ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1441-Լ որոշում, հավելված 1, https://bit.ly/2GZqTDJ:

[81]«ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023թթ. միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. նոյեմբերի 28-ի 1717-Լ որոշում, հավելված 2, գործողություն 58, https://bit.ly/2JXzjfZ:

[82]«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, http://bit.do/fMuFi:

[83]ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 223.2, կետ 3, http://bit.do/fM9KC:

հանձնարարությամբ նրանք ներգրավվում են այնպիսի հակաօրինական գործողություններում, ինչպիսիք են թմրամիջոցների, հեռախոսների, արգելված այլ իրերի ներկրումը բնակելի գոտիներ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք կատարում են հիմնարկների տնտեսական աշխատանքները և համեմատաբար ազատ տեղաշարժի իրավունք են ունենում[84]:

ՀՀ քրեական օրենսգրքի 223.3 հոդվածի 1-ին մասով ի թիվս այլնի պատասխանատվություն է նախատեսվում նաև քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը ներգրավված լինելու համար[85]: Անդրադառնալով նշված հոդվածի մեկնաբանությանը՝ «Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը» ձեռնարկի հեղինակները նշում են, որ այդ խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը ներգրավված լինելն արտահայտվում է նման խմբավորման մասնակից չհանդիսացող, խմբավորմանը չանդամակցող անձի կողմից գողական աշխարհի կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը որևէ դերակատարությամբ մասնակցելով: Որպես այդպիսիք հանդես են գալիս քրեական աստիճանակարգությունից դուրս գտնվող, վախից կամ անելանելիությունից քրեական ենթամշակույթին հարող այն անձինք, որոնք քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացմանն ունենում են օժանդակ ներգրավվածություն: Այդ խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը ներգրավված անձինք են քրեակատարողական հիմնարկներում գործող քրեական ենթամշակույթին հարող «աբշչակը» և «արվամոլները»: Ընդ որում, օժանդակ դերակատարությամբ պայմանավորված՝ նշված անձանց կողմից պետք է կատարվեն կոնկրետ գործողություններ, որպեսզի արարքը որակվի որպես քրեական ենթամշակույթ կրող խմբավորման նպատակների իրականացմանը ներգրավված լինել: Օրինակ՝ թմրամիջոցների, հեռախոսների, արգելված այլ իրերի ներկրումը քրեակատարողական հիմնարկների բնակելի գոտիներ պետք է կատարվի «զոն նայողի» միջնորդավորված հանձնարարությամբ[86]:

Սակայն խնդիրն այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները որևէ ձևով չեն նպաստում ազատազրկված ԳԲՏ անձանց վիճակի բարելավմանը, այլ հանգեցնում են նրանց նկատմամբ խտրական վերաբերմունքի ամրապնդմանը և վիճակի վատթարացմանը:

Նախ, քրեական ենթամշակույթի չգրված օրենքներն արգելում են հիմնարկների պայմանների, վարչակազմի կամ խցակիցների դեմ բողոքելը: Նմանատիպ բողոքները բացասաբար են ընկալվում թե քրեական հեղինակությունների, թե վարչակազմի կողմից, իսկ բողոք ներկայացնող անձինք

[84] ՀՀ արդարադատության ակադեմիա, Բիշարյան, Ա., «Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը: Գիտագործնական մեկնաբանություններ», Երևան, 2020թ., էջ 29, http://bit.do/fM43Q:
[85] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 223.3, կետ 1, http://bit.do/fM9KC:
[86] ՀՀ արդարադատության ակադեմիա, Բիշարյան, Ա., «Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը: Գիտագործնական մեկնաբանություններ», Երևան, 2020թ., էջեր 36-37, http://bit.do/fM43Q:

կարող են հայտնվել «թռածների» խցում: Բացի այդ, ԳԲՏ անձինք խուսափում են բարձրաձայնել իրենց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի մասին, քանի որ հիմնարկների վարչակազմի և այլ ազատազրկված անձանց կողմից ճնշումների ենթարկվելու մտավախություն ունեն[87]: Նշենք, որ ՄԱԿ-ի ԽԿԿ-ն, Հայաստանի վերաբերյալ 2017թ. 4-րդ պարբերական զեկույցի ամփոփիչ եզրահանգումներում մտահոգություն հայտնելով առ այն, որ ազատությունից զրկված անձանց միջև բռնության դեպքերի բարձր ցուցանիշը կարող է լինել քրեական ենթամշակույթի և ոչ ֆորմալ աստիճանակարգության արդյունք, արձանագրել է, որ բացակայում է նշված դեպքերի վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը: Այս համատեքստում առաջարկվել է աշխատակիցների համար վերապատրաստումներ անցկացնել՝ երաշխավորելու համար ազատազրկված անձանց և վարչակազմի միջև ադեկվատ փոխհարաբերությունները, բարելավել հիմնարկների ղեկավարության հեղինակությունը և քայլեր ձեռնարկել քրեական ենթամշակույթի և ոչ ֆորմալ աստիճանակարգության ազդեցությունը նվազեցնելու համար[88]:

Ինչ վերաբերում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակներն իրականացնելուն, ապա ԳԲՏ անձինք այդ դերում են հայտնվում ոչ թե իրենց որոշումով կամ ցանկությամբ, այլ մեխանիկորեն: Քանի որ ԳԲՏ անձինք չունեն որոշում կայացնելու հնարավորություն, նրանք համաձայնում են կատարել իրենց հանձնարարված աշխատանքները կամ գործառույթները: Սակայն ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունների շրջանակներում անձին քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացման մեջ ներգրավելը վերջինիս սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով չի նախատեսվել որպես քրեական պատժի հիմք կամ ծանրացուցիչ հանգամանք: Ավելին, «Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը» ձեռնարկում տեղ գտած մեկնաբանություններից բխում է, որ ԳԲՏ անձինք կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել, քանի որ որևէ դերակատարությամբ մասնակցում են գողական աշխարհի կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը:

Փաստորեն, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով կրկնակի խոցելի և անելանելի վիճակում հայտնված ազատազրկված անձանց համար պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ նախատեսելու փոխարեն քրեական պատասխանատվություն է սահմանվել: Բացի այդ, վերոնշյալ ձեռնարկում «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում» հասկացության և դրա հատկանիշների մասին տրված մեկնաբանությունից թյուր կարծիք է ձևավորվում առ այն, որ եթե

[87] ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգը 2011-2012 թվականներին», Երևան, 2013թ., էջեր 28-29, http://bit.do/fLtrc:

[88] Concluding Observations on the on the 4th Periodic Report of Armenia, Committee against Torture, 26 January 2017, CAT/C/ARM/CO/4, para. 31-32, http://bit.do/fM4bn.

ազատազրկված անձը ԳԲՏ է, ապա ենթադրաբար ներգրավված է հակաօրինական գործողություններ կատարելու մեջ:

Այսպիսով, քրեակատարողական հիմնարկներում անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորման դեպքերը չեն դիտարկվում որպես քրեական ենթամշակույթի հետևանք: Դրա հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակներում ԳԲՏ անձանց հատուկ խոցելիությանն ուշադրություն չի դարձվում: Հետևաբար այդ նախաձեռնությունները բարելավելու փոխարեն ավելի են վատթարացնում ազատազրկված ԳԲՏ անձանց վիճակը:

## *2.2. Սեռական բռնություն և շահագործում*

Ազատազրկված ԼԳԲՏ անձինք քրեակատարողական հիմնարկներում հոգեբանական ճնշումներից բացի ենթարկվում են նաև սեռական բռնության և շահագործման, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով՝ համակարգային բնույթ կրող խարանի և խտրական վերաբերմունքի առկայություն, սեռի, գենդերի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության և գենդերային արտահայտման նկատմամբ կանխակալ վերաբերմունք, հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի առկայություն և այլն: Սեռական բռնությունը բռնաբարությունից կամ բռնաբարության սպառնալիքից բացի կարող է ներառել նաև մարմնի որոշ մասերի հպում, սեռական ծառայություններ մատուցելու կամ այլ անձանց առջև մերկանալու պարտադրանք, աշխատակիցների կողմից ոչ պատշաճ վարքագծի դրսևորում անձնական խուզարկությունների ժամանակ, մարմնի որոշ մասերի նկատմամբ ոչ ցանկալի ուշադրություն հատկապես լոգանքի ժամանակ, սեռական բնույթի վիրավորանքներ և այլն[89]: Ընդ որում, այդ վերաբերմունքը դրսևորվում է ինչպես ազատազրկված անձանց, այնպես էլ աշխատակիցների կողմից:

Միացյալ Նահանգներում իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ բանտերում սեռական բռնությունների գրեթե կեսը կատարվում է ոչ թե բանտակիցների, այլ աշխատակիցների կողմից և մեծապես պայմանավորված է նրանց՝ ազատազրկված անձանց նկատմամբ ունեցած վերաբերմունքով[90]: Այս տեսանկյունից նախադեպային է ԱՄՆ Գերագույն դատարանի «Ֆարմերն ընդդեմ Բրենանի» գործը, որով դատարանը որոշել է, որ ԱՄՆ Սահմանադրության 8-րդ փոփոխության ներքո բանտի աշխատակիցները չեն կարող անգործություն դրսևորել ազատազրկված տրանսգենդեր անձանց սեռական շահագործման նկատմամբ: Դատարանը որոշել է, որ 8-րդ փոփոխությունը, որը սահմանում է ազատազրկված անձանց ապահով ազատազրկումը և ազատազրկված անձանց բռնություններից

[89]Association for the Prevention of Torture, "Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide", 2018, Geneva, pages 57-58, http://bit.do/fM94i.

[90]Kaiser D. and Stannow L, Prison rape: Obama's program to stop it, 2012, http://bit.do/fNuuo.

պաշտպանելու՝ բանտի պարտավորությունը, կիրառելի է նաև ազատազրկված տրանսգենդեր անձանց պաշտպանության ապահովման համատեքստում[91]:

ԽԿԵ-ն իր 9-րդ տարեկան զեկույցում նշում է, որ հետերոսեքսուալ բանտարկյալների հետ համեմատած ոչ հետերոսեքսուալ բանտարկյալների՝ խցակիցների և բանտի աշխատակիցների կողմից սեռական բռնության ենթարկվելու հավանականությունը համապատասխանաբար 10 և 3 անգամ անգամ ավելի բարձր է[92]: ԱՄՆ վիճակագրական բյուրոյի տվյալներով՝ նույնասեռական և բիսեքսուալ անձինք ավելի շատ են սեռական բռնության ենթարկվում, քան՝ հետերոսեքսուալ: Հետազոտության տվյալներով՝ ազատազրկված այլ անձանց կողմից սեռական բռնության է ենթարկվել բիսեքսուալ անձանց 33 և նույնասեռական կանանց ու տղամարդկանց 39%-ն այն դեպքում, երբ հետերոսեքսուալ անձանց 1.2%-ը հաղորդել է այլ ազատազրկված անձանց, իսկ 2.1%-ը՝ աշխատակիցների կողմից բռնության ենթարկվելու մասին[93]:

Սեռական բռնության ենթարկվելու ռիսկը բարձր է նաև նույնասեռական կանանց շրջանում հատկապես այն դեպքում, երբ նրանց վերահսկողությունն իրականացվում է տղամարդ աշխատակիցների կողմից: Արտաքինով «առնական» երևացող կանայք հսկիչների կողմից կարող են ենթարկվել հետապնդումների, ֆիզիկական բռնության և «հարկադիր կանացիացման»: Լինում են դեպքեր, երբ նրանք աշխատակիցների հետ ստիպված են սեռական հարաբերություն ունենում որոշ արտոնություններ, օրինակ՝ ծխախոտ կամ ալկոհոլ ստանալու համար: Նույնասեռական կանանց դեպքում որպես սեռական բռնության տեսակ է դիտարկվում նաև, այսպես ասած, «ուղղիչ բռնաբարությունը»[94]:

Ազատազրկված տրանս անձինք ևս խոցելի են սեռական բռնությունների նկատմամբ, որոնք կարող են դրսևորվել ինչպես աշխատակիցների, այնպես էլ այլ ազատազրկված անձանց կողմից: ԽԿԵ-ն իր 9-րդ տարեկան զեկույցում արձանագրում է, որ տրանսգենդեր անձանց՝ խցակիցների կողմից սեռական բռնության ենթարկվելու հավանականությունը 13 անգամ ավելի բարձր է, քան ցիսգենդեր անձանց[95]: Կալիֆոռնիայի բանտերում 2007թ. իրականացված հետազոտության արդյունքները ևս ցույց են տալիս, որ տրանսգենդեր անձինք առավել հաճախ են դառնում սեռական բռնության զոհ[96]: Տրանս անձանց սեռական

---

[91]Ruth G. Allen, Recent Developments: Farmer v. Brennan: Prison Officials May Be Held Liable under the Eighth Amendment For "Deliberate Indifference" to an Inmate 's Health and Safety in Prison Condition Claims, University of Baltimore Law Forum, Volume 25, Number 1 Summer, 1994, Article 7, http://bit.do/fNuuZ.

[92]9th Annual Report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 22 March 2016, CAT/C/57/4, para. 62, http://bit.do/fNnBy.

[93]United States Department of Justice, Bureau of Justice Statistics, "Sexual victimization in prisons and jails reported by inmates, 2011-12: National Inmate Survey, 2011-12", pages 18, 30, http://bit.do/fNnCA.

[94]Association for the Prevention of Torture, "Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide", 2018, Geneva, page 58, http://bit.do/fM94i.

[95]9th Annual Report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 22 March 2016, CAT/C/57/4, para. 62, http://bit.do/fNnBy.

[96]Okamura, A., Equality behind Bars: Improving the Legal Protections of Transgender Inmates in the California Prison Systems, 8 Hastings Race & Poverty L.J. 109 (2011). page 110, http://bit.do/fMTyL.

բռնության ենթարկվելու հավանականությունը բարձր է հատկապես լոգանք ընդունելիս, քանի որ սեռական օրգանների տարբերությունը կարող է անցանկալի ուշադրություն հրավիրել: Տրանս կանանց կրծքավանդակին և այտոսկրերին կարող են միտումնավոր հարվածել՝ իմպլանտները վնասելու և տոքսինները դուրս բերելու նպատակով կամ նրանց կարող են ստիպել սեռական հարաբերություն ունենալ այլ ազատազրկված անձանց աչքի առջև: Տրանս անձինք խոցելի են նաև այն դեպքում, երբ, օրինակ, անձնական փաստաթղթերում նշված անունը և սեռը չեն համապատասխանում իրենց գենդերային ինքնությանը կամ արտահայտմանը[97]:

Սակայն խնդիրն այն է, որ բանտերի աշխատակիցները մեծամասամբ չեն արձագանքում այն դեպքերին, երբ ԼԳԲՏ անձինք են սեռական բռնության ենթարկվելու վերաբերյալ բողոքներ ներկայացնում՝ հիմնավորելով, որ դա նրանց համաձայնությամբ է տեղի ունեցել: Մյուս կողմից էլ ԼԳԲՏ անձինք չեն բարձրաձայնում սեռական բռնության ենթարկվելու մասին, քանի որ վրեժխնդիր լինելու մտավախություն ունեն կամ վստահություն չունեն բողոք ներկայացնելու մեխանիզմների և իրավապահ համակարգի գործունեության նկատմամբ:

Ինչ վերաբերում է միջազգային իրավական չափանիշներին, ապա խոշտանգումները և այլ դաժան վերաբերմունքը բացարձակապես արգելված են և ոչ մի դեպքում չեն կարող արդարացվել ներառյալ այն դեպքում, երբ դրսևորվում են ազատազրկված անձանց նկատմամբ նրանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով: «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը սահմանում են, որ ոչ-ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի[98]: Պահանջվում է, որպեսզի պետությունները ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խոշտանգումները կանխարգելելու, տուժածների պաշտպանությունն ապահովելու, ինչպես նաև նման գործողություններ հրահրելը բացառելու ուղղությամբ: Այս համատեքստում կարևորվում է, որպեսզի ԼԳԲՏ անձինք ներգրավվեն կանխարգելման միջոցների մշակման, կիրառման և գնահատման աշխատանքներում[99]: Նշվում է բանտի անձնակազմի համար ուսուցողական և իրազեկվածությունը բարձրացնող ծրագրերի իրականացման անհրաժեշտության մասին:

Խրախուսվում է, որպեսզի մշակվեն և ներդրվեն բանտերում տեղի ունեցող սեռական բռնությունների կամ սեռական բնույթի հանցագործությունների կանխարգելմանն ուղղված հատուկ ծրագրեր, որոնք հստակ ցուցումներ կներառեն

---

[97]Report of the Independent Expert on protection against violence and discrimination based on sexual orientation and gender identity, 11 May 2018, A/HRC/38/43, para 43, http://bit.do/fNnEh.

[98]«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», հոդված 5, http://bit.do/fNvWj: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, հոդված 7, http://bit.do/fNvWr:

[99]9th Annual Report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 22 March 2016, CAT/C/57/4, para. 71, http://bit.do/fNnBy.

ԼԳԲՏ անձանց պաշտպանելու վերաբերյալ, նաև կներառեն քրեակատարողական հիմնարկներ նոր մուտք գործած ազատազրկված անձանց համար բռնություններից պաշտպանվելու հմտությունների ուսուցում, ազատությունից զրկված անձանց դասակարգում ըստ կատեգորիաների, մի խցում ապրող ազատազրկված անձանց մանրակրկիտ ընտրություն, բողոքների ներկայացման գաղտնիությունն ապահովող համակարգի ներդնում և այլն: Անհրաժեշտ է նաև մշակել և ներդնել ԼԳԲՏ անձանց սեռական բռնության կամ շահագործման ենթարկելու ռիսկերը նվազեցնելուն ուղղված ռազմավարություններ, նման գործողություններ կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ: Տրանսգենդեր անձանց առումով կարևորվում է նրանց անվտանգության և անձնական տարածությամբ ապահովվելու խնդիրը, օրինակ՝ խրախուսվում է լոգանքն առանձին կազմակերպել, եթե նրանք այդպես են ուզում[100]:

Ինչ վերաբերում է առանձին երկրների փորձին, ապա Իռլանդիայի Բանտային կանոններն արգելում են ազատազրկված անձանց ներգրավումն այսպես կոչված «անպարկեշտ խոսակցության, գործողության կամ ժեստերի» մեջ, ինչի համար նրանք կարող են նույնիսկ պատժվել[101]: Ամերիկյան փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ազատազրկված անձանց միջև համաձայնեցված սեռական հարաբերությունները տարբերվում են սեռական բռնությունից: ԱՄՆ-ում 2003թ. ընդունվել է “Prison Rape Elimination Act”-ը, որի նպատակն է նպաստել երկրի բոլոր տեսակի ուղղիչ հիմնարկներում բանտարկյալների միջև բռնաբարությունների վերացմանը[102]: Ակտի ընդունումից հետո ԱՄՆ արդարադատության դեպարտամենտը 2012թ. մշակել է PREA ստանդարտները[103], որոնք ներառում են ԼԳԲՏ անձանց հատուկ պաշտպանության միջոցներ: Այս համատեքստում կարող ենք առանձնացնել նաև “Sexual Abuse in Detention Elimination Act”-ը, որն ընդունվել է 2005թ. Կալիֆոռնիայում:

Հայաստանում ազատազրկված անձանց սեռական բռնության կամ շահագործման վերաբերյալ առանձին հետազոտություններ չեն իրականացվել: Առկա չէ վիճակագրություն այն մասին, թե ԼԳԲՏ անձինք ում կողմից են առավել հաճախ սեռական բռնության ենթարկվում՝ ազատազրկված անձանց, թե՝ աշխատակիցների: Առկա չէ վիճակագրություն նաև այն մասին, թե սեռական բռնության դեպքերը կանանց, թե տղամարդկանց քրեակատարողական հիմնարկներում են առավել հաճախ տեղի ունենում: Այս առումով բացառություն են կազմում Դիտորդների խմբի տարեկան զեկույցները և մամուլի որոշ հրապարակումներ[104], որոնք փաստում են, որ

---

[100]Irish Penal Reform Trust, “Out on the Inside: The Rights, Experiences and Needs of LGBT People in Prison”, 2016, page 19, http://bit.do/fNnDm.

[101]Republic Of Ireland, Prison Rules, 2007, Schedule 1, 30, http://bit.do/fNnEZ.

[102]Prison Rape Elimination Act of 2003, http://bit.do/fNnFq.

[103]National Standards to Prevent, Detect, and Respond to Prison Rape under the Prison Rape Elimination Act (PREA), http://bit.do/fNnFu.

[104]Մեղիալաբ, Ղարիբյան Ա., «Սեռական շահագործում և «կեղտոտ աշխատանք». նույնասեռական դատապարտյալները «դժոխքում» են ապրում», 2015թ., http://bit.do/fNnFB: «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ, «Քրեական ենթամշակույթը բանտերում հանգեցնում է բռնության, խտրականության և վատ վերաբերմունքի դրսևորումների», http://bit.do/fNnFK:

Հայաստանի բանտերում ԳԲՏ անձինք ենթարկվում են բռնության, այդ թվում՝ սեռական:

Պաշտոնական մեկնաբանություններում արդարադատության նախարարության կողմից արտահայտված դիրքորոշումն այն մասին, որ ԳԲՏ անձանց առանձնացված պահելը պայմանավորված է նրանց անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությամբ, թույլ է տալիս եզրակացնելու, որ նախարարությունը տեղյակ է հիմնախնդրի մասին: Մինչդեռ մտահոգիչ է այն, որ կանխարգելման ուղղությամբ պատշաճ գործողություններ չեն ձեռնարկվում: Մեր հարցմանն ի պատասխան՝ քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ երբ առկա է բռնության փաստ կամ նույնիսկ այդպիսի ռիսկ, ապա անձը մեկուսացվում և իրավական անհրաժեշտ փաստերի առկայության դեպքում քրեական պատասխանատվության կամ վարչական տույժի է ենթարկվում բռնություն կատարողը[105]: Նշվածից բխում է, որ Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում գործում է զոհին մեկուսացնելու պրակտիկան, այնինչ միջազգային լավագույն փորձը պահանջում է մեկուսացնել բռնարարին:

Անդրադառնալով ներպետական իրավական կարգավորումներին՝ նշենք, որ ոլորտը կանոնակարգող օրենսդրության մեջ սահմանված չէ ազատազրկված անձանց նկատմամբ հիմնարկների աշխատակիցների կամ այլ ազատազրկված անձանց կողմից սեռական բռնության անթույլատրելիությունը, նախատեսված չեն սեռական բռնություն կամ սեռական բնույթի հանցագործություն կատարող ազատազրկված անձանց կամ աշխատակիցներին պատժի և պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ: Նախատեսված չէ հիմնարկների աշխատակիցների նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու պահանջ այն դեպքում, երբ նրանց կողմից ԼԳԲՏ անձանց հանդեպ սեռական բռնության կամ ոտնձգության դեպքեր են լինում, ինչպես նաև այն դեպքում, երբ նրանք պատշաճ չեն արձագանքում սեռական բռնության կամ ոտնձգության դեպքերին կամ դրանց ենթարկվելու երկյուղի մասին հաղորդումներին: Առկա չեն պատասխանատվության միջոցներ այն դեպքերում, երբ աշխատակիցները տեղյակ են ազատազրկված անձի խոցելիության մասին, սակայն նրան սեռական բռնությունից կամ շահագործումից պաշտպանելու համար անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկում:

Ներպետական օրենսդրությամբ կարգավորված չէ նաև սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնությամբ հիմքով ատելության խոսքը: Այդ հիմքով կատարված հանցագործությունները ներառված չեն քրեական օրենսդրության մեջ և չեն դիտարկվում որպես քրեորեն պատժելի արարքի շարժառիթ՝ հանցագործության և պատժի ծանրացուցիչ հանգամանք[106]:

*ՀՀ* քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածը պատիժ է սահմանում ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելու, ռասայական գերազանցությանը

---

[105]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 18-18 գրության պատասխան, http://bit.do/fNuAK:

[106]«Փինք» իրավապաշտպան հկ, «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրադրության բարելավմանն ուղղված ջատագովության երկարաժամկետ ռազմավարություն», էջ 8, http://bit.do/fMoAw:

կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողություններ կատարելու համար: Հոդվածում ամրագրված հիմքերի ցանկում ներառված չեն սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը: Օրենսգրքի 63-րդ հոդվածը սահմանում է պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքները, որոնց մեջ նախատեսված է հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով կատարելը: Նշված հոդվածը տալիս է ատելության հիմքով ծանրացնող հանգամանքների սպառիչ ցանկ, որում դարձյալ ընդգրկված չեն սեռական կողնորոշումը և գենդերային ինքնությունը[107]:

Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնությամբ հիմքով ատելության խոսքի, այդ հիմքով կատարված հանցագործությունների անթույլատրելիության վերաբերյալ որևէ կարգավորում նախատեսված չէ նաև քրեակատարողական ոլորտը կանոնակարգող օրենսդրությամբ:

Նման պայմաններում, երբ օրենքով արգելված չէ ԼԳԲՏ անձանց վնաս պատճառելն ատելության խոսքի դրսևորմամբ, ինչպես նաև այդպիսի դրսևորումը չի դիտվում որպես արարքի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք, ԼԳԲՏ անձինք դուրս են մնում իրավական պաշտպանության դաշտից[108]:

## *2.3. Տեղաբաշխում*

Քրեական ենթամշակույթի վերաբերյալ հետազոտությունները փաստում են, որ քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց տեղաբաշխման վերաբերյալ վերջնական որոշումը հիմնարկների վարչակազմը կայացնում է «զոն նայողների» հետ համագործակցությամբ: Նախքան տեղաբաշխումը «զոն նայողների» պահանջով յուրաքանչյուր նորեկ ազատազրկված անձի վերաբերյալ տեղեկություններ են հավաքվում նրա անցյալի, ընկերների, զբաղմունքի, կապերի և կենսակերպի վերաբերյալ: Տվյալ անձի համար բանտային միջավայրում հաստատվելը կարող է բարդ կամ անհնարին լինել, եթե բացահայտվի քրեական ենթամշակույթի տեսանկյունից անընդունելի որևէ տեղեկություն հատկապես անձի սեռական վարքի վերաբերյալ: Այսինքն՝ ազատազրկված անձը կարող է հիերարխիայի ստորին օղակում հայտնվել նաև տեղեկությունների հավաքման և փոխանցման ոչ ֆորմալ համակարգի պատճառով[109]:

Քրեական ենթամշակույթի չգրված օրենքները սուր են արտահայտվում հատկապես տղամարդկանց քրեակատարողական հիմնարկներում: Այդ օրենքների համաձայն՝ եթե հետերոսեքսուալ անձը շփվում է ԳԲՏ անձանց հետ, ապա

[107]ՀՀ քրեական օրենսգիրք, հոդվածներ 63, 226, http://bit.do/fL6zN:
[108]«Նոր սերունդ» մարդասիրական հկ, «ՀՀ օրենսդրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված ԼԳԲՏ անձանց իրավունքների համեմատության զեկույց», Երևան, 2014թ., էջ 29, http://bit.do/fLtkq:
[109]«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ, «Ոչ ֆորմալ հարաբերությունները Հայաստանի ազատազրկման վայրերում «Նուբարաշեն» ՔԿՀ-ի օրինակով», 2017թ., էջեր 8-9, http://bit.do/fL6FV:

«կոտրվում» է և զրկվում է «նորմալ մարդ» կարգավիճակից[110]: Ավելին, ԳԲՏ անձանց «սովորական» խցում տեղավորելը կարող է լուրջ բախումների հանգեցնել, քանի որ «մաքուր կյանքով» ապրող անձինք չեն ցանկանում նրանց հետ նույն խցում գտնվել: Այդ պատճառով ազատազրկված ԳԲՏ անձինք քրեակատարողական հիմնարկ մուտք գործելուն պես գրավոր դիմում են ներկայացնում հիմնարկի վարչակազմին, որով խնդրում են իրենց տեղափոխել համապատասխան խցեր: Դիմումի մեջ որպես հիմնավորում նշում են սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը կամ պատիժն այլոց հետ նույն խցում կրելու անհնարինությունը: ԳԲՏ անձանց հավասարեցված անձինք ևս դիմում են ներկայացնում՝ իրենց «թռածների» կամ «արվամոլների» խուց տեղափոխելու համար[111]:

Պետք է նշել, որ ոլորտը կանոնակարգող օրենսդրությամբ նմանատիպ դիմումներ ներկայացնելու ընթացակարգ նախատեսված չէ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման մոտեցում քրեակատարողական հիմնարկներում արդեն իսկ գործում է, 2019թ. ընթացքում ազատազրկված անձանց կողմից ներկայացված դիմումների քանակը ճշտելու վերաբերյալ հարցում ենք ուղարկել, ինչին քրեակատարողական ծառայությունից պատասխանել են, որ այդ դիմումների առանձնացված հաշվառում չի իրականացվում[112]: Մինչդեռ Դիտորդների խմբի նույն հարցադրման վերաբերյալ գրությանն արդարադատության նախարարությունից պատասխանել են, որ 2019թ. հունվարի 14-ի դրությամբ 47 կալանավորված անձ և դատապարտյալ «սեռական այլ կողմնորոշում» ունենալու վերաբերյալ դիմումներ են ներկայացրել հիմնարկների վարչակազմին՝ նշելով, որ ցանկանում են տեղափոխվել համապատասխան խուց[113]:

Փորձել ենք հարցումների միջոցով պարզել նաև 2019թ. ընթացքում քրեակատարողական հիմնարկներում պահվող ԼԳԲՏ անձանց թիվը: Ըստ ստացված պատասխանների՝ «Աբովյան», «Արթիկ», «Արմավիր», «Գորիս», «Երևան-Կենտրոն», «Հրազդան», «Նուբարաշեն», «Սևան» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում նշված ժամանակահատվածում ԼԳԲՏ անձինք չեն պահվել: «Կոշ» ՔԿՀ-ից տեղեկատվություն չեն տրամադրել՝ նշելով, որ նույնասեռական կամ տրանսգենդեր դատապարտյալների հաշվառում չի իրականացվում: «Դատապարտյալների հիվանդանոց» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներից տեղեկացրել են, որ իրավասու չեն նմանատիպ տեղեկատվություն տրամադրել և առաջարկել են դիմել

---

110ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2014-2015թթ. գործունեության հաշվետվություն», Հայաստան, 2016թ., էջ 54, http://bit.do/fMuFp:

111ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգը 2011-2012 թվականներին», Երևան, 2013թ., էջ 30, http://bit.do/fMuFq:

112«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-59 գրության պատասխան, էջ 6, http://bit.do/fM8qH:

113«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-144 գրության պատասխան, http://bit.do/fLq37:

քրեակատարողական ծառայության հանրային կապերի բաժնին[114]: Այնտեղից տեղեկացրել են, որ անազատության մեջ պահվող անձանց ըստ սեռական կողմնորոշման հաշվառում չի իրականացվում՝ տարբերակված վերաբերմունք չդրսևորելու համար, ուստի նմանատիպ տեղեկատվություն չեն կարող տրամադրել[115]: Հարկ է նշել, որ նույն հարցադրման վերաբերյալ որոշ հիմնարկներից 2018թ. ստացված պատասխանները հակասական տեղեկատվություն են պարունակում: Ըստ այդ պատասխանների՝ «Վանաձոր» ՔԿՀ-ում 2017թ. դեկտեմբեր-2018թ. հուլիս ընկած ժամանակահատվածում 5 անձ պատիժ է կրել մյուս դատապարտյալներից առանձնացված խցերում: Նույն ժամանակահատվածում «Նուբարաշեն» ՔԿՀ-ում պահվել է մոտ 8 նույնասեռական անձ, իսկ «Սևան» ՔԿՀ-ում նույնասեռականների համար նախատեսված կացարանում պատիժ է կրել 7 դատապարտյալ[116]:

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ազատազրկված ԼԳԲՏ անձանց թվի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության բացակայությունը կարող է կապված լինել մի շարք գործոնների հետ: Մի կողմից քրեակատարողական հիմնարկներն անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վերաբերյալ տվյալները չեն հավաքագրում, մյուս կողմից անձինք չեն հայտնում իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին: Ինքնանույնականացման, տվյալների հավաքագրման և մշակման մեխանիզմների բացակայությունն ի վերջո հանգեցնում է նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով դրսևորվող խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ վիճակագրության բացակայությանը, ինչի հետևանքով ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները մնում են անտեսված: Այս մասին ԽԿԵ-ն նշել է իր 9-րդ տարեկան զեկույցում[117]:

Ազատազրկված ԼԳԲՏ անձանց թվային տվյալները շատ քիչ երկրներում են հավաքագրվել: Օրինակ, ԱՄՆ-ում տեղեկատվությունը հավաքագրվել է բանտերում սեռական բռնության դեպքերի ուսումնասիրության շրջանակներում[118]: Ի դեպ, հետազոտությունն իրականացվել է ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի կողմից[119]: Իռլանդիայի բանտերում շատ քչերն են բացահայտում իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին[120], չնայած բանտերում նրանց

---

[114]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներին ուղարկված գրությունների պատասխաններ, http://bit.do/fM8rP:

[115]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-87 գրության պատասխան, http://bit.do/fM8zj:

[116]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներին 2018թ. ուղարկված գրությունների պատասխաններ, http://bit.do/fM8sd:

[117]9th Annual report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 22 March 2016, CAT/C/57/4, para. 59, http://bit.do/fM8sX.

[118]Irish Penal Reform Trust, “Out on the Inside: The Rights, Experiences and Needs of LGBT People in Prison”, 2016, page 12, http://bit.do/fMuAe.

[119]United Nations Department of Justice, Office of Justice Programs, Bureau of Justice Statistics, “Sexual Victimization in Prisons and Jails Reported by Inmates 2011-12”, http://bit.do/fMuy2.

[120]Transgender Equality Network Ireland, “Transphobia in Ireland”, 2009, page 14, http://bit.do/fM8uz.

ներկայության մասին պաշտոնապես հայտարարվել է 2002թ.[121]: Հետազոտություններից մեկի արդյունքները ցույց են տալիս, որ տղամարդկանց 2.7 և կանանց 1.2%-ն իրենց նույնականացնում են որպես նույնասեռական կամ բիսեքսուալ[122]: Անգլիայի և Ուելսի բանտերն անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ տվյալները սկսել են հավաքագրել 2011թ.[123]: Ըստ հետազոտություններից մեկի արդյունքների՝ ազատազրկված անձանց 3-5%-ն իրենց նույնականացնում են որպես գեյ կամ լեսբի[124]:

Նշված տվյալների հավաքագրման հետ կապված հիմնական մտահոգությունն այն է, որ դրանք կարող են չարտահայտել իրականությունը, քանի որ հարցվողները կարող են թաքցնել այն՝ մտավախություն ունենալով, որ այդ տվյալները կարող են օգտագործվել իրենց դեմ[125]: Բացի այդ, շատերը կասկածի տակ են դնում տվյալների հավաքագրման մեթոդները՝ վիճարկելով դրանց զգայունությունը և արդյունավետությունը: Այնուամենայնիվ, հետազոտողների կարծիքով նման ուսումնասիրությունները կարևոր են՝ տեսանելի դարձնելու համար ազատությունից զրկված ԼԳԲՏ անձանց փորձն ու կարիքները, ինչը հետագայում կարող է օգտակար լինել այդ կարիքներին համահունչ ծառայություններ մշակելու հարցում[126]: «Հատուկ կարիքներ ունեցող բանտարկյալների վերաբերյալ ձեռնարկում», օրինակ, նշված է, որ տվյալների հավաքագրումը և գնահատումը պետք է դառնան ազատազրկված ԼԳԲՏ անձանց վերաբերյալ քաղաքականությունների մշակման և դրանց հետագա վերանայման կարևոր մասը[127]:

Հայաստանի պարագայում խնդիրն այլ բնույթ ունի: Այսպես, անձնական տվյալների պաշտպանության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք, իսկ անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ[128]: Այստեղից բխում է, որ ազատազրկված անձինք ևս պետք է իրենց ցանկությամբ կամ որոշումով հայտնեն իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վերաբերյալ տվյալները, իսկ հիմնարկների աշխատողներն իրավունք չունեն այդ մասին հայտնել այլ անձանց՝ առանց իրավաչափ նպատակի: Այս առումով հարկ է

---

121 Irish Prisons Inspectorate, Portlaoise Inspection: 9th, 10th, 11th, December 2002, 5.5(f), page 25, http://bit.do/fM8uG.

122 Crisis Pregnancy Agency & Department of Health and Children, Republic of Ireland, “The Irish Study of Sexual Health and Relationships”, 2006, page 126, http://bit.do/fMuAi.

123 “Recognizing LGBT prisoners: The need for rigorous research and practice”, http://bit.do/fMiZk.

124 Dunn, P., (2013), “Slipping off the equalities agenda? Work with LGBT prisoners”, Prison Service Journal, No 206, page 7, http://bit.do/fMuy9.

125 «Միջազգային բանտային բարեփոխում», «ԼԳԲՏԻ անձինք ազատազրկման վայրերում. կանխարգելիչ մշտադիտարկման հիմունքները», Ազատազրկման վայրերում մշտադիտարկման ձեռնարկ, 2015թ., ծանոթագրություն 17, էջ 21, http://bit.do/fMuQa:

126 “Recognizing LGBT prisoners: The need for rigorous research and practice”, http://bit.do/fMiZk.

127 United Nations Office on Drugs and Crime, “Handbook on Prisoners with Special Needs”, New York, 2009, page 114, http://bit.do/fMsep.

128 ՀՀ Սահմանադրություն, հոդված 34, կետեր 1 և 2, http://bit.do/fMuAw:

ավելացնել, որ ազատազրկված անձանց անձնական կյանքին վերաբերող տեղեկատվության տարածման արգելքի մասին նշված է ՀՀ արդարադատության նախարարի 2016թ. հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանում[129]: Բացառություն է սահմանված այն դեպքերի համար, երբ տեղեկատվությունը տվյալներ է պարունակում հաստատապես նախապատրաստվող հանցագործության մասին:

Սակայն քրեակատարողական հիմնարկներում ԳԲՏ անձանց ոչ թե իրավունք է վերապահվում, այլ «պարտադրվում է» հայտնել իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին, ինչը նշանակում է, որ չի պահպանվում անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության գաղտնիությունը: Ճիշտ է, մեր հարցմանը քրեակատարողական ծառայությունից պատասխանել են, որ անազատության մեջ պահվող անձանց տվյալները պաշտպանվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով[130], սակայն նշված իրավական ակտերը քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության գաղտնիության պահպանման վերաբերյալ առանձին դրույթներ չեն պարունակում:

Ակնհայտ է, որ հիմնարկներում ներքին կարգով տիրապետում են նաև ազատազրկված ԼԳԲՏ անձանց թվի վերաբերյալ տեղեկատվությանը, քանի որ անձինք հայտնում են իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին, մինչդեռ այդ մասին պաշտոնական տվյալներ առկա չեն, քանի որ հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց ըստ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հաշվառում չի իրականացվում: Ավելին, քրեակատարողական ծառայությունից պարզաբանել են, որ իր գործունեությունը կազմակերպելիս ծառայությունը նպատակ է հետապնդում բացառել խտրականության հնարավոր դրսևորումները և ապահովել անազատության մեջ պահվող յուրաքանչյուր անձի համար հավասար և նույնանման պահման պայմաններ[131]:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)5 հանձնարարականը նշում է, որ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ անձնական տվյալները կարող են հավաքագրվել, երբ դա անհրաժեշտ է որոշակի օրինական և իրավաչափ նպատակի իրագործման համար: Ուստի առաջարկվում է հավաքագրել և վերլուծել համապատասխան տվյալներ՝

[129]«Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու և ՀՀ արդարադատության նախարարի 2008թ. մայիսի 30-ի թիվ 44-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2016թ. հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրաման, գլուխ 8, կետ 39.1, http://bit.do/fM8xF:
[130]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-59 գրության պատասխան, էջ 7, http://bit.do/fM8qH:
[131]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-87 գրության պատասխան, http://bit.do/fM8zj:

սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ցանկացած խտրականություն մշտադիտարկելու և կանխարգելելու համար[132]:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է Հայաստանում ևս մշակել և ներդնել ազատազրկված ԼԳԲՏ անձանց վերաբերյալ առանձնացված հաշվառում իրականացնելու մեխանիզմ: Այդ մեխանիզմը մշակելիս կարևոր է ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը և նկատի առնել այն տեղայնացնելու առանձնահատկությունները: Բացի այդ, անհրաժեշտ է երաշխիքներ սահմանել առ այն, որ անձինք քրեակատարողական հիմնարկներում իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին տվյալները հայտնեն ոչ թե պարտադրաբար, այլ կամավոր, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել այդ տվյալների գաղտնիությունը և ԼԳԲՏ անձանց անվտանգությունն ու պաշտպանությունն ապահովելու համար: Նմանատիպ հաշվառում իրականացնելը հնարավորություն կտա կարիքների հասցեական ուսումնասիրություն կատարել, իսկ հավաքագրված տվյալների վերլուծության արդյունքները հետագայում կարող են հիմք ծառայել ազատազրկված ԼԳԲՏ անձանց վիճակի բարելավմանն ուղղված քաղաքականությունների մշակման համար:

Հաջորդ խնդիրը վերաբերում է ազատազրկված ԳԲՏ անձանց տեղաբաշխմանը: Այսպես, ԳԲՏ և նրանց հավասարեցված անձանց կողմից ներկայացված դիմումների հիման վրա հիմնարկի վարչակազմը նրանց առանձնացնում և տեղավորում է կենցաղային ամենավատ պայմաններով խցերում կամ կացարաններում: Կախված հիմնարկի շենքային պայմաններից՝ նրանք պահվում են առանձնացված խցերում («Արմավիր», «Գորիս», «Հրազդան», «Նուբարաշեն», «Վանաձոր», «Վարդաշեն»), կացարաններում («Արթիկ», «Կոշ», «Սևան») կամ հիմնարկի առանձնացված մասերում («Դատապարտյալների հիվանդանոց»): Արդարադատության նախարարությունը ԳԲՏ անձանց քրեակատարողական հիմնարկներում առանձնացված պահելը հիմնավորում է նրանց անվտանգությունն ապահովելու, այլ ազատազրկված անձանց կողմից իրավունքների խախտումները բացառելու անհրաժեշտությամբ և համատեղելիության հանգամանքով[133]: Ճիշտ է, միգուցե հիմնարկի վարչակազմը ԳԲՏ անձանց առանձին պահելով նրանց համար հարաբերականորեն անվտանգ միջավայր է ապահովում՝ երաշխավորելով, որպեսզի ԳԲՏ անձինք չտեղաբաշխվեն հավանական բռնարարների հետ նույն խցում կամ կացարանում, սակայն մտահոգիչ է այն, որ տեղաբաշխման ընթացքում անտեսվում են նրանց կարծիքը և մտահոգությունները:

---

[132]CM/Rec(2010)5 Recommendation on Measures to Combat Discrimination on Grounds of Sexual Orientation or Gender Identity, 31 March, 2010, http://bit.do/fMuzF.

[133]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2013թ. գործունեության տարեկան հաշվետվություն», Հայաստան, 2014թ., էջեր 78-79, http://bit.do/fMuAB:

Խնդիրն այլ բնույթ ունի «Աբովյան» ՔԿՀ-ում: Այնտեղ նույնասեռական կանայք պահվում են մնացած ազատազրկված կանանց հետ միասին, ինչը կարող է դժգոհության տեղիք տալ, սակայն հիմնարկի պետը հիմնավորում է, որ նույնասեռական կանանց չի առանձնացնում, որպեսզի նրանց չպիտակավորեն և տարբերակված վերաբերմունք չցուցաբերեն: Օրինակ, 2018թ. Դիտորդների խումբն «Աբովյան» ՔԿՀ կատարած այցի ընթացքում արձանագրել է, որ նույնասեռական կինը, ով ապրում էր կացարանային հատվածում, խտրական վերաբերմունքի էր ենթարկվում: Նա ցանկանում էր առանձին կացարան տեղափոխվել, ինչին հիմնարկի պետը բացասական էր արձագանքել, քանի որ այդ դեպքում նույնասեռական կինը պետք է ապրեր փակ տեսակի ուղղիչ հիմնարկում: Մինչդեռ հաշվի առնելով կնոջ հոգեբանական վիճակը և նյարդային գերլարվածությունը՝ պետք որոշել է, որ նրա առանձնացումը նպատակահարմար չէ[134]:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ տեղաբաշխումն այս սկզբունքով կազմակերպելը խտրական է մի քանի առումներով: Նախ՝ ԼԳԲՏ անձանց պահելու համար նախատեսված հատուկ խցերը կամ մասնաշենքերը հիմնականում աչքի են ընկնում իրենց վատ պայմաններով: Այնուհետև՝ հատուկ խցերում կամ մասնաշենքերում տեղաբաշխելով՝ հիմնարկի վարչակազմն անուղղակիորեն սահմանափակում է նրանց մասնակցությունը հիմնարկներում կազմակերպվող դասընթացներին կամ միջոցառումներին: Հաջորդ խնդիրն այն է, որ ԼԳԲՏ անձանց տեղաբաշխումը մեխանիկորեն է կատարվում, այսինքն՝ անձինք չեն մասնակցում իրենց տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացմանը, նրանց մտահոգությունները հաշվի չեն առնվում: Բացի այդ, անտեսվում է անձանց որպես ԼԳԲՏ ինքնանույնականացման իրավունքը, ինչի հետևանքով նույն խցում կամ կացարանում կարող են տեղաբաշխվել ինչպես ԼԳԲՏ, այնպես էլ սեռական բնույթի հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող, այդ արարքի համար ազատազրկման դատապարտված, սեռական բռնության ենթարկված անձինք և այլն[135]:

Ինչ վերաբերում է միջազգային չափանիշներին, ապա Եվրոպական բանտային վերանայված կանոնները սահմանում են, որ տեղաբաշխման ժամանակ պետք է հաշվի առնել անվտանգության ապահովման պահանջները, բանտարկյալների հետ քննարկել նրանց առաջին տեղաբաշխումը և հետագա տեղափոխումը մեկ բանտից մյուսը, իսկ միասին տեղավորելու դեպքում պետք է ընտրվեն միմյանց հետ շփվելու տեսակետից հարմար բանտարկյալներ[136]: Յոգյակարտյան սկզբունքների համաձայն՝ տեղաբաշխման ժամանակ անհրաժեշտ է խուսափել ԼԳԲՏ անձանց հետագա

---

[134]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2018թ. գործունեության հաշվետվություն», Հայաստան, 2019թ., էջեր 50-51, http://bit.do/fMuWR:

[135]Association for the Prevention of Torture, "Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide", 2018, Geneva, pages 65-67, http://bit.do/fM94i.

[136]European Prison Rules, Rules 17.2, 17.3, 18.6, http://bit.do/fNaQW.

մարգինալացումից և նրանց վատ վերաբերմունքի, ֆիզիկական, հոգեկան կամ սեռական բռնության ենթարկելու վտանգից, ինչպես նաև երաշխավորել, որպեսզի ԼԳԲՏ անձինք մասնակցեն տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացմանը[137]: Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի կողմից մշակված մշտադիտարկման ուղեցույցում նշվում է, որ ԼԳԲՏ անձինք պետք է ներգրավված լինեն տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում, ինչպես նաև պետք է այդ որոշումները բողոքարկելու հնարավորություն ունենան[138]:

Անդրադառնալով ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությանը՝ նշենք, որ ազատազրկված անձանց ըստ խցերի կամ կացարանների տեղաբաշխելու և քրեակատարողական հիմնարկում անջատ պահելու հիմքերը սահմանում են ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը[139] և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը[140]: Ներքին կանոնակարգը սահմանում է ազատազրկված անձանց հիմնարկներ ընդունելու ընթացակարգը[141]: Դատապարտյալներին պատիժը կրելու համար կոնկրետ հիմնարկի՝ մեկուսացվածության աստիճանի ընտրության և/կամ փոփոխման վերաբերյալ որոշումները կայացնում է քրեակատարողական ծառայության տեղաբաշխման հանձնաժողովը, որի կազմը և գործունեության կարգը հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարի 2012թ. մարտի 14-ի թիվ 334-Ն հրամանով[142]: Ինչ վերաբերում է տեղաբաշխելու նպատակով հոգեբանական և այլ առանձնահատկություններով պայմանավորված համատեղելիությունը որոշելուն, ապա այն իրականացվում է ազատազրկված անձանց հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների կազմակերպման նախնական փուլում, որի իրականացման կարգը ներկայացված է ՀՀ արդարադատության նախարարի 2016թ. հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանում[143]:

Սակայն նշված իրավական ակտերում ամրագրված չեն հիմնարկներ ընդունելու, խցերում կամ կացարաններում տեղաբաշխելու, ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու և/կամ փոփոխելու ընթացքում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով

---

[137]The Yogyakarta Principles on the Application of International Human Rights Law in Relation to Sexual Orientation and Gender Identity, 2007, Principles 9A, 9C, http://bit.do/fM3Q3.

[138]Association for the Prevention of Torture, “Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide”, 2018, Geneva, page 67, http://bit.do/fM94i.

[139]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 68, http://bit.do/fNaRt:

[140]«Ձերբակալվածև կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 31, http://bit.do/fNaRx:

[141]«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, բաժին 2, http://bit.do/fMuCW:

[142]«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի կազմը և գործունեության կարգը հաստատելու և ՀՀ արդարադատության նախարարի 2005թ. ապրիլի 21-ի թիվ ՔՀ-26-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2012թ. մարտի 14-ի թիվ 34-Ն հրաման, http://bit.do/fMuC6:

[143]«Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու և ՀՀ արդարադատության նախարարի 2008թ. մայիսի 30-ի թիվ 44-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2016թ. հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրաման, գլուխ 2, կետ 26.5, գլուխ 4, կետ 31.4, http://bit.do/fM8xF:

խտրականության արգելքը, նախատեսված չեն այդ հիմքերով խտրականության դրսևորման դեպքում պատժի և պատասխանատվության մեխանիզմներ, դրանց ապահովմանն ուղղված ընթացակարգեր: Նախատեսված չեն նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության գաղտնիության ապահովմանը, ԼԳԲՏ անձանց տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացմանը ներգրավելու, նրանց մտահոգությունների կամ կարծիքի հիման վրա համապատասխան որոշում կայացնելուն ուղղված ընթացակարգեր:

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգում Պաշտպանի կողմից առաջարկ է ներկայացվել օրենսդրական կարգավորման մակարդակում ամրագրել հստակ չափանիշներ, որոնք իրավասու մարմնին թույլ կտան արդյունավետ որոշում կայացնել՝ ազատազրկված անձանց պատժի կրման համար քրեակատարողական հիմնարկն ընտրելու, ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու և խցերում տեղաբաշխելու համար[144]: Սակայն նշված գործընթացներում ԼԳԲՏ անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը Պաշտպանը չի դիտարկել որպես հիմնախնդիր, ուստի այն օրենսդրական մակարդակում կարգավորելու ուղղությամբ համապատասխան առաջարկություններ չեն ներկայացվել հայեցակարգում:

ԼԳԲՏ անձանց տեղաբաշխման հաջորդ մոտեցումը նրանց պաշտպանական նկատառումներով մեկուսի պահելն է, որը դարձյալ կիրառվում է անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով: Հայաստանում ևս այս մոտեցումը գործում է:

*ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ*
*Պատժախուց, որտեղ մեկուսացվել է նույնասեռական անձը:*





Օրինակ, 2018թ. «Արմավիր» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ Դիտորդների խումբն արձանագրել է, որ մասնաշենքում այլ ազատազրկված անձանց հետ թշնամանք ունենալու պատճառով նույնասեռական անձն իրեն մեկուսացնելու համար դիմում է գրել, սակայն վարչակազմը նրան տեղափոխել է պատժախուց:

[144]ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգ», Երևան, 2018թ., էջեր 24-28, https://bit.ly/3pwU8PY:

Այնտեղ անձն ապահովված չի եղել կենցաղային և անձնական հիգիենայի պարագաներով՝ սեղան, աթոռ, հայելի և այլն։ Ապահովված չի եղել անձի կապն արտաքին աշխարհի հետ, քանի որ չուներ ռադիո։ Նա նաև փոխանցել է, որ չի կարողանում օգտվել գրադարանից[145]։

Այս մոտեցմամբ տեղաբաշխման դեպքում խնդրահարույց է այն, որ մեկուսացումը որպես բռնությունից պաշտպանելու միջոց կիրառելով՝ բանտերի վարչակազմը սահմանափակում է ազատազրկված անձանց միջանձնային շփման, զբաղվածության միջոցների և այլ ծառայությունների հասանելիության հնարավորությունները։ Բացի այդ, ներպետական օրենսդրությամբ ԼԳԲՏ անձանց պաշտպանական նպատակով մեկուսի պահելու հարցը կարգավորված չէ։

ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով զեկուցողը (այսուհետ՝ ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման հարցերով հատուկ զեկուցող) պաշտպանական նկատառումներով մեկուսի պահելու վերաբերյալ նշում է, որ երկարատև մեկուսացումը կարող է հավասարեցվել դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կամ անգամ խոշտանգման[146]։ ԽԿԿ-ն 21-րդ ընդհանուր զեկույցում նշում է, որ պետությունները պարտավոր են ապահովել բանտարկյալների համար անվտանգ միջավայր և փորձեն կատարել այդ պարտավորությունը՝ ապահովելով հնարավորինս շատ սոցիալական փոխազդեցություն նրանց միջև՝ կարգուկանոնի պահպանմանը համահունչ։ Ընդ որում, պաշտպանական նպատակների համար մեկուսացումը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ որևէ այլ տարբերակ առկա չէ ապահովելու համար տվյալ անձի անվտանգությունը[147]։

Նելսոն Մանդելայի կանոնները ներառում են հստակ սահմանափակումներ, որոնք պահանջում են, որ հիմնարկի ընդհանուր բնակչությունից բռնի առանձնացումը, ներառյալ կամքին հակառակ ցանկացած ձևի առանձնացումը, դրա վերանայումը կամ դրա վերացումը կարգավորող բոլոր քաղաքականությունները և ընթացակարգերն արտոնված լինեն օրենքով կամ կանոնակարգով։ Կանոնները մեկուսի ազատազրկումը սահմանում են որպես ազատությունից զրկում՝ առանց օրվա ընթացքում 22 կամ ավելի ժամ մարդկային իմաստալից շփման և արգելում են դրա անժամկետ կամ երկարատև կիրառումը։ Կանոնները հստակեցնում են, որ մեկուսի պահելը պետք է կիրառվի միայն բացառիկ դեպքերում՝ որպես վերջին միջոց, հնարավորինս ամենակարճ ժամկետով, ենթակա լինի անկախ վերանայման և միայն

---

[145]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2018թ. գործունեության հաշվետվություն», Հայաստան, 2019թ., էջ 38, http://bit.do/fMuWR:

[146]Interim report of the Special Rapporteur on Torture to the UN General Assembly, 5 August 2011, A/66/268, pages 19-21, http://bit.do/fMuXb.

[147]Solitary confinement of prisoners, Extract from the 21st General Report of the CPT, published in 2011, European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT), http://bit.do/fMuXq.

իրավասու մարմնի թույլտվությամբ: Ավելին, Կանոնները պահանջում են միջոցներ ձեռնարկել ազատությունից զրկված անձանց մեկուսացման հնարավոր բացասական հետևանքների ազդեցությունը մեղմելու համար[148]: Ըստ Եվրոպական բանտային վերանայված կանոնների՝ դատապարտյալի մեկուսացումն այլ դատապարտյալներից բնորոշվում է որպես անվտանգության միջոց, որը պետք է կիրառվի ամենակարճ ժամանակահատվածով՝ դրա կիրառմամբ հետապնդվող նպատակներին հասնելու համար, և պետք է պարբերաբար վերանայվի այդ նպատակների համատեքստում: Մեկուսացման դեպքում դատապարտյալը պետք է ունենա առնվազն 1 ժամ զբոսանքի, ինչպես նաև գրքերից, թերթերից կամ այլ գրականությունից օգտվելու իրավունք[149]:

Այն, որ նման մեկուսացումը բացասաբար է անդրադառնում հատկապես ազատազրկված ԼԳԲՏ անձանց վրա, արձանագրվել է ԽԿԵ-ի 9-րդ տարեկան զեկույցում: Առաջարկվել է այդ մեկուսացումը կիրառել միայն բացառիկ հանգամանքներում՝ որպես վերջին միջոց, հնարավորինս ամենակարճ ժամկետում և անվտանգության երաշխիքների առկայության դեպքում[150]: Կարևորվում է, որպեսզի պաշտպանական նկատառումներով մեկուսացումը կիրառվի բացառապես ազատությունից զրկված անձի համաձայնությամբ, օրենքով ամրագրված ընթացակարգով այնպես, որ չհանգեցնի հետագա խարանի կամ կրթության և ծառայությունների հասանելիության սահմանափակումների: Նշված նկատառումներով առանձնացումը չպետք է կիրառվի որպես ազատազրկված անձանց ճնշելու կամ պատժելու միջոց: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել, որպեսզի ազատությունից զրկված անձինք համաձայն լինեն պաշտպանական նկատառումներով մեկուսացվելուն կամ այն չօգտագործվի որպես առանձին անձանց ճնշելու կամ պատժելու միջոց[151]:

Այս համատեքստում կարող ենք մեջբերել Թուրքիայի օրինակը: Հայցվորը՝ Թուրքիայի քաղաքացին, որն անվտանգության նկատառումներից ելնելով պահվում էր մենախցում, դիմել էր բանտի ղեկավարությանը՝ խնդրելով իրեն առանձնացնել իր խցակիցներից, քանի որ նրանք սպառնում էին և ծաղրում սեռական կողմնորոշման պատճառով: Նա տեղափոխվել էր 7մ² մակերեսով առանձին խուց և այդ խցում պահվել ավելի քան 13 ամիս, ընդ որում՝ առանց բացօթյա մարզումների և ազատությունից զրկված մյուս անձանց հետ շփվելու հնարավորության: ՄԻԵԴ-ը X v. Turkey (Application no. 24626/09) գործով վճռել է, որ այդ պրակտիկան ՄԻԵԿ 3-րդ

---

[148]The United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners, (the Nelson Mandela Rules), Rules 36-46, http://bit.do/fMuXu.

[149]European Prison Rules, Rules 60.6a-60.6f, http://bit.do/fNaQW.

[150]9th annual report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 22 March 2016, CAT/C/57/4, para. 64, 78, http://bit.do/fNaSE.

[151]«Միջազգային բանտային բարեփոխում», «ԼԳԲՏԻ անձինք ազատազրկման վայրերում. կանխարգելիչ մշտադիտարկման հիմունքները», Ազատազրկման վայրերում մշտադիտարկման ձեռնարկ, 2015թ., էջեր 15-16, http://bit.do/fMuQa:

հոդվածի և խտրականության անթույլատրելիության մասին 14-րդ հոդվածի խախտում է[152]:

Ինչ վերաբերում է ներպետական կարգավորումներին, ապա, ինչպես արդեն նշել ենք, ազատազրկված անձանց մեկուսի պահելու հարցը ներպետական օրենսդրությամբ կարգավորված չէ: ՀՀ քրեակատարողական օրենսգիրքն անձի կամ նրա խցակիցների անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում մենախուց տեղափոխվելու հնարավորություն է նախատեսում միայն ցմահ դատապարտյալների համար[153]: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում որևէ կարգավորում նախատեսված չէ կալանավորված անձանց պաշտպանական նկատառումներով մեկուսի պահելու վերաբերյալ, թեև պրակտիկայում նման դեպքեր ևս լինում են:

Պետք է նշել, որ ազատազրկված անձանց, այդ թվում՝ հատուկ կատեգորիայի անձանց մեկուսի պահելու խնդրի կարգավորումը ներառված է «Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2022թթ. ռազմավարության» մեջ[154]: Ռազմավարությամբ նախատեսվում է վերանայել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի վերոնշյալ կարգավորումը՝ մենախցում առանձնացման համար հիմք հանդիսացող հանգամանքների, նման որոշման կայացման պատճառաբանվածության, մենախցում առանձնացվելու մեկանգամյա և ընդհանուր տևողության ժամկետների, մենախցում առանձնացվելու դեպքում դատապարտյալի իրավունքների շրջանակի, ինչպես նաև այն տեսանկյունից, որ անձի անվտանգության ապահովման անհրաժեշտությունը կարող է վերաբերել նաև ազատազրկման դատապարտված այլ անձանց: Բացի այդ, նախատեսվում է փոփոխություն կատարել Ներքին կանոնակարգում և պատժախուց տեղափոխելու արգելք սահմանել նաև անչափահասների համար: Սակայն այս դեպքում ևս մտահոգության տեղիք է տալիս այն, որ ռազմավարությամբ սահմանված չէ հատուկ կատեգորիայի անձանց շրջանակը, ինչպես նաև անդրադարձ չի կատարվում ազատազրկված ԼԳԲՏ անձանց մեկուսի պահելու հետ կապված խնդիրներին և դրանց կարգավորմանը:

## *2.4. Պահման պայմաններ*

Ազատազրկված անձանց կենցաղային պայմանների միջև տարբերությունը պայմանավորված է նրանց կարգավիճակով: Սոցիալական կամ այլ գործոնների պատճառով ցածր կարգավիճակ ունեցող անձինք տեղաբաշխվում են ամենավատ

---

[152]Case Summary, X v Turkey, Application Number: 24626/09, 9 October 2012, http://bit.do/fNagB.

[153]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 108, http://bit.do/fNac6:

[154]«ՀՀ ՔԿՀ-ներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2020-2023թթ. ռազմավարությունը և դրա իրականացման 2020-2023թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2020թ. դեկտեմբերի 10-ի թիվ 513-Լ հրաման, հավելված 1, էջեր 12-14, http://bit.do/fNbZh :

պայմաններով խցերում կամ կացարաններում, որոնց կարգավիճակը ևս ցածր է: Ազատազրկված անձանց ցածր կարգավիճակ ունեցող խուց կարող են տեղափոխել նաև նրանց պատժելու նպատակով:

«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ-ի հետազոտությանը մասնակցած հարցվողները նշել են, որ ամենախիստ պատիժը, որին իրենք ներկա են եղել, դատապարտյալին ավելի ցածր կարգավիճակ ունեցող բանտախուց տեղափոխելն էր[155]: Ընդ որում, անկախ նշված խցեր տեղափոխելու պատճառներից՝ հետագայում հնարավոր չէ կարգավիճակը փոխել և ցածր կարգավիճակ ունեցող խցից այլ՝ բարձր կարգավիճակ ունեցող խուց տեղափոխվել[156]: Այս հարցին անդրադարձել է նաև ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման հարցերով հատուկ զեկուցողը՝ նշելով, որ ազատազրկման վայրերում սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչները հաճախ համարվում են բանտարկյալների ենթադաս և պահվում են ավելի վատ պայմաններում, քան մյուս բանտարկյալները[157]:

Նշված գործընթացն առավել խիստ է պահպանվում տղամարդկանց քրեակատարողական հիմնարկներում: Քանի որ ԳԲՏ անձինք դուրս են հիերարխիկ աստիճանակարգությունից, հիմնարկների վարչակազմը նրանց տեղաբաշխում է ամենախոնավ և անմխիթար պայմաններով խցերում: ԳԲՏ անձանց հավասարեցված ազատազրկված անձինք ևս տեղաբաշխվում են նշված խցերում, որոնք պիտակավորված են և կոչվում են «թռածների», «արվամոլների», «գոմիկների» կամ «այլազգիների» խցեր: Այդ խցերը հիմնականում չունեն բնական լույսի թափանցման հնարավորություն և օդափոխության համակարգ, այնտեղ առկա են հակասանիտարական պայմաններ, ինչպես նաև նկատվում է վերանորոգման կարիք[158]: Առանձնացված են նաև նշված խմբի անձանց տեսակցությունների սենյակները, կարանտինային խցերն ու պատժախցերը, ինչպես նաև լվացքի մեքենաները, որոնք նախատեսված են ազատազրկված անձանց հագուստը լվանալու համար[159]:

Դիտորդների խումբն արդարադատության նախարարությանը բազմիցս տեղեկացրել է ԳԲՏ անձանց կենցաղային պայմանների հետ կապված հիմնախնդրի մասին: Պաշտոնական պարզաբանումների մեջ նախարարությունն այն դիրքորոշումն է արտահայտել, որ ազատազրկված անձանց տեղաբաշխելիս հաշվի

---

[155]«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ, «Ոչ ֆորմալ հարաբերությունները Հայաստանի ազատազրկման վայրերում «Նուբարաշեն» ՔԿՀ-ի օրինակով», 2017թ., էջ 10, http://bit.do/fLtrb:

[156]«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ, «Քրեական ենթամշակույթը բանտերում հանգեցնում է բռնության, խտրականության և վատ վերաբերմունքի դրսևորումների», http://bit.do/fMuX2:

[157]Report of the Special Rapporteur on the question of torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment, Question of torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment, 3 July 2001, A/56/156, para. 23, http://bit.do/fNaTm.

[158]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ԼԳԲՏ ազատազրկված անձանց պահման պայմանները. Լուսանկարներ», 2019թ., http://bit.do/fMuX6:

[159]Հովհաննիսյան, Ն., «Հետք» ինտերնետային թերթ, «Հանցագործ աշխարհում նույնասեռական տերմինը խարան է ամբողջ կյանքի համար. ԼԳԲՏ ազատազրկված անձանց խնդիրները Հայաստանի բանտերում», 2019թ., http://bit.do/fMuYa:

են առնվում համակեցության կանոնները, և որևէ մեկն իր կամքին հակառակ չի կարող բնակեցվել որևէ կացարանում[160]: Մեկ այլ դեպքում տեղեկացրել է, որ քրեակատարողական ծառայության կողմից համապատասխան քայլեր են ձեռնարկվում հիմնարկներում նույնասեռականների առանձին բնակվելու պայմանները փոխելու համար[161]: Ճիշտ է, պահման պայմանների բարելավման ուղղությամբ քայլեր ձեռնարկվել են, սակայն խնդիրն այն է, որ դրանք հատվածական բնույթ են կրում և չեն հանգեցնում համակարգային փոփոխությունների:

*ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ, նույնասեռական անձանց խցեր*



Օրինակ, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ԳԲՏ անձինք տարիներ շարունակ պահվել են հիմնարկի ստորին հարկի խցերում, որտեղ վերանորոգման հետ կապված խնդիրներից բացի արձանագրվել են հակասանիտարական պայմաններ: Խցերի առաստաղի և պատերի վրա, սնունդ (հաց) պարունակող տուփերում նկատվել են մեծաքանակ խմբերով խավարասերներ, խցերի անմիջապես հարևանությամբ

---

160ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգը 2011-2012 թվականներին», Երևան, 2013թ., էջ 108, http://bit.do/fLttz:

161ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2013թ. գործունեության տարեկան հաշվետվություն», Հայաստան, 2014թ., էջ 79, http://bit.do/fLttF:

արձանագրվել է կեղտաջրերի արտահոսք[162]: Հիմնախնդրի մասին բարձրաձայնել է Դիտորդների խումբը[163], ինչից հետո արդարադատության նախարարության որոշմամբ հիմնարկի ստորին հարկի խցերն ապաբնակեցվել են, իսկ այնտեղ պահվող ազատազրկված անձինք տեղափոխվել են հիմնարկի այլ խցեր[164], սակայն դրանով խնդիրը չի կարգավորվել, քանի որ այն խցերը, որտեղ տեղափոխվել են ԳԲՏ անձինք, իրենց պայմաններով չեն զիջել հիմնարկի ստորին հարկի խցերին: Այդ խցերում ևս արձանագրվել են խոնավության և բնական լույսի թափանցելիության[165], վերանորոգման[166], ինչպես նաև սանիտարահիգիենիկ պայմանների[167] հետ կապված խնդիրներ: Բացի այդ, «Նուբարաշեն» ՔԿՀ-ի ստորին հարկի որոշ խցեր դեռևս շահագործվում են, և այդ խցերից 2-ում պահվում են ԳԲՏ անձինք:

*ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ, նույնասեռական անձանց խցեր*





Ազատազրկված անձանց պահման պայմանների վերաբերյալ Եվրոպական բանտային վերանայված կանոնները սահմանում են, որ դրանք պետք է հարգանք ապահովեն մարդու արժանապատվության և հնարավորության սահմաններում անձնական կյանքի գաղտնիության նկատմամբ[168]: Ինչ վերաբերում է ազատազրկված ԼԳԲՏ անձանց, ապա վարչակազմին ներկայացվող հիմնական պահանջը նրանց

---

[162]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «Անմարդկային պահման պայմաններ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում», 2017թ., http://bit.do/fLtt5:

[163]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, թիվ 16-77 հրատապ հաշվետվություն, http://bit.do/fLtt8:

[164]«Մեդիա կենտրոն», Առաքելյան, Լ., «Մարդու իրավունքների վիճակը քրեակատարողական հիմնարկներում. 2016թ. ամփոփում», 2017թ., http://bit.do/fLtt2:

[165]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «Դիտորդական խումբը հանդիպում է ունեցել «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ինքնավնասում կատարած անձանց հետ», 2017թ., http://bit.do/fLttM:

[166]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «Նուբարաշեն ՔԿՀ-ի թիվ 89 խուցը վերանորոգման կարիք ունի», 2017թ., http://bit.do/fLttY:

[167]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «Դիտորդների խումբը բարձրաձայնել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ախտահանման և մակաբույծների ոչնչացման աշխատանքներ իրականացնելու խնդրի մասին», 2018թ., http://bit.do/fLttQ, «2019թ.-ից ՀՀ ԱՆ ՔԿՀ-ների ախտահանման աշխատանքները կիրականացվեն ավելի արդյունավետ և հաճախակի», 2018թ. http://bit.do/fLttT:

[168]European Prison Rules, Rule 18.1, http://bit.do/fNaQW.

համար այլ ազատազրկված անձանց հետ հավասար պահման պայմանների ապահովումն է՝ ներառյալ խցային պայմանները, սննդի և առողջապահության ապահովումը, միջոցառումների և ծառայությունների հասանելիությունը[169]: Ընդ որում, ազատազրկված ԼԳԲՏ անձանց տրամադրվող ծառայությունների և կենսապայմանների որակի հարցում չպետք է խտրականություն դրսևորվի[170]:

*ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ, նույնասեռական անձանց խցեր*



Ճիշտ է, քրեակատարողական ծառայությունը տեղեկացնում է, որ իր գործունեությունը կազմակերպելիս ծառայությունը նպատակ է հետապնդում բացառել խտրականության հնարավոր դրսևորումները և ապահովել անազատության մեջ պահվող յուրաքանչյուր անձի համար հավասար և նույնանման պահման պայմաններ[171], սակայն մտահոգության տեղիք է տալիս այն, որ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով նախատեսված չեն ազատազրկված անձանց հավասար պայմաններով ապահովելու վերաբերյալ իրավական պահանջներ և ընթացակարգեր, խտրականության դրսևորման դեպքում պատժի և պատասխանատվության մեխանիզմներ:

Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը սահմանում են 1 անձի հաշվարկով բնակելի տարածքների չափերը՝ նշելով, որ ազատազրկված անձանց հատկացված բնակելի տարածքները պետք է համապատասխանեն ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ նորմերին և ապահովեն նրանց առողջության պահպանումը[172]: Ըստ այդմ՝ ազատազրկված անձանց հատկացված բնակելի տարածության չափը չի կարող

---

[169]«Մարդու իրավունքների իրացման կենտրոն» և «Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպության Հարավային Կովկասի տարածաշրջանային գրասենյակ, «Հատուկ կարիքներ ունեցող բանտարկյալների վիճակի մոնիթորինգ», 2016թ., էջ 3, http://bit.do/fMe5r:

[170]United Nations Office on Drugs and Crime, “Handbook on Prisoners with Special Needs”, New York, 2009, page 116, http://bit.do/fMsep.

[171]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-87 գրության պատասխան, http://bit.do/fM8zj:

[172]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 73, http://bit.do/fLtuB: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 20, կետ 2, http://bit.do/fLtuD:

պակաս լինել 4մ²-ից՝ յուրաքանչյուր անձի համար: Բաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալը պահվում է մինչև 10, իսկ կիսաբաց ուղղիչ հիմնարկում՝ մինչև 6 մարդու համար նախատեսված բնակելի կացարանում, կիսափակ ուղղիչ հիմնարկում՝ մինչև 6, իսկ փակ ուղղիչ հիմնարկում՝ մինչև 4 մարդու համար նախատեսված մեկուսացված խցում[173]: Ազատազրկված անձանց փակ, կիսափակ, կիսաբաց, բաց և բուժական ուղղիչ հիմնարկներում պահելու պայմանների առանձնահատկությունները սահմանվում են Ներքին կանոնակարգով[174]: ՀՀ արդարադատության նախարարի 2012թ. փետրվարի 28-ի թիվ 30-Ն հրամանը սահմանում է 1 ազատազրկված անձի հաշվարկով բնակելի տարածքները[175]:

*ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ, նույնասեռական անձանց խցեր*





ՀՀ կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրի 58-րդ կետով նախատեսվում է բարելավել քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանները: Առկա խնդիրների լուծման նպատակով կառավարության դիտարկմամբ անհրաժեշտ է կառուցել նոր քրեակատարողական հիմնարկ և դատապարտյալների հիվանդանոց, ինչպես նաև վերակառուցումներ և կապիտալ վերանորոգումներ իրականացնել: Ակնկալվում է, որ նշված միջոցառումների իրականացումը կխանգեցնի օրենքի առջև բոլորի հավասարության, արդարության ու մարդու իրավունքների պաշտպանության ապահովմանը և ազատությունից զրկված անձանց հիմնական իրավունքների երաշխավորմանը[176]:

«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի» 16-րդ գործողությամբ նախատեսված

---

[173] ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդվածներ 103-106, http://bit.do/fLtuB

[174] «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, բաժին 8, http://bit.do/fMwqb:

[175] «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների տեսակները, լրակազմերը, ինչպես նաև կալանավորվածների և դատապարտյալների համար մեկ անձի հաշվարկով բնակելի տարածքները սահմանելու մասին և ՀՀ արդարադատության նախարարի 2008թ. մայիսի 27-ի թիվ 41-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2012թ. փետրվարի 28-ի թիվ 30-Ն հրաման, http://bit.do/fMe5H:

[176] «ՀՀ կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. մայիսի 16-ի թիվ 650-Լ որոշում, հավելված 1, գործողություն 58, http://bit.do/fMwoB:

է վերանորոգել քրեակատարողական հիմնարկների խցերը՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Խցերի առնվազն 15%-ի վերանագորումը պետք է ավարտին հասցվի մինչև 2022թ. 1-ին կիսամյակը՝ բարելավելով ազատազրկված անձանց պահման պայմանները և նվազեցնելով նրանց նկատմամբ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ցուցաբերման ռիսկերը[177]:

Ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավումը, քրեակատարողական հիմնարկների օպտիմալացումը և արդիականացումն ամրագրվել է որպես քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության առանցքային նպատակ[178]: Կարևորվում է ինչպես ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ նվազագույն բնակելի տարածությամբ (4մ²), այնպես էլ մարդկային արժանապատվության հետ համատեղելի պայմաններով ապահովելու անհրաժեշտությունը: Ռազմավարության միջոցառումների ծրագրով նախատեսված է որոշ հիմնարկների փակում, դրանց փոխարեն նորերի կառուցում, տեղափոխում և լուծարում: Նախատեսված է «Արմավիր» ՔԿՀ-ում անհրաժեշտ պայմաններ ստեղծել կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար, հիմնարկն ապահովել օդափոխության համակարգով և զարգացնել հիմնարկի բժշկական ստացիոնար մասնաշենքի կարողությունները: Ակնկալվում է, որ նշված միջոցառումների իրականացման արդյունքում կերաշխավորվեն օրենքի առջև բոլորի հավասարությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը, ազատությունից զրկված անձանց համար պահման պատշաճ պայմաններ կապահովվեն:

*ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ, նույնասեռական անձանց խցեր*





[177]«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշում, հավելված 2, http://bit.do/fNb8k:

[178]«ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թթ. ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թթ. միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թ. նոյեմբերի 28-ի թիվ 1717-Լ որոշում, հավելված 1, http://bit.do/fLtxb:

Ճիշտ է, քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավումը և ազատազրկված անձանց համար պահման պատշաճ պայմանների ապահովումը կարող են անուղղակիորեն հանգեցնել նաև ազատազրկված ԼԳԲՏ անձանց պայմանների բարելավմանը: Ավելին, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությամբ նախատեսվում է լուծել ազատազրկված անձանց կյանքի անհավասար պայմանների խնդիրը: Այդուհանդերձ, մտահոգության տեղիք է տալիս այն, որ նշված միջոցառումների շրջանակներում ԼԳԲՏ անձինք չեն դիտարկվում որպես հատուկ խոցելի խումբ, և նրանց համար հավասար պայմաններ ապահովելուն ուղղված հասցեական գործողություններ նախատեսված չեն:

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգում Պաշտպանն անդրադարձել է նաև ազատազրկված անձանց պահման պայմանների հետ կապված մի շարք խնդիրների, այդ թվում՝ սանիտարահիգիենիկ և ընդհանուր պայմաններին: Պահման պատշաճ պայմանների ապահովման հարցը Պաշտպանը կարևորել է քրեական ենթամշակույթի ազդեցությունը նվազեցնելու տեսանկյունից, ինչպես նաև շեշտադրել է ազատությունից զրկված անձանց ոչ իրավաչափ արտոնություն տրամադրելու պրակտիկան բացառելու կարևորությունը՝ հղում կատարելով այն իրողությանը, որ «զոն նայողներն» ապահովվում են ավելի լավ պայմաններ ունեցող խցերով[179]: Սակայն ԳԲՏ անձանց ամենավատ պայմաններով խցերում բնակեցնելը Պաշտպանի կողմից չի դիտարկվել որպես քրեական ենթամշակույթի հետևանք, ուստի հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ դիտարկումներ կամ առաջարկություններ չեն ներկայացվել հայեցակարգում:

## *2.5. Անձնական խուզարկություններ*

Անձնական խուզարկության հստակ չափանիշները սահմանված են Նելսոն Մանդելայի կանոններում, որոնք ամրագրում են օրինականության, անհրաժեշտության ու համաչափության, ինչպես նաև մերկացնելու և մարմնի խոռոչների զննության ծայրահեղ անհրաժեշտության սկզբունքները՝ խրախուսելով համապատասխան այլընտրանքների մշակումն ու կիրառումը: Կանոնները կոչ են անում հարգել խուզարկվող անձի արժանապատվությունն ու անձեռնմխելիությունը և ապահովել, որպեսզի զննությունը չօգտագործվի ոտնձգությունների, նվաստացումների ու ազատությունից զրկված անձի անձնական կյանքի անձեռնմխելիությունն անհարկի խախտելու համար: Կանոնները նաև սահմանում են, որ հաշվետվողականության համար անհրաժեշտ է պահպանել խուզարկության վերաբերյալ գրառումները, որոնցում պետք է ներկայացվեն խուզարկության պատճառները, այն անցկացնող անձանց տվյալները և խուզարկության

[179] ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգ», Երևան, 2018թ., էջեր 21-23, http://bit.do/fLtwD:

արդյունքները[180]: Եվրոպական բանտային վերանայված կանոնները սահմանում են, որ խուզարկություններն անցկացնելիս աշխատակիցները պետք է հարգանքով վերաբերվեն խուզարկվողների արժանապատվությանը: Խուզարկվող անձինք չպետք է այդ գործընթացի հետևանքով նվաստացվեն: Կանոններն արգելում են անցկացնել բանտարկյալների մարմինների ներքին ֆիզիկական խուզարկություններ: Ինչ վերաբերում է մարմնի ինտիմ մասերի զննությանը, ապա կանոնները պահանջում են, որպեսզի այն անցկացվի միայն բժշկի կողմից[181]:

Անձնական խուզարկության անցկացման վերաբերյալ կարգավորումներ նախատեսված են նաև ներպետական օրենսդրությամբ: Ոլորտը կանոնակարգող իրավական ակտերը սահմանում են, որ հիմնարկներ արգելված իրերի, առարկաների և սննդամթերքի ներթափանցումը, ինչպես նաև քրեական գործի քննությանը խոչընդոտելը կամ նոր հանցագործություն կատարելը կանխարգելելու նպատակով հիմնարկների վարչակազմի կողմից իրականացվում են ազատազրկված անձանց անձնական խուզարկություններ, խցերի կամ կացարանների խուզարկություններ, ինչպես նաև նրանց իրերի զննումներ և առգրավումներ: Նշված գործողությունները կատարվում են առնվազն 2 քրեակատարողական ծառայողի մասնակցությամբ: Կալանավորված անձինք կամ դատապարտյալներն անձնական խուզարկության են ենթարկվում հիմնարկ ընդունվելիս և ազատվելիս, դրա տարածքից իրավական ցանկացած այլ հիմքով դուրս գալիս, տեսակցությունից առաջ և հետո, խուց, կացարան կամ պատժախուց տեղափոխվելիս, քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալուց կամ իրենց պաշտպանի հետ հանդիպելուց առաջ և հետո: Պահանջվում է անձնական խուզարկությունն իրականացնել այնպես, որ այդ ընթացքում չոտնահարվեն անձի պատիվն ու արժանապատվությունը, իսկ խուզարկություն անցկացնող աշխատակիցների վերաբերմունքը լինի հարգալից՝ բացառելով ազատազրկված անձին նվաստացնելու ցանկացած դրսևորում[182]:

Ինչ վերաբերում է ազատազրկված ԼԳԲՏ անձանց, ապա նրանք հատուկ զգայունություն ունեն անձնական խուզարկության նկատմամբ: Կրկնակի խոցելի են տրանս անձինք հատկապես այն դեպքում, երբ արդեն փոխել են սեռը կամ սեռափոխության փուլում են: Խուզարկության ժամանակ տրանս անձանց խոցելիությունն արձանագրվել է նաև ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման հարցերով հատուկ զեկուցողի կողմից: Նշված է, որ նվաստացնող և մարմնի ինվազիվ զննումները կարող են ազատազրկված տրանսգենդեր անձանց նկատմամբ

[180]The United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (the Nelson Mandela Rules), Rules 50-53, http://bit.do/fMuXu.

[181]European Prison Rules, Rules 54.1-54.10, http://bit.do/fNcbK.

[182]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 72, կետ 1, http://bit.do/fNccb: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու» մասին ՀՀ օրենք, հոդված 33, կետ 2, http://bit.do/fNcci: «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, բաժին 10, http://bit.do/fMwqb:

խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի պատճառ դառնալ[183]: Խուզարկությունը մեծացնում է նվաստացման, խտրականության կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու հավանականությունը, քանի որ կարող է առաջանալ մերկանալու և ֆիզիկական շփման անհրաժեշտություն: Բացի այդ, խուզարկությունը կարող է իրականացվել խտրական ձևով, օրինակ՝ ԼԳԲՏ անձինք կարող են ավելի հաճախ ենթարկվել խուզարկության, քան ազատությունից զրկված մյուս անձինք կամ կարող են կիրառվել խուզարկության այնպիսի մեթոդներ, որոնք խտրական են[184]:

Ներպետական օրենսդրությամբ արգելվում է անձնական խուզարկություն կատարելը հակառակ սեռի ներկայացուցչի կողմից [185]: Այսինքն՝ ազատությունից զրկված անձի խուզարկությունն իրականացվում է նույն սեռի աշխատակցի կողմից: Միջազգային չափանիշները ևս սահմանում են, որ ազատազրկված անձի խուզարկությունը պետք է իրականացվի միայն նույն սեռի աշխատակցի կողմից[186]: Այս չափանիշն ընդհանուր է և վերաբերում է ազատությունից զրկված բոլոր անձանց, ինչը նշանակում է, որ ԼԳԲՏ անձանց հնարավորություն չի տրվում ընտրել խուզարկությունն անցկացնող աշխատակցի սեռը: Այդ պատճառով խոցելի վիճակում են հայտնվում հատկապես տրանս անձինք, քանի որ սահմանված պահանջից բխում է, որ տրանս կանայք խուզարկության են ենթարկվում արական սեռի աշխատակցի կողմից, իսկ տրանս տղամարդիկ՝ իգական:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաշվի առնելով անձնական խուզարկության անցկացման ժամանակ ազատազրկված ԼԳԲՏ անձանց խոցելիությունը՝ խորհուրդ է տրվում ընդհանուր պահանջից բացառություն կատարել և ԼԳԲՏ անձանց խուզարկություն կատարող աշխատակցի սեռն ընտրելու իրավունք տալ[187]: Տրանսգենդեր անձանց նման հնարավորություն տալու մասին պահանջ ներկայացված է նաև «Հատուկ կարիքներ ունեցող բանտարկյալների վերաբերյալ ձեռնարկում»[188]:

Ինչ վերաբերում է առանձին երկրների փորձին, ապա Շոտլանդիայի Բանտային ծառայությունն ազատազրկված անձանց անձնական խուզարկությունը կազմակերպելիս հիմք է ընդունում անձի գենդերային ինքնությունը: Իսկ այն

---

[183]Report of the Special Rapporteur on torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment, 5 January 2016, A/HRC/31/57, para. 36, http://bit.do/fNcdD.

[184]«Միջազգային բանտային բարեփոխում», «ԼԳԲՏԻ անձինք ազատազրկման վայրերում. կանխարգելիչ մշտադիտարկման հիմունքները», Ազատազրկման վայրերում մշտադիտարկման ձեռնարկ, 2015թ., էջ 12, http://bit.do/fMuQa:

[185]«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, բաժին 10, կետ 88, http://bit.do/fMwqb:

[186]“United Nations Rules for the Treatment of Women Prisoners and Non-custodial Measures for Women Offenders (the Bangkok Rules)”, Rule 19, http://bit.do/fMwuf. European Prison Rules, Rule 54.5, http://bit.do/fNcbK.

[187]«Միջազգային բանտային բարեփոխում», «ԼԳԲՏԻ անձինք ազատազրկման վայրերում. կանխարգելիչ մշտադիտարկման հիմունքները», Ազատազրկման վայրերում մշտադիտարկման ձեռնարկ, 2015թ., էջ 12, http://bit.do/fMuQa:

[188]United Nations Office on Drugs and Crime, “Handbook on Prisoners with Special Needs”, New York, 2009, page 118, http://bit.do/fMsep.

դեպքերում, երբ անձի սեռը պարզ չէ, նրան հարցնում են, թե խուզարկությունն ինչ սեռի աշխատակից անցկացնի[189]:

Հարավային Աֆրիկայում Քեյփթաունի ոստիկանությունը Gender Dynamix հկ-ի հետ համատեղ, որն աջակցություն, խորհրդատվություն և տեղեկատվություն է տրամադրում տրանսգենդեր անձանց, մշակել է ստանդարտ օպերացիոն ընթացակարգեր, որոնց նպատակն է երաշխավորել օրենքի հետ խնդիրներ ունեցող տրանսգենդեր անձանց անվտանգությունը: Ընթացակարգերի հիմնական պահանջներից մեկը վերաբերում է զննման անցկացմանը և սահմանում է, որ եթե տրանսգենդեր անձը ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ, որտեղ նշվում է իր սեռը, ապա նա կարող է պահանջել, որպեսզի զննումն անցկացվի ոստիկանության նույն սեռի ծառայողի կողմից, անգամ եթե սեռափոխության վիրահատություն չի կատարվել[190]:

Արգենտինայում Դաշնային քրեակատարողական ծառայությունների կողմից 2016թ. մշակվել են տրանս անձանց խուզարկության վերաբերյալ ընթացակարգային ուղեցույցներ, որոնք սահմանում են, թե ինչպես պետք է անցկացվեն արտաքին բժշկական զննումները և անձնական խուզարկությունները: Խուզարկությունների վերաբերյալ նշված է, որ անհրաժեշտ է այլընտրանքային միջոցներ փնտրել: Երբ մերկ խուզարկություններն անխուսափելի են, բանտի աշխատակազմը պետք է ստուգի միայն հագուստը և իրերը՝ մարմնի խուզարկության անցկացումը թողնելով բուժանձնակազմին: Ուղեցույցները նաև նախատեսում են, որ բանտի աշխատակիցները չեն կարող ֆիզիկական, բանավոր և տեսողական շփումներ ունենալ այն անձի հետ, որը հետազոտվում է բուժանձնակազմի կողմից, ինչպես նաև շեշտում են բանտի անձնակազմի համար համապատասխան վերապատրաստումներ անցկացնելու անհրաժեշտությունը:

Կոլումբիայում Ուղղիչ հիմնարկների մասին ընդհանուր կանոնակարգը սահմանում է, որ տրանս անձանց պետք է անհատապես հարցնել՝ նրանք ցանկանում են, որ իրենց խուզարկությունն անցկացնի տղամարդ, թե կին հսկիչ: Այն նաև հատուկ կարգավորումներ է նախատեսում տրանս այցելուների համար[191]:

Ներպետական իրավական կարգավորումները, ինչպես արդեն նշել ենք, նախատեսում են անձնական խուզարկությունների անցկացման կարգ և պայմաններ, որոնք ընդհանուր են բոլոր ազատազրկված անձանց համար և բացառություններ չեն սահմանում ԼԳԲՏ անձանց համար: Ուստի կարծում ենք, որ անհրաժեշտ է մշակել ազատազրկված ԼԳԲՏ անձանց անձնական խուզարկության անցկացման հատուկ ընթացակարգ, որը նկատի կառնի նրանց ներհատուկ կարիքները՝ նախատեսելով

[189]Scottish Prison Service, "Gender Identity and Gender Reassignment Policy", 2014, http://bit.do/fNceW.

[190]«Միջազգային բանտային բարեփոխում», «ԼԳԲՏԻ անձինք ազատազրկման վայրերում. կանխարգելիչ մշտադիտարկման հիմունքները», Ազատազրկման վայրերում մշտադիտարկման ձեռնարկ, 2015թ., էջ 12, http://bit.do/fMuQa:

[191]Association for the Prevention of Torture, "Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide", 2018, Geneva, page 77, http://bit.do/fM94i.

ինչպես աշխատակցի սեռն ընտրելու հնարավորություն, այնպես էլ պաշտպանության այլ անհրաժեշտ երաշխիքներ:

### *2.6. Առողջապահական ծառայությունների հասանելիություն*

Քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված ԼԳԲՏ անձինք խոցելի են նաև առողջապահական ծառայությունների հասանելիության տեսանկյունից: Հիմնական խնդիրը ԼԳԲՏ անձանց նկատմամբ կանխակալ կամ խտրական վերաբերմունքն է, ինչի հետևանքով նրանց կարող են մերժել համապատասխան բժշկական օգնության տրամադրումը կամ նրանք կարող են բախվել առողջապահական ոլորտի մասնագետների վատ վերաբերմունքի: ԼԳԲՏ անձանց առողջական վիճակը խոցելի է դարձնում նաև այն, որ նրանք պահվում են հիմնարկների ամենախոնավ խցերում կամ կացարաններում: Բացի այդ, ԳԲՏ անձինք առավել հաճախ են ենթարկվում սեռական բռնության կամ շահագործման, ինչը մեծացնում է սեռական ճանապարհով փոխանցվող վարակների, այդ թվում՝ ՄԻԱՎ-ի տարածման վտանգը: Ինչ վերաբերում է սեռական բռնության հետևանքով առաջացած առողջական խնդիրներին (վնասվածքներ կամ հոգեբանական տրավմաներ), ապա մտահոգության տեղիք է տալիս այն, որ նշված խմբի անձինք չեն ստանում բավարար բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական օգնություն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կարևորվում է, որպեսզի ԼԳԲՏ անձինք ազատությունից զրկված այլ անձանց հետ հավասար հիմունքներով հասանելիություն ունենան բժշկական օգնության և սպասարկման ծառայություններին[192], որոնք պետք է ներհյուսված և համահունչ լինեն համայնքում տրամադրվող ծառայություններին: Բացի այդ, պահանջվում է համապատասխան քայլեր ձեռնարկել ԼԳԲՏ անձանց հատուկ խնամքի կազմակերպման ուղղությամբ: Այս տեսանկյունից կարևորվում է, որպեսզի քրեակատարողական հիմնարկներ մուտք գործելուն պես ԼԳԲՏ անձինք սկրինինգային հետազոտություն անցնեն, իսկ ԼԳԲՏ համայնքի այն ներկայացուցիչները, ովքեր սեռական բռնության զոհ են դարձել, բռնության հետևանքով ստացված վնասվածքների և տրավմաների բավարար բուժում և հոգեկան առողջության պահպանմանն ուղղված ծառայություններ ստանան:

ԽԿԵ-ն իր 9-րդ տարեկան զեկույցում ազատազրկված ԼԳԲՏ անձանց կարիքներին ներհատուկ ծառայությունների, օրինակ՝ հոգեկան առողջության խնամքի բացակայությունը կապում է պետական պաշտոնյաների ոչ բավարար վերապատրաստված լինելու և ազատազրկված անձանց ինքնանույնականացման, դասակարգման, ռիսկերի գնահատման և տեղաբաշխման քաղաքականությունների և մեթոդների բացակայության հետ[193]: Ջոկյակարտյան 9-րդ սկզբունքը սահմանում է, որ

---

[192]«Միջազգային բանտային բարեփոխում», «ԼԳԲՏԻ անձինք ազատազրկման վայրերում. կանխարգելիչ մշտադիտարկման հիմունքները», Ազատազրկման վայրերում մշտադիտարկման ձեռնարկ, 2015թ., էջ 16, http://bit.do/fMuQa:

[193]9th Annual Report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 22 March 2016, CAT/C/57/4, para. 60, http://bit.do/fNj75.

անհրաժեշտ է ապահովել անազատության մեջ գտնվող անձանց կարիքներին համապատասխան բժշկական խնամքի և խորհրդատվության ծառայությունների պատշաճ հասանելիությունը՝ ճանաչելով անձանց սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված հատուկ կարիքները: Վերարտադրողական առողջության պահպանման տեսանկյունից կարևոր է ապահովել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնամքի և բուժման, հորմոնալ կամ այլ թերապիայի, ինչպես նաև սեռափոխության վիրահատության հասանելիությունը՝ առանց խտրականության և ըստ անհրաժեշտության[194]:

Այս առումով մտահոգիչ է այն, որ Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում առողջապահական ծառայությունները ոչ միայն համահունչ չեն ազատազրկված ԼԳԲՏ անձանց ներհատուկ կարիքներին, այլև այդ ծառայությունների որակը և հասանելիությունը խնդրահարույց են բոլոր ազատազրկված անձանց համար:

Օրինակ, հոգեբուժական ծառայության հասանելիության ապահովման տեսանկյունից առկա են մի շարք խնդիրներ, որոնք ընդհանուր են բոլոր ազատազրկված անձանց համար և վերաբերում են բուժանձնակազմի համալրվածությանը և մասնագիտական որակավորմանը, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ազատազրկված անձանց ստացիոնար բուժման կազմակերպմանը, քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս անձանց հոգեկան առողջության վիճակի գնահատման և սկրինինգային հետազոտություն անցկացնելու համար անհրաժեշտ ծրագրերի և մասնագետների բացակայությանը և այլն: Ինչ վերաբերում է ազատազրկված ԼԳԲՏ անձանց, ապա առկա հոգեբուժական օգնության և սպասարկման ծառայությունները չեն ներառում ոչ միայն նշված խմբի, այլև բռնության ենթարկված ԳԲՏ անձանց կարիքներին համահունչ մասնագիտական աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները: Սեռական բռնության ենթարկված ԳԲՏ անձանցից բացի համապատասխան վերապատրաստում անցած հոգեբույժների բացակայության պատճառով նեղ մասնագիտական ծառայություններ և խորհրդատվություն ստանալու հնարավորությունից զրկվում են նաև ազատազրկման պահին հորմոնաթերապիայի փուլում գտնվող, սեռափոխության վիրահատություն կատարած կամ նման ծառայությունների կարիք ունեցող տրանս անձինք:

Անդրադառնալով ՄԻԱՎ-ի խնամքին և բուժմանը՝ նշենք, որ կալանավորված անձինք և դատապարտյալները ներառված են ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության ենթակա խմբում[195]: ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. նոյեմբերի 22-ի թիվ 75-

[194]The Yogyakarta Principles on the Application of International Human Rights Law in Relation to Sexual Orientation and Gender Identity, 2007, Principle 9B, http://bit.do/fM3Q3.

[195]«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, http://bit.do/fL8Qi:

Ն հրամանի համաձայն[196]՝ քրեակատարողական հիմնարկներում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվությունը և հետազոտությունն իրականացվում է «Կալանավորված անձանց և դատապարտյալների՝ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ բուժաշխատողների կողմից նախաթեստային և հետթեստային խորհրդատվության ու հետազոտության իրականացման կարգով»[197]: «Հակառետրովիրուսային դեղերի կիրառմամբ ՄԻԱՎ վարակի բուժման և կանխարգելման կլինիկական ուղեցույցի» համաձայն[198]՝ քրեակատարողական հիմնարկներում գտնվող ՄԻԱՎ վարակով պացիենտների դիսպենսերային հսկողությունը, այդ թվում՝ նաև լաբորատոր գործիքային ախտորոշիչ հետազոտությունները, ուղեկցող հիվանդությունների ախտորոշումը և բուժումը, ՀՌՎ դեղերի տրամադրումը, դրանց կողմնակի ազդեցությունների հայտնաբերման դեպքում համապատասխան միջոցառումների իրականացումը կազմակերպվում են քրեակատարողական հիմնարկների («Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի) բժիշկների կողմից: Հիմնարկներից ուղեգրված ՄԻԱՎ վարակով պացիենտների արյան փորձանմուշների իմունաբանական և վիրուսաբանական հետազոտությունները կատարվում են «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ում: Հիմնարկներում գտնվող ՄԻԱՎ վարակով պացիենտների դիսպենսերային հսկողությունն իրականացնում են ՓԲԸ-ի մասնագետները, որոնք նաև հիմնարկների («Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի) բժիշկներին տրամադրում են խորհրդատվություն ՄԻԱՎ վարակով պացիենտի վարման հարցերով՝ պլանային կարգով և ըստ անհրաժեշտության: ՀՌՎ դեղերի տրամադրումն իրականացվում է «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից[199]:

Այս առումով մտահոգության տեղիք է տալիս ոչ թե ՄԻԱՎ-ի խնամքի և բուժման ծառայությունների հասանելիությունը, այլ այն, որ կանխարգելման ուղղությամբ իրականացվող աշխատանքները բավարար չեն: Քրեակատարողական հիմնարկներում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունն անցկացվում է տարեկան 2 անգամ[200], ինչը, մեր կարծիքով, բավարար չէ վարակի տարածման ռիսկերը կանխարգելելու կամ նվազեցնելու տեսանկյունից, քանի որ ՄԻԱՎ հետազոտության անցկացման և անձի՝ քրեակատարողական հիմնարկ մուտք գործելու ժամանակահատվածները կարող են չհամընկնել: Ըստ պաշտոնական պարզաբանման՝ քրեակատարողական հիմնարկում գտնվելու

---

[196]«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. նոյեմբերի 22-ի թիվ 75-Ն հրաման, http://bit.do/fNchx:

[197]«Կալանավորված անձանց և դատապարտյալների ՄԻԱՎ վարակի վերաբերյալ բուժաշխատողների կողմից նախաթեստային և հետթեստային խորհրդատվության ու հետազոտության իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2013թ. հուլիսի 10-ի թիվ 733-Ն որոշում, http://bit.do/fL8Qk:

[198]«Հակառետրովիրուսային դեղերի կիրառմամբ ՄԻԱՎ վարակի բուժման և կանխարգելման կլինիկական ուղեցույց», հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 2017թ. օգոստոսի 7-ի թիվ 2429-Ա հրամանով և վերախմբագրվել 2017թ. նոյեմբերի 8-ի թիվ 3225-Ա հրամանի հիման վրա, Երևան, 2017թ., http://bit.do/fNci7

[199]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 21-002 գրության պատասխան, http://bit.do/fNcnQ:

[200]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-74 գրության պատասխան, http://bit.do/fNcn9:

ժամանակահատվածում ազատազրկված անձանց միջև ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքեր առայժմ չեն արձանագրվել[201], սակայն անհրաժեշտ է համապատասխան հետազոտությունն անցկացնել ազատազրկման նախնական փուլում, ինչը կօգնի ՄԻԱՎ կարգավիճակը պարզել, համապատասխան խնամքն ու բուժումը սկսել, ինչպես նաև վարակի հնարավոր փոխանցումը կանխել անձի՝ հիմնարկ մուտք գործելու հենց սկզբից՝ նպաստելով ոչ միայն ԼԳԲՏ, այլև մնացած ազատազրկված անձանց առողջության պահպանմանը:

Բացի այդ, կարևոր է, որպեսզի ազատազրկված անձանց շրջանում իրազեկման պատշաճ աշխատանքներ իրականացվեն, ինչպես նաև ազատազրկված անձանց տրամադրվեն պահպանակներ: Ի պատասխան մեր հարցմանը՝ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ն տեղեկացրել է, որ կենտրոնն ազատազրկված անձանց պահպանակների տրամադրման գործառույթ չի իրականացնում[202]: «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ը ևս ազատազրկված անձանց պահպանակներ չի տրամադրում, սակայն տեղեկացրել է, որ վերջիններիս ձեռքբերման կամ գնման նպատակով ներկայումս աշխատանքներ են տարվում[203]: Պահպանակներ չտրամադրելու հետևանքով ՄԻԱՎ վարակ ձեռք բերելու կամ այլ ազատազրկված անձանց փոխանցելու վտանգի առջև են կանգնում հատկապես ԳԲՏ անձինք, քանի որ նրանք քրեակատարողական հիմնարկներում ոչ միայն սեռական բռնության են ենթարկվում, այլև սեռական ծառայություններ են մատուցում: Այս փաստն արձանագրվել է Դիտորդների խմբի կողմից: 2011-2012թթ. տարեկան հաշվետվության մեջ նշված է, որ այն հիմնարկներում, որտեղ ազատազրկված անձանց որոշակի գումարի, ծխախոտի կամ այլ իրերի դիմաց հնարավորություն է տրվում ազատ տեղաշարժվել հիմնարկի տարածքում, ԳԲՏ անձինք սեռական ծառայություններ են մատուցում «մաքուր կյանքով» ապրող անձանց[204]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՄԻԱՎ-ի և սեռավարակների տարածման հաճախականությունը տրանս կանանց շրջանում 40 անգամ ավելի բարձր է, քան ընդհանուր բնակչության շրջանում[205]: ԽԿԵ-ն իր 9-րդ տարեկան զեկույցում մտահոգություն է հայտնել այն մասին, որ ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ դրսևորվող վատ վերաբերմունքի և խոշտանգումների դեպքերի վերաբերյալ վիճակագրության բացակայությունը հանգեցնում է նրան, այս խմբի անձանց հիմնախնդիրները մնում են անտեսված՝ նշելով, որ ՄԻԱՎ-ի և

---

[201]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 21-002 գրության պատասխան, http://bit.do/fNcnQ, թիվ 20-90 գրության պատասխան, http://bit.do/fNcoA:

[202]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 21-002 գրության պատասխան, http://bit.do/fNcnQ, թիվ 20-90 գրության պատասխան, http://bit.do/fNcoA:

[203]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-91 գրության պատասխան, http://bit.do/fNcpg:

[204]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգը 2011-2012 թվականներին», Երևան, 2013թ., էջ 30, http://bit.do/fNcpq:

[205]Blueprint for the Provision of Comprehensive Care for Trans Persons and Their Communities in the Caribbean and other Anglophone Countries, page 3, http://bit.do/fNj4W.

սեռավարակների տարածվածության այս անհանգստացնող տարբերությունը կարող է մնալ անտեսանելի, եթե տվյալները չհավաքագրվեն ըստ գենդերային ինքնության[206]:

Թայլանդում «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության կողմից իրականացված պիլոտային ծրագրի շրջանակներում 2004թ. Մին Բուրի բանտում որպես առողջապահական ծրագրերի բաղկացուցիչ մաս տրամադրվել են պահպանակներ, ինչից հետո էականորեն նվազել են ազատազրկված անձանց միջև ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքերը: Չնայած սեռական հարաբերությունների հարցը խնդրահարույց է, ղեկավարությունն ընդունել է, որ փոխանցման հիմնական պատճառը հենց այդ հարաբերություններն էին[207]: Այս տեսանկյունից կարևորվում է, որպեսզի պահպանակները տրամադրվեն այնպես, որ անձի սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը կամ սեռական վարքագիծը չբացահայտվեն ինչպես աշխատողների, այնպես էլ ազատությունից զրկված մյուս անձանց շրջանում:

Անդրադառնալով ներպետական կարգավորումներին՝ նշենք, որ ազատազրկված անձանց առողջության իրավունքը և այն ապահովելու պետության պարտավորությունն ամրագրված են քրեակատարողական ոլորտը կանոնակարգող օրենսդրության մեջ: ՀՀ Քրեակատարողական օրենսգիրքը[208] և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը[209] սահմանում են, որ յուրաքանչյուր ազատազրկված անձ առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ և բժշկական օգնություն ստանալու, ինչպես նաև իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին զննվելու իրավունք ունի: Սակայն խնդրահարույց է այն, որ նշված իրավական ակտերը չեն ամրագրում բժշկական օգնություն ստանալու ընթացքում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքի պահանջը:

2019թ. վերանայվել և ամբողջությամբ նոր խմբագրությամբ հաստատվել է ազատազրկված անձանց բժշկական օգնությունը և սպասարկումը կանոնակարգող մայր փաստաթուղթը՝ ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշումը[210]: Կարևորելով բանտային առողջապահության ոլորտում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 19-ի նիստի թիվ 2 արձանագրային որոշմամբ հաստատվել է «ՀՀ քրեակատարողական

---

[206] 9th Annual report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 22 March 2016, CAT/C/57/4, para. 59, http://bit.do/fNj5q.

[207] Association for the Prevention of Torture, "Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide", 2018, Geneva, page 89, http://bit.do/fM94i.

[208] ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 12, http://bit.do/fL9Eo:

[209] «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 13, http://bit.do/fL9Ep:

[210] «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշում (որոշումը խմբ. 15.08.19 N 1092-Ն), http://bit.do/fL9Eq:

հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացման» հայեցակարգը[211]: Հայեցակարգով առաջարկվող մոտեցումներին համահունչ՝ ՀՀ կառավարությունը 2018թ. մարտի 1-ին ընդունել է «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ ստեղծելու մասին» թիվ 204-Ն որոշումը[212], որով ազատազրկված անձանց առողջության իրավունքի ապահովումը քրեակատարողական ծառայության փոխարեն իրականացվում է նշված ՊՈԱԿ-ի կողմից: Ազատազրկված անձանց մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների որակի բարելավումն ամրագրվել է նաև որպես քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության ուղղություն, որի նպատակները միտված են քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայության արդիականացմանը[213]:

Սակայն մտահոգիչ է այն, որ ոլորտի բարեփոխմանն ուղղված վերոնշյալ նախաձեռնությունների շրջանակներում անդրադարձ չի կատարվում ազատազրկված ԼԳԲՏ անձանց առողջապահական կարիքների ուսումնասիրությանը և քրեակատարողական հիմնարկների կողմից տրամադրվող ծառայություններն այդ կարիքներին համահունչ դարձնելուն:

## *2.7. Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ*

Ազատազրկված ԼԳԲՏ անձանց շրջանում բարձր է հոգեկան առողջության որոշ խնդիրների առաջացման հավանականությունը, օրինակ՝ դեպրեսիա, տագնապայնություն, հոգեներգործուն նյութերից կախվածություն, ինքնավնասումներ և ինքնասպանություն կատարելու հակումներ և այլն: Պատճառները կապված են քրեակատարողական հիմնարկներում նրանց նկատմամբ դրսևորվող խտրական վերաբերմունքի, խարանի, շարունակական նվաստացման, սահմանափակ սոցիալական շփումների հետ և այլն, որոնք ավելի են սրում մեկուսացման զգացումը՝ բացասաբար ազդելով ոչ միայն նրանց հոգեկան առողջության վիճակի և միջանձնային հարաբերությունների, այլև սոցիալական վերաինտեգրման հեռանկարների վրա: Հոգեբանական աջակցության, հոգեկան առողջության պահպանման հատուկ խնամքի և հսկողության կարիք ունեն հատկապես սեռական բռնության ենթարկված ԼԳԲՏ անձինք, որոնց շրջանում բարձր է նաև ինքնավնասում կամ ինքնասպանություն կատարելու հավանականությունը: Ազատազրկված տրանս անձանց դեպքում նշված խնդիրները կարող են առաջանալ հատուկ

[211] «5. ՀՀ քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 19-ի նիստի թիվ 2 արձանագրությունից քաղվածք, http://bit.do/fL9Es:

[212] «Քրեակատարողական բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության 2018թ. մարտի 1-ի թիվ 204-Ն որոշում, http://bit.do/fL9Ev:

[213] «ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թթ. ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թթ. միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թ. նոյեմբերի 28-ի թիվ 1717-Լ որոշում, հավելված 1, http://bit.do/fLtxb:

առողջապահական ծառայությունների բացակայության պատճառով[214], ուստի խորհուրդ է տրվում հորմոնաթերապիա անցնող կամ սեռափոխության փուլում գտնվող տրանս անձանց առողջապահական և հոգեբուժական կարիքներին առանձնահատուկ ուշադրություն դարձնել[215]:

Հիմք ընդունելով վերոնշյալ խնդիրները՝ ազատազրկված ԼԳԲՏ անձանց հետ իրականացվող սոցիալ-հոգեբանական աշխատանքները մի քանի ուղղություններով պետք է կազմակերպել: Նախ անհրաժեշտ է բարձրացնել հոգեբանական ծառայությունների որակը՝ մշակելով և ներդնելով խորհրդատվությունների և խնամքի ծրագրեր: Այդ ծրագրերը մշակելիս պետք է նկատի ունենալ հատկապես սեռական բռնության կամ շահագործման հետևանքով տուժած ԼԳԲՏ անձանց կարիքները և առանձնահատկությունները: Սեռական բռնության դեպքերը կանխարգելելու համար անհրաժեշտ է քրեակատարողական հիմնարկ մուտք գործելուն պես անցկացնել ազատազրկված բոլոր անձանց անհատական գնահատում՝ պարզելու համար՝ նրանք վտանգ են ներկայացնում են այլոց համար, թե կարող են սեռական բռնության զոհ դառնալ: Բացի այդ, ոչ միայն սեռական բռնության ենթարկվելու դեպքում, այլև ողջ ազատազրկման ընթացքում ԼԳԲՏ անձինք պետք է ստանան պատշաճ իրավաբանական օգնություն և խորհրդատվություն: Այս տեսանկյունից կարևոր է, որպեսզի ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում մասնագիտացած հկ-ների կոնտակտային տվյալները հասանելի լինեն նրանց:

Անդրադառնալով Հայաստանի քրեակատարողական հիմնարկներին՝ նշենք, որ սոցիալ-հոգեբանական աշխատանքների հարցն առհասարակ խնդրահարույց է: Այդ աշխատանքները բարելավման կարիք ունեն: Արձանագրված խնդիրներն առնչվում են նշված աշխատանքների ոչ արդյունավետ կազմակերպմանը, մասնագետների ոչ բավարար թվին, աշխատանքային պայմանների, մասնագիտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմի և մեթոդական ուղեցույցների, ազատազրկված անձանց սոցիալ-հոգեբանական կարիքների գնահատման գործիքակազմի բացակայությանը և այլն: Բացի այդ, հոգեբանները չունեն բավարար գիտելիքներ, նրանց համար չեն կազմակերպվում մասնագիտական վերապատրաստումներ[216]:

---

[214]Glezer, A.; McNiel, E., D.; Binder, L., R.; “Transgendered and incarcerated: A review of the literature, current policies and laws, and ethics”, J Am Acad Psychiatry Law, 2013;41:551–559, http://bit.do/fMJad. Brown, G., R., (2009), “Recommended Revisions to the World Professional Association for Transgender Health’s Standards of Care Section on Medical Care for Incarcerated Persons with Gender Identity Disorder”, International Journal of Transgenderism, 11:2, http://bit.do/fNv6N.

[215]Schweikart, J., S.; “Appropriate Placement and Treatment of Transgender Prisoners: Constitutional Concerns and Arguments for Alternative Housing and Treatment Policies”, American Medical Association, 2018, page 9, http://bit.do/fMiQi.

[216]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «Ինքնավնասում կատարած ազատազրկված անձանց հետ կատարվող աշխատանքների առանձնահատկությունները», 2020թ., http://bit.do/fNApQ: ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2019թ. գործունեության վերաբերյալ տարեկան զեկույց», Երևան, 2020թ., էջեր 284-289, http://bit.do/fMPYf:

Ինչ վերաբերում է ազատազրկված ԼԳԲՏ անձանց, ապա խնդիրն այն է, որ սոցիալ-հոգեբանական աշխատանքները համահունչ չեն նրանց կարիքներին:

Ազատազրկված անձանց հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնելու, այդ նպատակով քրեակատարողական հիմնարկներում գործող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանումների գործունեության կարգը սահմանում է ՀՀ արդարադատության նախարարի 2016թ. հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանը[217], որի համաձայն՝ ազատազրկված անձանց հետ սոցիալ-հոգեբանական և իրավական աշխատանքները փուլերով են իրականացվում: Կալանավորված անձանց հետ նշված աշխատանքներն իրականացվում են 2 փուլով՝ նախնական և ընթացիկ: Դատապարտյալների հետ տարվող աշխատանքները նախատեսված են կալանք, որոշակի ժամկետով և ցմահ ազատազրկում պատիժների կատարման ժամանակ և իրականացվում են 3 փուլով՝ նախնական, ընթացիկ և ավարտական: Ճիշտ է, հրամանով ամրագրված է, որ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներում արգելվում է ազատազրկված անձանց նկատմամբ որևէ խտրականության, հոգեբանական բռնության կիրառումը և խոշտանգումները, սակայն խնդիրն այն է, որ այդ աշխատանքների կազմակերպման սկզբունքներն ընդհանուր են բոլոր ազատազրկված անձանց համար և նկատի չեն առնում ԼԳԲՏ անձանց առանձնահատկությունները:

Այսպես, թիվ 279-Ն հրամանը դրույթներ է նախատեսում բռնության ենթարկված դատապարտյալի հետ աշխատանք իրականացնելու վերաբերյալ, որի նպատակը հոգեկան կամ ֆիզիկական բռնության հետևանքով առաջացած հոգեբանական ցնցումները վերացնելը և ճգնաժամը հաղթահարելն է: Սակայն այս դրույթը վերաբերում է միայն հոգեկան և ֆիզիկական բռնության ենթարկված դատապարտյալներին: Սեռական բռնության հետևանքով առաջացած խնդիրների կարգավորման և նմանատիպ աշխատանքներ նաև կալանավորված անձանց հետ կազմակերպելու վերաբերյալ դրույթներ նշված հրամանով նախատեսված չեն: Ազատազրկված անձանց համատեղելիության առումով նախնական գնահատական տալու և կարիքների գնահատման ուղղությամբ ևս աշխատանքներ իրականացվում են, սակայն այս դեպքում էլ խնդիրն այն է, որ հրամանով նախատեսված չեն այն միջոցներն ու հստակ չափանիշները, որոնց հիման վրա պետք է ի հայտ բերվեն բարձր ռիսկայնություն ունեցող ազատազրկված անձինք: Այս պարագայում պարզ չէ, թե գնահատման արդյունքում կարող են բացահայտել սեռական բռնություն գործելու կամ այդ բռնության զոհ դառնալու տեսանկյունից ռիսկային անձանց, և ինչ առանձնահատուկ աշխատանքներ են իրականացվում նրանց հետ:

---

[217] «Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու և ՀՀ արդարադատության նախարարի 2008թ. մայիսի 30-ի թիվ 44-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2016թ. հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրաման, http://bit.do/fNeuy:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությամբ նախատեսվում է մշակել և ներդնել պատժի և վերահսկողության անհատական պլաններ, ռիսկերի և պահանջմունքների գնահատման գործիքներ: Ռազմավարությամբ շեշտվում է նշված գործընթացներում անչափահասներին հատուկ ուշադրություն դարձնելու կարևորությունը[218]: Սակայն մտահոգության տեղիք է տալիս այն, որ ազատազրկված ԼԳԲՏ անձանց ներհատուկ կարիքների և ռիսկերի գնահատմանը, պատժի և վերահսկողության պլանավորման առանձնահատկություններին ուղղված հասցեական գործողություններ ռազմավարությամբ նախատեսված չեն:

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգում Պաշտպանն առաջարկում է քրեակատարողական օրենսդրությունում հստակ չափանիշների հիման վրա ներդնել ազատազրկված անձանց մոտ ռիսկայնության և նրանց կողմից դրսևորված վարքագծի մշտական գնահատման կայուն մեխանիզմ[219]: Սակայն Պաշտպանի կողմից անդրադարձ չի կատարվում ազատազրկված ԼԳԲՏ անձանց ներհատուկ կարիքների գնահատման մեխանիզմի մշակման և ներդրման անհրաժեշտությանը:

Հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների, ինքնավնասումների դեպքերի, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց թիվը, ինչպես նաև այդ խնդիրների լուծմանն ուղղված գործնական բավարար քայլերի, նման դեպքերի կանխարգելմանն ուղղված համապատասխան կազմակերպական կառուցակարգերի բացակայությունը՝ արդարադատության նախարարի 2020թ. դեկտեմբերի 10-ի թիվ 513-Լ հրամանով հաստատվել է «Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2020թթ. ռազմավարությունը»[220]: Նշված ռազմավարությամբ նախատեսվում է բարելավել և հետևողականորեն կատարելագործել վերաբերելի օրենսդրությունը, մշակել և ներդնել ազատազրկված անձանց հոգեկան առողջության վիճակի գնահատման, ինքնասպանությունների, ինքնավնասումների կանխարգելման և ռիսկերի գնահատման գործիքակազմ, ապահովել հոգեբույժների և հոգեբանների օպտիմալ թվաքանակ, բարելավել մատուցվող ծառայությունների որակը:

Մինչդեռ մտահոգիչ է այն, որ ազատազրկված ԼԳԲՏ անձանց սոցիալ-հոգեբանական վիճակի բարելավմանը կամ տրամադրվող ծառայությունները նրանց կարիքներին համահունչ դարձնելուն ուղղված հասցեական գործողություններ նշված

---

[218]«ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թթ. ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թթ. միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թ. նոյեմբերի 28-ի թիվ 1717-Լ որոշում, հավելված 1, http://bit.do/fLtxb:

[219]ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգ», Երևան, 2018թ., էջեր 28-32, http://bit.do/fLtwD:

[220]«Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2020թթ. ռազմավարությունը և դրա իրականացման 2021-2022թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 513-Լ հրաման, http://bit.do/fMPWs:

ռազմավարությամբ նախատեսված չեն: Բացի այդ, անդրադարձ չի կատարվում սեռական բռնության ենթարկված ԼԳԲՏ անձանց, հորմոնաթերապիայի փուլում գտնվող, սեռափոխության վիրահատություն կատարած կամ այդ ծառայությունների կարիքն ունեցող ազատազրկված տրանս անձանց հոգեկան առողջության վիճակի գնահատման կարևորությանը: Ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման ու ռիսկերի գնահատման գործիքակազմի մշակման շրջանակներում չի կարևորվում սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված գործոնների կամ պատճառների ուսումնասիրությունը և կանխարգելման մեխանիզմների մշակման գործընթացում այդ գործոնները կամ պատճառները դիտարկելու անհրաժեշտությունը:

## *2.8. Սննդի կազմակերպում*

Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց սննդի ընդունումը կազմակերպվում է օրվա կարգացուցակով սահմանված ժամերին: Կալանավորված անձանց, փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալների սնունդը տրամադրվում է խցերում, իսկ կիսաբաց և բաց ուղղիչ հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալների սնունդը՝ ճաշարաններում[221]:

Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ մնացած ազատազրկված անձինք հրաժարվում են շփվել ԳԲՏ անձանց հետ և օգտվել նույն սպասքից, նրանց սնունդը լցվում է առանձին կաթսաների մեջ և բաժանվում առանձին շերեփներով կամ միանգամից տրամադրվում է առանձնացված տարրաներով:

Այս մասին բազմիցս ահազանգել են նաև տարբեր քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկված ԳԲՏ անձինք: Օրինակ, նույնասեռական անձը բողոքել է, որ իր նկատմամբ առկա խտրական վերաբերմունքի պատճառով ինքը «Վարդաշեն» ՔԿՀ-ում չի կարողանում օգտվել ճաշարանից և բաղնիքից[222]: «Արմավիր» ՔԿՀ-ում պահվող նույնասեռական անձը բարձրաձայնել է այն մասին, որ իր սնունդն առանձնացված է տրվում, իսկ սնունդը բերող անձի հետևից մյուս դատապարտյալները վիրավորական արտահայտություններ են հնչեցնում: Նշվածի վերաբերյալ արդարադատության նախարարությունը պարզաբանել է, որ «Արմավիր» ՔԿՀ-ում ճաշերը եփվում են ընդհանուր կաթսայում և բաժանվում են բոլոր տեղամասերում, իսկ ազատազրկված անձինք սնվում են ընդհանուր ճաշի կաթսաներում եփված և ճաշերի համար նախատեսված համապատասխան ամաններից[223]: «Աբովյան» ՔԿՀ կատարած այցելության ընթացքում Դիտորդների

---

[221]«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, բաժին 7, կետեր 56-57, http://bit.do/fLtww:
[222]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, թիվ 17-74 ընթացիկ հաշվետվություն, http://bit.do/fLtwo:
[223]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում դատապարտյալի նկատմամբ խտրական վերաբերմունք է դրսևորվում», 2018թ., http://bit.do/fLtwm:

խումբն արձանագրել է, որ նույնասեռական կինը չի օգտվում ճաշարանից, թեև նա վստահեցրել է, որ իրեն չեն արգելում լինել ճաշարանում՝ բոլորի հետ միասին[224]:

*ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ*





Սննդի տրամադրման ընթացքում ԳԲՏ անձանց նկատմամբ դրսևորվող խտրականության խնդիրն առկա է եղել նաև հիմնարկներում սննդի ապահովումը մասնավոր ընկերությանը պատվիրակելու գործընթացը մեկնարկելուց հետո[225]: 2020թ. մարտին «Արմավիր» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ Դիտորդների խումբն արձանագրել է, որ սնունդ տեղափոխող սայլակի ներքևի հատվածում մեկանգամյա օգտագործման տարրաներում տեղադրված է 3 բաժին սնունդ՝ նախատեսված նույնասեռական անձանց համար: Արդարադատության նախարարությունը պարզաբանել է, որ սննդի բաժանման գործընթացը կազմակերպելիս այն դեպքում, երբ դատապարտյալները չվարձատրվող աշխատանքների, փաստաբանական, քննչական կամ բժշկական գործողությունների մասնակցելու պատճառով խցում չեն, իրենց ցանկությամբ իրենց սննդի բաժինները նախապես լցվում են առանձին տարրաների մեջ և դրվում կերակրադռնակների վրա, որպեսզի աշխատանքից հետո կարողանան օգտվել հասանելիք սննդից[226]:

Այս պարզաբանումից կարող ենք եզրակացնել, որ վերոնշյալ դեպքերը նախարարության կողմից չեն դիտարկվում որպես սննդի տրամադրման ընթացքում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորում, հետևաբար կանխարգելման ուղղությամբ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվում:

---

[224]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2018թ. գործունեության հաշվետվություն», Հայաստան, 2019թ., էջեր 50-51, http://bit.do/fLtwp:

[225]ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն, «Արտ Լանչ» ապրանքանիշը ներկայացնող ընկերության սննդի ապահովման համակարգը գործում է արդեն բոլոր 12 քրեակատարողական հիմնարկներում, http://bit.do/fLtwK:

[226]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «Նույնասեռական անձանց համար նախատեսված սնունդը դեռևս մատուցվում է առանձին տարաներով», 2020թ., http://bit.do/fLtws:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ազատազրկված ԼԳԲՏ անձանց սննդի տրամադրման վերաբերյալ հատուկ կարգավորումներ կամ ընթացակարգեր նախատեսված չեն, սահմանված է ընդհանուր պահանջ, ըստ որի՝ անհրաժեշտ է ապահովել ԼԳԲՏ անձանց հավասար հասանելիությունը հիմնարկների կողմից մատուցվող բոլոր ծառայություններին՝ բացառելով խտրականության ցանկացած դրսևորում[227]:

Ինչ վերաբերում է ներպետական օրենսդրությանը, ապա ոլորտը կարգավորող իրավական ակտերով սննդի կազմակերպման ընթացքում ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության արգելքի, խտրականություն դրսևորող անձանց պատժի և պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ նախատեսված չեն: Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը[228] և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը[229] սահմանում են ազատազրկված անձանց սնվելու իրավունքը, ինչը կարևոր է առողջությունն ու ուժերը պահպանելու և օրգանիզմի կանոնավոր կենսագործունեությունն ապահովելու համար, ինչպես նաև թվարկում են մի շարք դրույթներ, որոնցով պետք է առաջնորդվել՝ հատուկ կամ հավելյալ սննդի տրամադրումը, ազատազրկված անձանց կողմից իրենց համար անհրաժեշտ սնունդ ձեռք բերելու գործընթացը կազմակերպելու և սննդից հրաժարվելու դեպքում համապատասխան քայլեր ձեռնարկելու համար: Ներքին կանոնակարգը սահմանում է սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու կարգը[230]: ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշման Հավելված 1-ը սահմանում է ազատազրկված անձանց սննդի օրական նվազագույն չափաբաժինները: Նույն որոշման Հավելված 4-ը սահմանում է բժշկի եզրակացության կամ խորհրդատվության հիման վրա հղի, կերակրող մայր, անչափահաս և/կամ հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին տրվող հավելյալ սննդի օրական չափաբաժինները[231]: ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի 31-ի թիվ 961-Ն որոշման Հավելված 1-ը[232]

---

[227]United Nations Office on Drugs and Crime, “Handbook on Prisoners with Special Needs”, New York, 2009, page 116, http://bit.do/fMsep. «Միջազգային բանտային բարեփոխում», «ԼԳԲՏԻ անձինք ազատազրկման վայրերում. կանխարգելիչ մշտադիտարկման հիմունքները», Ազատազրկման վայրերում մշտադիտարկման ձեռնարկ, 2015թ., էջ 16, http://bit.do/fMuQa:

[228]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդվածներ 76-77, http://bit.do/fLtwt:

[229]«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 19, կետեր 1-3, http://bit.do/fLtwv:

[230]«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, http://bit.do/fLtww:

[231]«ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական նվազագույն չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանելու և ՀՀ կառավարության 2003 թ. ապրիլի 10-ի թիվ 413-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2015 թ. 15 հոկտեմբերի թիվ 1182-Ն որոշում, http://bit.do/fLtwy:

[232]«ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց տրվող սննդամթերքը մեկը մյուսով փոխարինելու չափաբաժինները, կենցաղային և խոհանոցային պարագաների ու սարքավորումների շահագործման ժամկետները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թ. հուլիսի 31-ի թիվ 961-Ն որոշում, http://bit.do/fLtwM:

սահմանում է ազատազրկված անձանց տրվող սննդամթերքը մեկը մյուսով փոխարինելու չափաբաժինները:

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգում Պաշտպանն ազատազրկված անձանց համար պատշաճ սննդի ապահովումը դիտարկել է պահման պայմաններին առնչվող խնդիրների, իսկ պահման պայմանների բարելավումը՝ քրեական ենթամշակույթի ազդեցության տարածման կանխարգելման գործնական լուծումների շարքում[233]: Սակայն հայեցակարգում անդրադարձ չի կատարվում սնունդը տրամադրելու ընթացքում ազատազրկված ԳՔՏ անձանց նկատմամբ դրսևորվող խտրական վերաբերմունքին, ինչը նույնպես քրեակատարողական հիմնարկներում առկա քրեական ենթամշակույթի հետևանք է:

## *2.9. Աշխատանք*

Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձինք կարող են կատարել ինչպես վարձատրվող, այնպես էլ չվարձատրվող աշխատանքներ: Վարձատրվող աշխատանքները ներառում են հիմնարկների տեխնիկատնտեսական սպասարկման և «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի կողմից առաջարկվող աշխատանքները: Բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալները կարող են աշխատել նաև հիմնարկներից դուրս՝ այլ գործատուների մոտ: Առանց վարձատրության աշխատանքը ենթադրում է հիմնարկների կամ դրանց հարող տարածքների բարեկարգում և սանիտարահիգիենիկ մաքրություն: Վերջինս ներառում է հիմնարկների բնակելի գոտու և հարակից տարածքների աղբահանությունը, ընդհանուր տարածքների, միջանցքների, զբոսահրապարակների, զուգարանների, բաղնիքների, տեսակցության սենյակների, կոյուղու մաքրությունը և այլն:

Սակայն խնդիրն այն է, որ տղամարդկանց քրեակատարողական հիմնարկներում այդ աշխատանքները պիտակավորված են, համարվում են «նվաստացուցիչ», «կեղտոտ» և կատարվում են ԳՔՏ կամ նրանց հավասարեցված անձանց կողմից: Ընդ որում, նրանք «ընտրում են» միայն աղբահանության կամ սանիտարահիգիենիկ մաքրության աշխատանքները նույնիսկ այն դեպքում, երբ հիմնարկներում առկա է այլ աշխատանքներում ներգրավվելու հնարավորություն, քանի որ քրեական ենթամշակույթի չգրված օրենքները նշված խմբի անձանց արգելում են կատարել այնպիսի աշխատանքներ, որոնք շփում են ենթադրում ազատազրկված անձանց, վերջիններիս իրերի կամ սննդի հետ: Այդ պատճառով ԳՔՏ անձանց չեն ներգրավում, օրինակ, սննդի կամ հանձնուքների բաժանման, լվացքատան, սննդի պահասենյակի, պահեստների կամ այլ աշխատանքներում: Նախորդ տարիներին նույնիսկ եղել են դեպքեր, երբ որոշ հիմնարկներում

---

[233] ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգ», Երևան, 2018թ., 21-23, http://bit.do/fLtwP:

մաքրության աշխատանքները չեն կատարվել, քանի որ տվյալ ժամանակահատվածում այնտեղ ԳԲՏ անձինք չեն եղել[234]:

Այդ աշխատանքները կատարելու դիմաց ԳԲՏ անձինք հիմնարկների վարչակազմի և մնացած ազատազրկված անձանց կողմից առավել հանդուրժող և բարեհաճ վերաբերմունքի են արժանանում: Կախված աշխատանքի բնույթից՝ նրանք ազատազրկված անձանցից որոշակի «վարձատրություն» են ստանում, օրինակ՝ 1000-2000 դրամ, 1000 դրամ և ծխախոտ, 2 տուփ ծխախոտ կամ ուտելիք[235]: Բացի այդ, վարչակազմի թույլտվությամբ նրանք կարող են ազատ շրջել հիմնարկի տարածքում կամ նրանց դռները կարող են բաց թողնվել: Այդ առավելությունները տրվում են, քանի որ ԳԲՏ կամ նրանց հավասարեցված անձինք կատարում են այն աշխատանքները, որոնք այլ ազատազրկված անձինք երբեք չեն կատարի[236]:

Քրեակատարողական ծառայության տրամադրած տվյալների համաձայն՝ 2018թ. ընթացքում չվարձատրվող աշխատանքներում ներգրավվել է 203 դատապարտյալ՝ նույն ժամանակահատվածում դատապարտյալների ընդհանուր թվի 6.6%-ը[237]: 2019թ. ընթացքում չվարձատրվող աշխատանքներ է կատարել 175 դատապարտյալ՝ նույն ժամանակահատվածում դատապարտյալների ընդհանուր թվի 7.6%-ը[238]: Սակայն պաշտոնական տեղեկատվություն այն մասին, թե յուրաքանչյուր հիմնարկում քանի կալանավորված անձ է սանհիտարահիգիենիկ մաքրման աշխատանք կատարում, առկա չէ, քանի որ ըստ կարգավիճակի առանձնացված հաշվառում չի իրականացվում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված հիմնախնդիրն առկա է բոլոր բանտերում, որտեղ պահվում են ԼԳԲՏ անձինք: Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի կողմից մշակված մշտադիտարկման ուղեցույցում նշված է, որ որոշ դեպքերում ԼԳԲՏ անձանց պարտադրվում է հատուկ համազգեստ կամ տարբերակիչ այլ նշաններ կրել և կատարել ամենաանհրապույր առաջադրանքները՝ ներառյալ մաքրման աշխատանքները[239]:

---

234ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2016թ. տարեկան գործունեության հաշվետվություն», Հայաստան, 2017թ., էջ 112, http://bit.do/fLtwS:

235Հովհաննիսյան, Ն., «Հետք» ինտերնետային թերթ, «Հանցագործ աշխարհում նույնասեռական տերմինը խարան է ամբողջ կյանքի համար. ԼԳԲՏ ազատազրկված անձանց խնդիրները Հայաստանի բանտերում», 2019թ., http://bit.do/fMuYa:

236ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգը 2011-2012 թվականներին», Երևան, 2013թ., էջ 30, http://bit.do/fLtwW:

237Հովհաննիսյան, Ն., «Աշխատանքային իրավունքները Հայաստանում» կայք /labour.am/, «Ազատազրկված անձանց զբաղվածությունը՝ վերասոցիալականացման և հանցագործությունների կանխարգելման միջոց», http://bit.do/fNMVv:

238«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-59 գրության պատասխան, էջեր 7-8, http://bit.do/fNcus:

239Association for the Prevention of Torture, “Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide”, Geneva, 2018, page 58, http://bit.do/fMU2s.

Միջազգային իրավական փաստաթղթերով ներկայացվող հիմնական պահանջն այն է, որ բանտային աշխատանքը չպետք է դիտարկվի որպես բանտի ռեժիմի տարր, երբևէ չպետք է կիրառվի որպես պատիժ, ինչպես նաև տրամադրվող աշխատանքի տեսակի առումով չպետք է որևէ խտրականություն դրսևորվի[240]: Ինչ վերաբերում է ազատազրկված ԼԳԲՏ անձանց, ապա բանտի ղեկավարությունը պետք է քայլեր ձեռնարկի՝ բանտում կազմակերպվող ցանկացած միջոցառման ժամանակ նրանց սեռական բռնությունից պաշտպանելու համար:

Անդրադառնալով ներպետական օրենսդրությանը՝ նշենք, որ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերը չեն նախատեսում ազատազրկված անձանց տրամադրվող աշխատանքի տեսակի առումով խտրականության արգելքի պահանջը: Առկա չեն նաև խտրականություն դրսևորած անձանց պատժի և պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ: ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը չվարձատրվող աշխատանքներում ներգրավելու արգելք սահմանում է միայն 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող անձանց, հղի կանանց և կենսաթոշակային տարիքի հասած անձանց համար[241]: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքով արգելվում է կալանավորված անձանց ներգրավել չվարձատրվող աշխատանքներում, բացառությամբ սանիտարահիգիենիկ աշխատանքների[242]: Ներքին կանոնակարգը սահմանում է ազատազրկված անձանց կողմից կատարվող աշխատանքների կարգն ու պայմանները[243]: ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 15-ի թիվ 135-Ն որոշումը սահմանում է ազատազրկված անձանց արգելված աշխատանքների և պաշտոնների ցանկը[244]:

Ազատազրկված անձանց զբաղվածության ապահովումը նախատեսված է քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությամբ[245]: Նախատեսվում է դիտարկել մասնավոր հատվածի հետ հիմնարկներում արտադրություն կազմակերպելու հնարավորությունները, ազատազրկված անձանց համար ստեղծել զբաղվածության ապահովման կենտրոններ՝ արտադրամասեր, ջերմոցներ և այլն: Նախարարությունը նաև նպատակադրվել է այնպիսի նախադրյալներ ստեղծել, որպեսզի «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի միջոցով ապահովվի յուրաքանչյուր հիմնարկում գտնվող անձանց առնվազն 10%-ի

[240]European Prison Rules, Rules 21.1-26.17, http://bit.do/fNaQW.

[241]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 88, http://bit.do/fLtwX:

[242]«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 24, http://bit.do/fLtwZ:

[243]«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, բաժին 11, http://bit.do/fLtw4:

[244]«Կալանավորված անձանց և դատապարտյալներին արգելված աշխատանքների և պաշտոնների ցանկը հաստատելու և ՀՀ կառավարության 2005թ. հուլիսի 7-ի թիվ 960-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 15-ի թիվ 135-Ն որոշում, http://bit.do/fLtw8:

[245]«ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թթ. ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թթ. միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թ. նոյեմբերի 28-ի թիվ 1717-Լ որոշում, հավելված 1, http://bit.do/fLtxb:

զբաղվածությունը: Նշված միջոցառումների շրջանակներում խոցելի խմբի ազատազրկված անձանցից հատուկ ուշադրություն է դարձվում միայն անչափահասներին՝ այն հիմնավորմամբ, որ նրանց նկատմամբ չեն կարող կիրառվել ընդհանուր բնույթի միջոցառումներ, որոնք կարող են հատուկ լինել չափահաս դատապարտյալներին: Սակայն ռազմավարության մեջ ազատազրկված անձանց համար հավասար աշխատանքային պայմանների ապահովմանն ուղղված որևէ գործողություն նախատեսված չէ:

2015թ. մարդու իրավունքների իրավիճակի մասին տարեկան հաղորդման մեջ Պաշտպանը, անդրադառնալով քրեական ենթամշակույթի հետ կապված խնդրին, արձանագրել է, որ քրեակատարողական հիմնարկի տարածքում սանիտարահիգիենիկ մաքրման աշխատանքներում (սանհանգույցների, աղբահանության) ներգրավված են նույնասեռական դատապարտյալները, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նման աշխատանքները քրեական ենթամշակույթում համարվում են «ոչ հարիր»[246]:

Պաշտպանն ազատազրկված անձանց զբաղվածության խնդրին անդրադարձել է նաև Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգում՝ կարևորելով հատկապես աշխատանքի դերը, որը կրճատում է պարապուրդը և ապահովում է հագեցած ու իմաստավորված առօրյան՝ այդպիսով նվազեցնելով քրեական ենթամշակույթի մեջ ներքաշվելու հավանականությունը: Հաշվի առնելով աշխատանքի կարևորությունը և դրա բարենպաստ ազդեցությունը՝ հայեցակարգում առաջարկվել է գործուն քայլեր ձեռնարկել քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց տեխնիկատնտեսական և հնարավոր այլ աշխատանքներում ներգրավվածությունը բարձրացնելու ուղղությամբ[247]: Սակայն սանիտարահիգիենիկ մաքրման աշխատանքները խոցելի խմբերի ազատազրկված անձանց կողմից իրականացնելու պրակտիկան Պաշտպանի կողմից չի դիտարկվել որպես քրեական ենթամշակույթի հետևանք, ուստի այն վերացնելու վերաբերյալ որևէ առաջարկություն չի ներկայացվել Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգում:

Հիմնախնդիրը կարևորել է Դիտորդների խումբը և քրեական ենթամշակույթի խնդրի լուծման շրջանակներում արդարադատության նախարարությանն առաջարկել է քրեակատարողական հիմնարկներում անհիտարահիգիենիկ մաքրման աշխատանքների համար հաստիքներ սահմանել և վերացնել այդ աշխատանքները բացառապես խոցելի խմբերի կողմից իրականացնելու պրակտիկան: Սակայն առաջարկությունը չի ընդունվել նախարարության կողմից՝ այն հիմնավորմամբ, որ ազատազրկված անձինք վարձատրվող և չվարձատրվող աշխատանքներում

---

[246]ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, «2015թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում», Երևան, 2016թ., էջեր 357-358, http://bit.do/fMyyA:

[247]ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգ», Երևան, 2018թ., էջեր 17-18, http://bit.do/fLtxf:

ընդգրկվում են իրենց ցանկությամբ և գրավոր համաձայնության առկայության դեպքում, ինչպես սահմանված է Ներքին կանոնակարգով[248]:

Նշենք, որ ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը պայմանագրի առկայություն և աշխատանքային վարձատրություն սահմանում է միայն վարձատրվող աշխատանքներ կատարող ազատազրկված անձանց համար: Չվարձատրվող աշխատանքները կատարելու հիմքն ազատազրկված անձի գրավոր դիմումն է, որի առկայության դեպքում հիմնարկի պետը տվյալ աշխատանքում ազատազրկված անձին ներգրավելու վերաբերյալ որոշում է կայացնում: Առանց վարձատրության աշխատանքները կազմակերպվում են ոչ հանգստյան ժամերին՝ օրական 2 ժամից ոչ ավելի ժամանակով:

## *2.10. Դասընթացներ և միջոցառումներ*

Քրեակատարողական հիմնարկների վարչակազմը ԼԳԲՏ անձանց պաշտպանության նկատառումներով առանձնացնելով՝ անուղղակիորեն սահմանափակում է նրանց մասնակցությունը հիմնարկներում կազմակերպվող դասընթացներին և միջոցառումներին: Բացի այդ, շատ են լինում դեպքերը, երբ ԼԳԲՏ անձինք հրաժարվում են մասնակցել նշված ծրագրերին մնացած ազատազրկված անձանց կողմից բռնության ենթարկվելու վտանգի պատճառով:

Այս առումով միջազգային իրավական փաստաթղթերն ամրագրում են, որ յուրաքանչյուր բանտ պետք է ձգտի բոլոր բանտարկյալներին հասանելի դարձնել կրթական ծրագրերը, որոնք պետք է հնարավորինս ընդգրկուն լինեն և համապատասխանեն նրանց անհատական կարիքներին, ինչպես նաև պահանջում են, որպեսզի բանտի ղեկավարությունն առանձնակի ուշադրություն դարձնի հատուկ կարիքներ ունեցող բանտարկյալների կրթությանը[249]: Ինչ վերաբերում է ազատազրկված ԼԳԲՏ անձանց, ապա հիմնական պահանջն այն է, որ բանտի ղեկավարությունն ապահովի նրանց հասանելիությունը և հավասար մասնակցությունն այդ ծրագրերին՝ երաշխավորելով խտրականության բացառումը և պաշտպանությունը սեռական բռնությունից:

Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական իրավական ակտերը չեն ամրագրում հիմնարկների կողմից կազմակերպվող դասընթացներին և միջոցառումներին ազատազրկված անձանց հավասար մասնակցությունն ապահովելուն ուղղված դրույթներ, ինչպես նաև չեն նախատեսում խտրականություն դրսևորող անձանց պատժի և պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ: ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը[250] և «Ձերբակալված և կալանավորված անձանց

[248]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «Խումբը հանդես է եկել քրեակատարողական համակարգում առկա քրեական ենթամշակույթի խնդրի լուծման առաջարկներով», 2018թ., http://bit.do/fLtxj:

[249]European Prison Rules, Rules 28.1-28.7, http://bit.do/fNcB5. The United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (the Nelson Mandela Rules), Rules 104-105, http://bit.do/fM32d.

[250]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 12, կետ 14, հոդվածներ 89-90, http://bit.do/fNcCF:

պահելու մասին» ՀՀ օրենքը[251] սահմանում են ազատազրկված անձանց կրթության իրավունքը և այն կարևոր պահանջը, որ քրեակատարողական հիմնարկները պետք է պայմաններ և հնարավորություններ ստեղծեն ազատազրկված անձանց կրթության կազմակերպման համար: Ներքին կանոնակարգը հստակեցնում է ազատազրկված անձանց կրթության կազմակերպման կարգը և պայմանները[252]:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության մեջ արդարադատության նախարարությունը կարևորում է մասնագիտական կրթության նոր ծրագրերի ներդնումը, որը պետք է հիմնվի ազատազրկված անձանց մասնագիտական կրթության կարիքների գնահատման վրա[253]: Սակայն ռազմավարության մեջ անդրադարձ չի կատարվում կրթական ծրագրերին ազատազրկված ԼԳԲՏ անձանց հասանելիության կամ հավասար մասնակցության ապահովման խնդրին:

Պաշտպանը կրթության իրավունքի իրացման ապահովումը դիտարկում է որպես ազատազրկված անձանց քրեական ենթամշակույթից զերծ պահելու կարևոր բաղադրիչ: Այս համատեքստում Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգում անդրադարձ է կատարվում այն խնդիրներին, որոնք առնչվում են դասընթացների շարունակականության ապահովմանը, ընդլայնմանը և ազատազրկված անձանց մասնակցությանը: Սակայն հայեցակարգում կարևորվում է միայն ազատազրկված անչափահասների կրթության իրավունքի իրացման ապահովման հարցը[254]: Հայեցակարգը չի անդրադառնում այն հիմնախնդրին, որ քրեական ենթամշակույթի հետևանքով ձևավորված ոչ կանոնադրական հարաբերությունների պատճառով ԼԳԲՏ անձինք կարող են դուրս մնալ հիմնարկների կողմից կազմակերպվող դասընթացներից և միջոցառումներից: Հետևաբար այդ հիմնախնդրի կարգավորմանն ուղղված որևէ առաջարկություն հայեցակարգում առկա չէ:

## *2.11. Արտաքին աշխարհի հետ կապը*

Արտաքին աշխարհի հետ կապի պահպանումն ազատազրկված անձանց հիմնական իրավունքներից է: Այն նվազեցնում է լարվածությունը քրեակատարողական հիմնարկներում, նպաստում է դրական միջավայրի ձևավորմանը և ազատազրկված անձանց բարեկեցությանը, ազդում է ընտանիք

---

[251]«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 13, կետ 1, հոդված 25, http://bit.do/fNcCW:

[252]«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, բաժին 12, http://bit.do/fLtxo:

[253]«ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թթ. ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թթ. միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. նոյեմբերի 28-ի թիվ 1717-Լ որոշում, http://bit.do/fLtxb:

[254]ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգ», Երևան, 2018թ., էջեր 18-20, https://bit.ly/3pwU8PY:

վերադառնալու ցանկության վրա, ինչն էլ ազատազրկված անձանց զերծ է պահում իրավախախտում կատարելուց և քրեական ենթամշակույթի ազդեցությունից: Հետևաբար արտաքին աշխարհի հետ կապի բացակայությունը կարող է ծանր հետևանքներ ունենալ ազատազրկված անձանց հոգեկան առողջության, վարքագծի և հոգեվիճակի վրա:

Ինչ վերաբերում է ազատազրկված ԼԳԲՏ անձանց, ապա նրանք խոցելի են նաև արտաքին աշխարհի հետ կապի պահպանման տեսանկյունից: Նախ՝ ԼԳԲՏ անձանց հետ համապատասխան սոցիալ-հոգեբանական աշխատանքներ չեն իրականացվում մինչև ազատազրկվելը խզված ընտանեկան կապերը վերականգնելու ուղղությամբ: Այնուհետև՝ համակարգային բնույթ կրող խտրական վերաբերմունքը և աշխատակիցների մեջ արմատացած կարծրատիպային ընկալումները որոշ դեպքերում հանգեցնում են այդ կապերի խզմանը: Այս առումով հիմնական մտահոգությունը կապված է քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության գաղտնիության պահպանման հետ: Օրինակ, 2018թ. «Նուբարաշեն» ՔԿՀ-ում միջադեպ է արձանագրվել, երբ հիմնարկի աշխատակիցը տեսակցության եկած անձանց հայտնել է խցի կարգավիճակի մասին՝ տեղեկացնելով, որ այնտեղ «արվամոլներ» են մնում[255]:

Ազատազրկված ԼԳԲՏ անձանց համար արտաքին աշխարհի հետ կապի պահպանումն ավելի է բարդանում օրենսդրական բացերի պատճառով:

Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող օրենսդրությամբ ազատազրկված անձինք կարող են կարճատև և երկարատև տեսակցություններ ունենալ մերձավոր ազգականների հետ: Ընդ որում, եթե կարճատև տեսակցությունները թույլատրվում են նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ, ապա երկարատև տեսակցությունները տրամադրվում են միայն մերձավոր ազգականների հետ[256]: Ներպետական օրենսդրության մեջ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն է սահմանում մերձավոր ազգականների համեմատաբար լայն ցանկ, որի մեջ մտնում են նաև ամուսինները[257]:

Հայաստանում, ինչպես գիտենք, ամուսնությունը թույլատրվում է միայն կնոջ և տղամարդու միջև, ինչն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ[258] և ՀՀ Ընտանեկան օրենսգրքով[259]: Այսինքն՝ նույնասեռ ամուսնությունները Հայաստանում օրինական չեն:

---

[255]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում երեք ազատազրկված անձանց կողմից ինքնավնասում կատարելու դեպքի առթիվ քրեական գործ չի հարուցվել», 2018թ., http://bit.do/fMyPP:

[256]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 92, http://bit.do/fMyQz: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 15, http://bit.do/fMyQB:

[257]ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 6, կետ 40, http://bit.do/fMyQC:

[258]ՀՀ Սահմանադրություն, հոդված 35, http://bit.do/fMyQF:

[259]ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 10, կետ 1, http://bit.do/fMyQJ:

Ինչ վերաբերում է փաստական ամուսնություններին, ապա դրանք իրավական կարգավիճակ չունեն և որևէ իրավական հետևանք չեն առաջացնում: Գործող ընտանեկան օրենսդրությունը ճանաչում է միայն Քաղաքացիական կացության ակտի գրանցման (այսուհետ՝ ՔԿԱԳ) մարմիններում գրանցված ամուսնությունը, և ամուսինների համար օրենքով նախատեսված իրավունքներ ու պարտականություններ առաջացնում է միայն օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնությունը[260]:

Նշված կամ այլ իրավական ակտերով նախատեսված չէ զուգընկեր կամ մեկ այլ տերմին, որը սահմանում է նախատեսում «ԼԳԲՏ անձանց զույգ» հասկացության համար[261]: ԼԳԲՏ զույգերը չունեն ամուսնու կամ մերձավոր ազգականի իրավական կարգավիճակ: Օրենսդրական կարգավորումների բացակայության պատճառով քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց կարճատև կամ երկարատև տեսակցություններ տրամադրելիս հիմք է ընդունվում միայն պաշտոնապես գրանցված ամուսնությունները, ինչը բացառում է փաստական ամուսնությունները: Հետևաբար ազատազրկված ԼԳԲՏ անձինք զրկվում են իրենց զուգընկերների հետ տեսակցության հնարավորությունից[262]:

Նույնասեռ զույգերի ամուսնությունը Հայաստանում օրինական է համարվում միայն այն դեպքում, եթե արտերկրում նրանց ամուսնությունը գրանցվել է տվյալ երկրի օրենքի դրույթներին համապատասխան՝ հյուպատոսական վավերացումից հետո[263]: Սակայն հնարավոր չէ պաշտոնական տեղեկատվություն ստանալ այն մասին, թե եղել են դեպքեր, երբ նշված ընթացակարգով ամուսնացած նույնասեռ զույգերից մեկը, հայտնվելով քրեակատարողական հիմնարկում, տեսակցություն է ունեցել իր ամուսնու հետ, քանի որ նախ՝ ազատազրկված ԼԳԲՏ անձանց վերաբերյալ հաշվառումներ չեն իրականացվում, այնուհետև՝ հիմնարկներում հաշվառվում է միայն տրամադրված տեսակցությունների թիվը: Չեն հաշվառվում յուրաքանչյուր ազատազրկված անձին տրամադրած տեսակցությունների քանակը, տևողությունը, տեսակցության եկած անձանց հետ կապի և թվաքանակի վերաբերյալ տվյալները: Այսինքն՝ պաշտոնական տեղեկատվություն այն մասին, թե յուրաքանչյուր կալանավորված անձի կամ դատապարտյալի քանի կարճատև կամ երկարատև տեսակցություն է տրամադրվել, ինչ տևողությամբ և ում հետ, առկա չէ:

Ազատազրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի պահպանման իրավունքն ամրագրված է ՀՀ քրեակատարողական օրենսգրքում[264] և «Ձերբակալված

---

[260]ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 9, http://bit.do/fMyQP:

[261]«Նոր սերունդ» մարդասիրական հկ, «ՀՀ օրենսդրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված ԼԳԲՏ անձանց իրավունքների համեմատության զեկույց», Երևան, 2014թ., էջ 19, http://bit.do/fMyQM:

[262]«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ, «Կապն արտաքին աշխարհի հետ. իրավունք, ոչ թե արտոնություն», https://bit.ly/374GRW6:

[263]«Նոր սերունդ» մարդասիրական հկ, Միսկարյան, Շ., «Լեսբուհիների կյանքը Հայաստանում», 2020թ., http://bit.do/fMyQR:

[264]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 12, կետ 9, հոդված 92, http://bit.do/fNcDZ:

և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում[265]: Արտաքին աշխարհի հետ կապի տրամադրման կամ ապահովման կարգը ներկայացված է Ներքին կանոնակարգում[266]: Սակայն նշված իրավական ակտերով նախատեսված չեն այնպիսի հատուկ կարգավորումներ, որոնք, հաշվի առնելով ազատազրկված ԼԳԲՏ անձանց խոցելիությունը, բացառություն կսահմանեն նրանց համար՝ թույլատրելով տեսակցությունները զուգընկերների կամ փաստական ամուսինների հետ:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության միջոցառումների 33-րդ կետով նախատեսված է ուսումնասիրել ազատազրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի ապահովման առկա համակարգը և ներկայացնել դրա արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ: Նախատեսվում է ուսումնասիրել նաև քրեակատարողական հիմնարկներ տրանսպորտային հասանելիության խնդիրները և ապահովել տրանսպորտային հաղորդակցությունը[267]: Սակայն ռազմավարության մեջ անդրադարձ չի կատարվում ազատազրկված ԼԳԲՏ անձանց արտաքին աշխարհի հետ կապի ապահովմանն առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրությանը և դրանց կարգավորմանը:

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգում Պաշտպանն անդրադարձել է նաև ազատազրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի խնդրին՝ առաջարկելով ավելացնել տեսակցությունների նվազագույն թույլատրելի քանակը, քննարկել բջջային հեռախոսները թույլատրելու մեխանիզմի ներդնումը՝ համապատասխան հսկողությամբ և սահմանափակումներով, ինչպես նաև կատարել այնպիսի օրենսդրական բարեփոխումներ, որոնք կխրախուսեն արտաքին աշխարհի հետ կապի պահպանումը[268]: Հայեցակարգում ազատազրկված ԼԳԲՏ անձանց արտաքին աշխարհի հետ կապի պահպանմանն առնչվող օրենսդրական բացերին Պաշտպանի կողմից անդրադարձ չի կատարվել:

Ինչ վերաբերում է միջազգային չափանիշներին, ապա հիմնական պահանջն այն է, որ բանտի ղեկավարությունը պետք է հատուկ ջանքեր գործադրի՝ արտաքին աշխարհի հետ ազատազրկված ԼԳԲՏ անձանց կապը հեշտացնելու և այդ կապի խզումը կանխելու համար՝ հաշվի առնելով ընտանիքի և հարազատների հետ նրանց սահմանափակ շփումը և զուգընկերների հետ տեսակցության անհնարինությունը: Եթե ոլորտը կարգավորող օրենսդրությամբ թույլատրված չեն չամուսնացած

---

[265]«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 13, կետ 9, հոդված 17, http://bit.do/fNcEe:

[266]«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, բաժիններ 16, 19, 20, 22, http://bit.do/fLtyF:

[267]«ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023թթ. միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. նոյեմբերի 28-ի թիվ 1717-Լ որոշում, հավելված 2, http://bit.do/fMyQT:

[268]ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգ», Երևան, 2018թ., էջեր 34-36, https://bit.ly/3pwU8PY:

զուգընկերների այցելությունները, ապա պետք է քայլեր ձեռնարկվեն համապատասխան փոփոխություններ անելու ուղղությամբ՝ կանխելու համար այդ ազատազրկված անձանց կապի խզումն արտաքին աշխարհի հետ և մեղմելու նրանց մեկուսացումը: Իսկ այն դեպքերում, երբ ամուսինների հետ տեսակցությունները թույլատրված են միայն ազատությունից զրկված հետերոսեքսուալ անձանց, ապա դարձյալ պետք է քայլեր ձեռնարկվեն փոփոխություններ կատարելու ուղղությամբ՝ երաշխավորելու համար, որ բոլոր ազատազրկված անձինք օգտվեն նույն իրավունքներից՝ անկախ իրենց սեռական կողմնորոշումից[269]: Ջոկյակարտյան 9-րդ սկզբունքի համաձայն՝ անհրաժեշտ է ապահովել, որպեսզի ամուսնական այցելությունները, եթե այդպիսիք թույլատրված են, հավասար հիմունքներով տրամադրվեն բոլոր դատապարտյալներին ու կալանավորված անձանց՝ անկախ իրենց զուգընկերոջ սեռից[270]:

Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի կողմից մշակված մշտադիտարկման ուղեցույցում նշվում է, որ ընտանեկան այցերը չպետք է սահմանափակվեն խտրական հիմքերով, և ընտանիք, ամուսին եզրույթները պետք է հնարավորինս լայն մեկնաբանվեն, որպեսզի չխոչընդոտվեն նույն սեռի զուգընկերների, նաև ծնողների կողմից այցերը[271]: ԽԿԵ-ն հստակեցնում է, որ ինտիմ այցերը չպետք է կախված լինեն անձի ամուսնական կարգավիճակից: Պետությունները պետք է երաշխավորեն, որ ազատությունից զրկված բոլոր անձինք կարողանան կանոնավոր տեսակցություններ և ամուսնական այցեր ունենալ՝ անկախ նրանից՝ հարաբերությունը պաշտոնապես գրանցված է, թե՝ ոչ: Նման այցերը չպետք է սահմանափակվեն սեռի, ազգության, սեռական կողմնորոշման կամ ցանկացած այլ հիմքով[272]:

Անդրադառնալով առանձին երկրների փորձին՝ նշենք, որ 2007թ. սկսած Մեքսիկայի բանտերում թույլատրվում են գեյ բանտարկյալների զուգընկերների կողմից ամուսնական այցելությունները: Ընդ որում, չի պահանջվում, որ այցելուն և բանտարկյալն ամուսնացած լինեն[273]:

Կոստա Ռիկայում «մտերմիկ հանդիպումները» թույլատրվում էին բացառապես հակառակ սեռի անձանց հետ: 2011թ. սկսած այնտեղ ազատությունից զրկված նույնասեռական անձինք, հետերոսեքսուալների հետ հավասար հիմունքներով, «մտերմիկ հանդիպումների» իրավունք ունեն[274]:

---

[269]United Nations Office on Drugs and Crime, “Handbook on Prisoners with Special Needs”, New York, 2009, page 116, http://bit.do/fMsep.
[270]The Yogyakarta Principles on the Application of International Human Rights Law in Relation to Sexual Orientation and Gender Identity, 2007, 9E, http://bit.do/fM3Q3.
[271]Association for the Prevention of Torture, “Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide”, 2018, Geneva, page 80, http://bit.do/fMU2s.
[272]Report of the visit of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment to Argentina, 7 November 2013 , CAT/OP/ARG/1, para. 70, http://bit.do/fNcFZ.
[273]BBC News, “Mexico allows gay conjugal visits”, 2007, http://bit.do/fMAc8.
[274]«Միջազգային բանտային բարեփոխում», «ԼԳԲՏԻ անձինք ազատազրկման վայրերում. կանխարգելիչ մշտադիտարկման հիմունքները», 2015թ., էջ 16, http://bit.do/fMuQa:

Կոլումբիայում Ուղղիչ հիմնարկների ընդհանուր կանոնակարգը սահմանում է, որ բանտերը չեն կարող ազատությունից զրկված անձի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով արգելել մտերիմ այցելությունների իրավունքը:

Բրազիլիայում Հանրապետության նախագահի և Ազգային խորհրդի՝ խտրականության դեմ համատեղ բանաձևը հղում է կատարում Ջոկյակարտյան սկզբունքներին՝ երաշխավորելով ազատազրկված ԼԳԲՏԻ անձանց ինտիմ տեսակցությունների իրավունքը[275]:

## *2.12. Բողոքների ներկայացման և քննության կարգը*

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԼԳԲՏ անձինք հակված չեն դիմելու իրավական պաշտպանության մեխանիզմների՝ անկախ նրանից, թե իրենց նկատմամբ բռնության դեպքերը կամ այլ իրավախախտումները որքան համատարած են: Պատճառները կապված են իրավապահ մարմինների նկատմամբ ունեցած անվստահության, իրավական պաշտպանության մեխանիզմների ոչ արդյունավետ լինելու, իրավապահ մարմինների կողմից իրենց անձնական տվյալները հանրայնացվելու մտավախության, հանցագործություն կատարած անձանց կողմից իրենց նկատմամբ հաշվեհարդարի հետ և այլն[276]: Այս առումով ազատազրկված ԼԳԲՏ անձինք առավել խոցելի են, քանի որ նշված պատճառներին ավելանում է նաև քրեակատարողական հիմնարկում գտնվելու հանգամանքը, որտեղ սահմանափակված են անձանց ազատությունը և հանրային վերահսկողությունը, մյուս կողմից էլ քրեական ենթամշակույթի չգրված օրենքներն արգելում են բողոքել հիմնարկների պայմանների, վարչակազմի կամ խցակիցների դեմ: Բացի այդ, ԼԳԲՏ անձինք խուսափում են բարձրաձայնել իրենց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի մասին, քանի որ չեն ցանկանում բացահայտել իրենց կարգավիճակը, կրկնազոհացման (վիկտիմիզացիայի) ենթարկվելու մտավախություն ունեն, որոշ դեպքերում էլ իրենց նկատմամբ վատ վերաբերմունքը չեն ընկալում որպես խնդիր, նշելով՝ «մենք մեր տեղը գիտենք»[277]:

Արդարադատության նախարարությունն ազատազրկված անձանց կողմից ներկայացվող բողոքների, դրանց բնույթի կամ բողոք ներկայացնող ազատազրկված անձանց վերաբերյալ առանձնացված հաշվառում չի իրականացնում: Այսինքն՝ առկա չէ այնպիսի ընթացակարգ, որը հնարավորություն կտա պարզել ազատազրկված ԼԳԲՏ անձանց կողմից ներկայացված բողոքների հաճախականությունը և դրանց միջոցով բարձրաձայնվող հիմնախնդիրների օրինաչափությունը, ինչը կարող է

[275]Association for the Prevention of Torture, “Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide”, 2018, Geneva, page 81, http://bit.do/fMU2s.

[276]«Փինք» իրավապաշտպան հկ, «Իրավախախտումների կիսամյակային ամփոփագիր: 2020թ. հունվար-հունիս», էջեր 6-7, http://bit.do/fLtyu:

[277]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2016թ. տարեկան գործունեության հաշվետվություն», Հայաստան, 2017թ., էջ 113, https://bit.ly/35LACap:

նպաստել այդ խնդիրների կարգավորման ուղղությամբ առավել հասցեական լուծումներ մշակելուն:

Պարզաբանումներ ստանալու նպատակով դիմել ենք նաև Պաշտպանին և Դիտորդների խմբին:

Նշենք, որ մեր կողմից ուսումնասիրված միջազգային փաստաթղթերը կարևորում են պետության, ինչպես նաև հկ-ների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց հարցերով մասնագիտացած կազմակերպությունների կողմից բանտերի անկախ մշտադիտարկման կարևորությունը[278]: Նշվում է, որ մշտադիտարկում իրականացնող մարմինները, այդ թվում՝ կանխարգելման ազգային մեխանիզմները, ազատազրկման վայրեր պարբերաբար այցելությունների և պետական մարմիններին հաջորդիվ զեկույցներ ներկայացնելու միջոցով կարող են առանցքային դերակատարություն ունենալ ազատազրկման վայրերում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության և այլ ազատազրկված անձանց հետ հավասար հիմունքներով վերաբերմունքի երաշխավորման գործում[279]: Հայաստանում նշված գործառույթի իրականացման շրջանակներում առանձնացրել ենք Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի, և Դիտորդների խմբի դերը:

Դիտորդների խումբը ձևավորվել է 2005թ. և ազատազրկված անձանց իրավունքների պաշտպանության հասարակական վերահսկողություն է իրականացնում[280]: Ավելացնենք, որ Դիորդների խումբը մշակել և կիրառում է խոցելի խմբերի ազատազրկված անձանց իրավունքների մշտադիտարկման գործիքակազմ:

Պաշտպանի աշխատակազմից տեղեկացրել են, որ վերջին տարիներին ազատազրկված ԼԳԲՏ անձանցից բողոք չի ստացվել՝ բացառությամբ 2017թ. ընթացքում ստացված 1 ահազանգի և 1 դիմումի: Տեղեկատվություն չի տրամադրվել այն մասին, թե ահազանգի հիման վրա իրավախախտման ինչ խնդիրներ են արձանագրվել և ինչ լուծումներ են առաջադրվել՝ այն հիմնավորմամբ, որ մինչև բողոքի վերաբերյալ Պաշտպանի կողմից վերջնական որոշման ընդունումը քննարկման ենթակա բողոքները կամ դրանց բովանդակությունը հրապարակման ենթակա չեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք արդեն հրապարակված են բողոքը ներկայացնողի կամ այլ անձանց կողմից: Պատասխան գրության մեջ նաև նշված է, որ դիմողի կամ այլ անձի մասին հայտնի դարձած տվյալները Պաշտպանը կարող է հրապարակել միայն այդ անձանց գրավոր համաձայնությամբ: Բացի այդ, առկա է նաև բողոք ներկայացրած անձի նույնականացման վտանգ[281]:

---

[278] The Yogyakarta Principles on the Application of International Human Rights Law in Relation to Sexual Orientation and Gender Identity, 2007, Principle 9F, http://bit.do/fM3Q3.

[279]«Միջազգային բանտային բարեփոխում», «ԼԳԲՏԻ անձինք ազատազրկման վայրերում. կանխարգելիչ մշտադիտարկման հիմունքները», 2015թ., էջ 5, http://bit.do/fMuQa:

[280]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի ստեղծման պատմություն, 2015թ., http://bit.do/fNgns:

[281]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 18-33 գրության պատասխան, http://bit.do/fNdUX, թիվ 20-75 գրության պատասխան, http://bit.do/fNdVP:

Դիտորդների խմբին ահազանգելու միջոցով ազատազրկված ԼԳԲՏ անձինք առավել հաճախ են բարձրաձայնում են իրենց իրավունքների խախտումների դեպքերի մասին: Օրինակ, 2016-2018թթ. ազատազրկված ԼԳԲՏ անձանցից ստացվել է 41 ահազանգ[282]: 2019թ. ստացվել է 5 ահազանգ, բացի այդ կատարվել են առանց ահազանգերի այցելություններ՝ տեղում ծանոթանալու ԼԳԲՏ և առանձնացված խցերում պահվող անձանց կենսապայմաններին և խնդիրներին[283]: 2019թ. և նախորդ տարիներին ստացված ահազանգերը վերաբերում են ազատազրկված ԼԳԲՏ անձանց խցերի կամ կացարանների կենցաղային պայմաններին, առողջության հետ կապված խնդիրներին, իրենց կողմից տարբեր պատճառներով կատարված ինքնավնասումների, հիմնարկի վարչակազմի կողմից դրսևորվող խտրական վերաբերմունքի դեպքերին և անվտանգությանն առնչվող հարցերին: Սակայն Դիտորդների խմբի տարեկան հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված իրավախախտումների վերացման ուղղությամբ պատասխանատու կառույցների կողմից պատշաճ քայլեր չեն ձեռնարկվել, օրինակ՝ ծառայողական քննություններ չեն անցկացվել, քրեական գործեր չեն հարուցվել կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումներ են կայացվել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Ինչպես արդեն նշել ենք, տղամարդկանց քրեակատարողական հիմնարկներում բարձր է ԳԲՏ անձանց սեռական բռնության և շահագործման ենթարկվելու վտանգը: Սակայն մտահոգության տեղիք է տալիս այն, որ այդ դեպքում ևս ԳԲՏ անձինք վարչակազմին կամ իրավապահ մարմիններին բողոքներ չեն ներկայացնում:

Պարզաբանումներ ստանալու նպատակով դիմել ենք ՀՀ ոստիկանությանը և դատախազությանը: Ոստիկանությունից տեղեկացրել են, որ վերջին 5 տարիների ընթացքում Հայաստանում չեն գրանցվել ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ, 139-րդ հոդվածների 2-րդ մասի 8-րդ կետով և 140-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված հանցագործություններ, որոնք կատարվել են քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող կամ կալանավորված անձանց նկատմամբ՝ ազատազրկված այլ անձանց կողմից[284]: Դատախազությունից ևս հայտնել են, որ վերջին 5 տարիների ընթացքում քեակատարողական հիմնարկներում ազատազրկման մեջ գտնվող անձանց նկատմամբ սեռական անձեռնմխելիության կամ սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ չեն կատարվել, նման դեպքերի վերաբերյալ հաղորդումներ չեն ներկայացվել և հետևաբար՝ քրեական գործեր չեն հարուցվել[285]:

---

[282] ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «Խտրականության դրսևորումները ԼԳԲՏ ազատազրկված անձանց նկատմամբ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում», 2018թ., http://bit.do/fNgoz:

[283] «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-89 գրության պատասխան, http://bit.do/fNdVf:

[284] «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-92 գրության պատասխան, http://bit.do/fNdWi:

[285] «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-93 գրության պատասխան, http://bit.do/fNdWm:

Նելսոն Մանդելայի կանոնները սահմանում են բողոքներ ներկայացնելու պայմանները և նշում, որ հաշվեհարդարի, ահաբեկման կամ բողոքելու պատճառով որևէ այլ բացասական հետևանքների ռիսկի կանխարգելման երաշխիքներն ազատությունից զրկված անձանց համար հատուկ կարևորություն ունեն[286]: Եվրոպական բանտային վերանայված կանոնները սահմանում են, որ բանտարկյալները պետք է բանտի ղեկավարությանը կամ իրավասու այլ մարմիններին դիմումներ կամ բողոքներ ներկայացնելու հնարավորություն ունենան: Կարևոր պահանջ է այն, որ բանտարկյալները չպետք է պատժվեն դիմում կամ բողոք ներկայացրած լինելու պատճառով[287]: Ինչ վերաբերում է ազատազրկված ԼԳԲՏ անձանց, ապա նշվում է, որ անհրաժեշտ է մշակել և ներդնել բողոքների գաղտնիությունն ապահովող անկախ համակարգ: Հաշվի առնելով սեռական բռնության մասին հիմնարկի ղեկավարությանը կամ իրավապահ մարմիններին հայտնելու դեպքում հաշվեհարդարի սպառնալիքը՝ կարևոր է, որպեսզի այդ մասին բողոք ներկայացնող ազատազրկված ԼԳԲՏ անձանց գաղտնիության ապահովման երաշխիքներ տրամադրվեն բողոքների քննության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործընթացներում[288]: «Հատուկ կարիքներ ունեցող բանտարկյալների վերաբերյալ ձեռնարկում» նշվում է, որ սեռական բռնության վերաբերյալ բողոքները ղեկավարության կողմից արձագանք չեն ստանում կամ շատ քիչ արձագանք են ստանում հատկապես այն դեպքում, երբ դրանք ներկայացվում են ԼԳԲՏ անձանց կողմից: Բացի այդ, ազատազրկված ԼԳԲՏ անձինք չեն բողոքում, քանի որ վախենում են վրեժխնդիր լինելուց և վիկտիմիզացիայի ենթարկվելուց, ինչպես նաև բանտի ղեկավարության կողմից չեն ապահովվում բավարար և շարունակական պաշտպանությամբ: Ուստի կարևոր է բանտերում պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցառումների շարքում որպես կարևոր բաղադրիչ դիտարկել նաև բողոքների ներկայացման արդյունավետ և հասանելի մեխանիզմի առկայությունը՝ գաղտնիության ապահովման համապատասխան երաշխիքներով: Այդ բողոքներին պետք է արագ արձագանքել, ինչպես նաև անհրաժեշտ է երաշխավորել զոհերի պաշտպանությունը և հանցագործություն կատարած անձանց պատասխանատվության ենթարկել: Այդ գործողությունները հստակ ազդակներ են ուղարկում բռնություններ կատարող ազատազրկված անձանց այն մասին, որ իրենց կողմից կատարված գործողությունները որակվում են որպես հանցագործություն և չեն հանդուրժվում[289]:

Անդրադառնալով ներպետական օրենսդրությանը՝ նշենք, որ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերը սահմանում են ազատազրկված անձանց

---

[286]The United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (the Nelson Mandela Rules), Rules 54-57, http://bit.do/fNdXJ.

[287]European Prison Rules, Rules 70.1-70.13, http://bit.do/fNdXW.

[288]«Միջազգային բանտային բարեփոխում», «ԼԳԲՏԻ անձինք ազատազրկման վայրերում. կանխարգելիչ մշտադիտարկման հիմունքները», 2015թ., էջեր 13-14, http://bit.do/fMuQa:

[289]United Nations Office on Drugs and Crime, “Handbook on Prisoners with Special Needs”, New York, 2009, pages 107, 118, http://bit.do/fMsep.

կողմից առաջարկություններ, բողոքներ և դիմումներ ներկայացնելու և քննարկելու կարգը[290], որոնք ընդհանուր են բոլոր ազատազրկված անձանց համար և հատուկ կարգավորումներ կամ ընթացակարգեր չեն նախատեսում ազատազրկված ԼԳԲՏ անձանց համար՝ հաշվի առնելով նրանց խոցելիությունը:

## *2.13. Ազատման նախապատրաստում և վերասոցիալականացում*

Քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը հանգեցնում է նրանց համար անբարենպաստ պայմանների ստեղծմանը, ինչը հետագայում խոչընդոտներ է առաջացնում հասարակության մեջ վերաինտեգրվելիս: Արդյունավետ վերաինտեգրման և վերասոցիալականացման տեսանկյունից կարևոր է ապահովել ծառայությունների և ծրագրերի շարունակականությունն ինչպես անձանց ազատազրկելուց, այնպես էլ ազատ արձակելուց հետո: Բացի այդ, անհրաժեշտ է ազատազրկված ԼԳԲՏ անձանց ներհատուկ կարիքներին ուշադրություն դարձնել ինչպես ազատազրկման, այնպես էլ արձակմանը նախապատրաստելու, հետազատման և վերասոցիալականացման ընթացքում: Նշված փուլերում ԼԳԲՏ անձանց տրամադրվող հատուկ աջակցության անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք գործոններով՝ ընտանեկան կապերի բացակայություն, բանտում ունեցած փորձառություն, համայնքում աջակցության համարժեք մեխանիզմների բացակայություն և այլն: Բացի այդ, ազատ արձակվելուց հետո ԼԳԲՏ անձինք կրկնակի խոցելի վիճակում են հայտնվում, քանի որ սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված կարծրատիպերին ավելանում է նաև ազատազրկվածի կարգավիճակ ունենալը:

Ոլորտը կանոնակարգող ներպետական իրավական ակտերը կալանքից կամ պատժից ազատվող անձանց օժանդակություն ցուցաբերելու հարցում քրեակատարողական հիմնարկների վարչակազմի համար որոշ պարտականություններ են նախատեսում: Վարչակազմը նշված անձանց ապահովում է մինչև իրենց բնակության վայր անվճար ուղևորությամբ, դրա ընթացքում անհրաժեշտ սննդամթերքով, միջոցների բացակայության դեպքում՝ սեզոնային հագուստով, անհրաժեշտության դեպքում տրամադրում է նաև միանվագ դրամական նպաստ[291]: ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը վարչակազմի համար պարտականություններ է սահմանում նաև պատժից ազատվող դատապարտյալի աշխատանքը և կենցաղը կարգավորելու հարցերում: Այդ նպատակով դատապարտյալի հետ անցկացվում է համապատասխան աշխատանք: Մասնավորապես, ազատազրկման ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 6 ամիս առաջ

---

[290]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 15, http://bit.do/fLtyB, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 18, http://bit.do/fLtyC: «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, բաժին 18, http://bit.do/fLtyF:

[291]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 122, http://bit.do/fMAfX: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 43, http://bit.do/fMAfY:

հիմնարկի վարչակազմը դատապարտյալի ընտրած բնակության վայրի՝ տեղական ինքնակառավարման և զբաղվածության պետական ծառայությանը տեղեկացնում է պատժից առաջիկա ազատման, նրա աշխատունակության, կրթության, մասնագիտության, ինչպես նաև բնակարանի առկայության մասին: Կենսաթոշակային տարիքի հասած կամ 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող դատապարտյալին, իր խնդրանքով և պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի ներկայացմամբ, սոցիալական ապահովության մարմիններն ուղարկում են հաշմանդամություն ունեցող անձանց կամ տարեցների համար նախատեսված հիմնարկներ (ծերանոցներ)[292]: Կալանավորված անձանց և դատապարտյալներին ազատ արձակելու կարգը և պայմանները սահմանում է Ներքին կանոնակարգը[293]: ՀՀ արդարադատության նախարարի 2016թ. հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանի համաձայն՝ դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ են կատարվում ազատմանը նախապատրաստելու փուլում: Այդ աշխատանքները ներառում են դատապարտյալներին աշխատանքային, սոցիալ-կենցաղային ապահովման հարցերում օժանդակելը, պատժի կրումից ազատվելուց հետո հասարակությանը վերաինտեգրվելու, շրջապատող միջավայրում գտնվող անձանց հետ փոխհարաբերությունների բարելավման ուղղությամբ միջոցառումներ իրականացնելը[294]:

Խնդիրն այն է, որ ազատմանը նախապատրաստելու ընթացակարգը և այդ փուլում իրականացվող սոցիալ-հոգեբանական և իրավական աշխատանքներն ընդհանուր են բոլոր ազատազրկված անձանց համար և նկատի չեն առնում ԼԳԲՏ անձանց վերասոցիալականացման առանձնահատկությունները: Օրինակ, առկա չէ ազատմանը նախապատրաստելու փուլում աջակցություն տրամադրելու մեխանիզմ այն ԼԳԲՏ անձանց, որոնց կապն ընտանիքի հետ խզված է: Առկա չեն պրոբացիայի ծառայության, զբաղվածության կենտրոնների կամ համայնքային կազմակերպությունների հետ համագործակցության ծրագրեր՝ ուղղված ԼԳԲՏ անձանց կացարանով և աշխատանքով ապահովելուն կամ որոշակի ժամանակահատվածով սոցիալական աջակցություն տրամադրելուն: Բացակայում են ազատվելուց հետո իրականացվող վերասոցիալականացման կամ խնամքի ծրագրերը, որոնք կարող են կազմակերպվել համայնքային կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Ընդ որում, նմանատիպ ծրագրերի առկայության դեպքում ևս անհրաժեշտ է աշխատանքների կազմակերպման ժամանակ պահպանել

[292]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 121, http://bit.do/fMAf2:

[293]«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, բաժին 29, http://bit.do/fMAf7:

[294]«Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու և հհ արդարադատության նախարարի 2008թ. մայիսի 30-ի թիվ 44-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2016թ. հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրաման, գլուխ 4, http://bit.do/fNdNW:

անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վերաբերյալ տվյալների գաղտնիությունը:

Ազատազրկված անձանց վերաանցիալականացումն ամրագրվել է որպես քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության առանցքային նպատակ: Նախատեսվում է քրեակատարողական համակարգում ստեղծել և զարգացնել այնպիսի նախադրյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի արդյունավետ կերպով իրացնել վերականգնողական արդարադատության գաղափարախոսությունը և ապահովել պատժի կիրառման նպատակայնությունը: Բացի այդ, նախատեսվում է վերաանցիալականացման և հասարակությունում վերաինտեգրման ծրագրեր ներդնելու միջոցով կատարելագործել հանցանք կատարած անձանց՝ հասարակություն վերաինտեգրվելուն ուղղված քաղաքականությունն ինչպես ազատազրկման ընթացքում, այնպես էլ ազատ արձակվելուց հետո[295]:

Նշված գործընթացում խոցելի խմբի ազատազրկված անձանցից հատուկ ուշադրություն է դարձվում միայն անչափահասներին այն հիմնավորմամբ, որ նրանց նկատմամբ չեն կարող կիրառվել ընդհանուր բնույթի միջոցառումներ, որոնք կարող են հատուկ լինել չափահաս դատապարտյալներին: Մտահոգության տեղիք է տալիս այն, որ ազատազրկված ԼԳԲՏ անձանց կարիքներին համահունչ վերաանցիալականացման ծրագրեր կամ նրանց սոցիալական վերաինտեգրումը երաշխավորող հատուկ միջոցառումներ ռազմավարությամբ նախատեսված չեն, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ վերաանցիալականացման փուլում ևս նշված խմբի անձանց հիմնախնդիրների կարգավորումը չի դիտարկվում որպես առաջնահերթություն:

## *2.14. Քրեակատարողական հիմնարկների աշխատողների ուսուցում և վերապատրաստում*

Քրեակատարողական համակարգում ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքը մեծապես պայմանավորված է հիմնարկների անձնակազմի վերաբերմունքով: ԼԳԲՏ անձանց անվտանգությունը և պաշտպանությունն ապահովելու, քրեակատարողական հիմնարկներում նրանց հատուկ կարիքներին պատշաճ արձագանքելու համար կարևոր է ունենալ բավարար քանակությամբ լավ պատրաստված անձնակազմ: Բացի այդ, անհրաժեշտ է աշխատակազմի համար դասընթացներ և վերապատրաստումներ կազմակերպել սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքի և ազատազրկված ԼԳԲՏ անձանց հատուկ կարիքների թեմաներով: Այդ դասընթացները պետք է

[295]«ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023թթ. միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. նոյեմբերի 28-ի թիվ 1717-Լ որոշում, http://bit.do/fMAf8:

ներառեն թեմաներ սեռական շահագործման կամ բռնության ենթարկված ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքների կազմակերպման հատուկ ընթացակարգերի, նրանց մոտ երկյուղի կամ սթրեսի նշանների, ինքնավնասումների և ինքնասպանության հակումների բացահայտման հմտությունների վերաբերյալ[296]: Անհրաժեշտ է համապատասխան աշխատակիցների համար վերապատրաստումներ կազմակերպել խոցելի խմբերի անձանց անձնական խուզարկություն անցկացնելու առանձնահատկությունների վերաբերյալ՝ շեշտադրելով այդ ընթացքում խտրականության բացառումը[297]: Խրախուսվում է այդ ուսուցման և վերապատրաստման ծրագրերի շարունակական վերլուծություն իրականացնել: Ազատազրկված անձանց տրամադրվող հոգեբանական աջակցության արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն հոգեբանների մասնագիտական վերապատրաստումները, որոնք ներառում են թեմաներ միջանձնային հարաբերությունների և կոնֆլիկտների հաղթահարման, խտրականությունից զերծ վերաբերմունքի ապահովման վերաբերյալ[298]:

ԽԿԵ-ն ևս պետություններին կոչ է անում ապահովել քրեակատարողական հիմնարկների անձնակազմի վերապատրաստումները և իրազեկվածության բարձրացումը մարդու իրավունքների միջազգային չափանիշների վերաբերյալ՝ ներառելով թեմաներ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության, ԼԳԲՏ անձանց հետ արդյունավետ հաղորդակցության, նրանց կարիքների բացահայտման և պատշաճ արձագանքի վերաբերյալ[299]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեակատարողական բժշկության ոլորտի աշխատողներն ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ շատ հաճախ տարբերակված և խտրական վերաբերմունք են դրսևորում, անհրաժեշտ է այդ աշխատողների համար ևս կազմակերպել համապատասխան դասընթացներ նշված խմբի անձանց հետ աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունների վերաբերյալ: Պետք է միջոցներ ձեռնարկել, որպեսզի ազատազրկված տրանս անձինք հատուկ վերապատրաստում անցած բուժանձնակազմի հսկողության տակ լինեն:

Այս առումով ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման հարցերով հատուկ զեկուցողը պետություններին կոչ է անում հիմնարկների անձնակազմի համար կազմակերպել հատուկ դասընթացներ և հմտությունների զարգացման ծրագրեր՝ ուղղված ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ զգայունության

---

296United Nations Office on Drugs and Crime, “Handbook on Prisoners with Special Needs”, New York, 2009, page 114, http://bit.do/fMsep.

297«Միջազգային բանտային բարեփոխում», «ԼԳԲՏԻ անձինք ազատազրկման վայրերում. կանխարգելիչ մշտադիտարկման հիմունքները», Ազատազրկման վայրերում մշտադիտարկման ձեռնարկ, 2015թ., էջ 12, http://bit.do/fMuQa:

298ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2018թ. գործունեության հաշվետվություն», Հայաստան, 2019թ., էջ 51, http://bit.do/fMuWR:

2999th Annual report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 22 March 2016, CAT/C/57/4, para. 79, http://bit.do/fNkbj.

բարձրացմանը[300]: Այդ դասընթացների մոդուլները կազմելիս պետք է հիմնվել Ջոկյակարտյան սկզբունքների վրա, ինչպես նաև խորհրդակցել ԼԳԲՏ անձանց հարցերով մասնագիտացած կազմակերպությունների հետ: Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի կողմից մշակված մշտադիտարկման ձեռնարկում նշվում է, որ ոլորտային կազմակերպությունների ներգրավումը դասընթացների կազմակերպմանը և անցկացմանը շատ օգտակար է: Բացի այդ, անձնակազմը պետք է վերապատրաստվի հատուկ թեմաների շուրջ, որոնք վերաբերում են խտրական վերաբերմունքի բացառմանն ազատազրկված ԼԳԲՏ անձանց անձնական խուզարկությունների անցկացման, դասակարգման և տեղաբաշխման, ինչպես նաև բռնությունների որոշ տեսակների և վիկտիմիզացիայի բացահայտման ընթացքում[301]: Ջոկյակարտյան 9-րդ սկզբունքը սահմանում է, որ բանտի անձնակազմի համար պետք է վերապատրաստման և իրազեկվածության բարձրացման դասընթացներ կազմակերպել մարդու իրավունքների միջազգային չափանիշների, հավասարության և խտրականության արգելքի սկզբունքների թեմաներով, որոնք կվերաբերեն նաև սեռական կողմնորոշմանը և գենդերային ինքնությանը[302]:

Ինչ վերաբերում է առանձին երկրների փորձին, ապա, օրինակ, Չիլիում այն դեպքից հետո, երբ ազատությունից զրկված տրանս կնոջը ստիպել են մերկ կանգնել մնացած ազատազրկված անձանց առջև, խուզարկության են ենթարկել տղամարդ աշխատակիցներ, ներքնաշորերը դիտավորյալ պատռել են և աշխատակիցները ծաղրուծանակի են ենթարկել, Իկիկեի շրջանային դատարանը որոշում է կայացրել, որ անհրաժեշտ է համապատասխան ուսումնական կենտրոնի կողմից բանտի անձնակազմի համար վերապատրաստում անցկացնել գենդերային ինքնության, սեռական կողմնորոշման և գենդերային արտահայտման հետ կապված թեմաների շուրջ[303]:

Անդրադառնալով ներպետական կարգավորումներին՝ նշենք, որ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի և քրեակատարողական հիմնարկների թափուր հաստիքային միավորների համալրումը կատարվում է «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 14 և 14.1 հոդվածներին համապատասխան, որոնք սահմանում են ծառայության անցնելուն ներկայացվող հիմնական պահանջները և քրեակատարողական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի պայմանները[304]: Քրեակատարողական ծառայողին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են «Քրեակատարողական և հարկադիր կատարման ծառայողներին ներկայացվող

---

[300]Report of the Special Rapporteur on torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment, 5 January 2016, A/HRC/31/57, para. 7(z), http://bit.do/fNgsD.

[301]Association for the Prevention of Torture, “Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide”, 2018, Geneva, page 95, http://bit.do/fNgsV.

[302]The Yogyakarta Principles on the Application of International Human Rights Law in Relation to Sexual Orientation and Gender Identity, 2007, 9G, http://bit.do/fM3Q3.

[303]Association for the Prevention of Torture, “Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide”, 2018, Geneva, page 96, http://bit.do/fNgsV:

[304]«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 14, 14.1, http://bit.do/fLZ2r:

մասնագիտական պահանջները սահմանելու մասին» ՀՀ փոխվարչապետի 2020թ. հուլիսի 30-ի թիվ 461-Ն որոշմամբ[305]:

Քրեակատարողական ծառայություն դիմած և պաշտոնի անցնելու համար սահմանված պահանջները բավարարող այն քաղաքացիները, որոնք չունեն աշխատանքային փորձ, մրցույթը հաղթահարելուց հետո մինչև պաշտոնի նշանակվելը ներգրավվում են մեկամյա ուսումնական դասընթացներում: Նրանց ուսումնական դասընթացում ներգրավվելու, դասընթաց անցնելու կարգը, պայմանները և դասընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման կարգը սահմանված են «Քրեակատարողական և հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ուսումնական դասընթացում ներգրավվելու, դասընթաց անցնելու կարգը, պայմանները և դասընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման կարգը սահմանելու մասին» ՀՀ փոխվարչապետի 2020թ. հուլիսի 30-ի թիվ 462-Ն որոշմամբ[306]: Ուսումնական դասընթացն անցկացվում է «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ում: Դասընթացների ընթացքում դասավանդվում են ծառայության գործունեությանն առնչվող իրավական ապահովմանը վերաբերող թեմաներ, հատուկ ուսուցման ժամանակ՝ կրակային և ֆիզիկական պատրաստականություն:

Բացառությամբ քրեակատարողական հիմնարկի պետերի պաշտոնների, քրեակատարողական ծառայության մյուս պաշտոններն զբաղեցվում են մրցույթի արդյունքներով: Մրցույթի անցկացման կարգը սահմանված է «Քրեակատարողական և հարկադիր կատարման ծառայությունների պաշտոններ զբաղեցնելու մրցույթի անցկացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 16-ի թիվ 1217-Ն որոշմամբ[307]: Քրեակատարողական համակարգում ծառայության անցած անձանց վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացները ևս կազմակերպում է «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ արդարադատության նախարարի հրամանով հաստատված ժամանակացույցով:

Սակայն խնդիրն այն է, որ վերոնշյալ իրավական ակտերում ամրագրված չէ ազատազրկված անձանց նկատմամբ հավասար վերաբերմունքի և խտրականության արգելքի պահանջը, անդրադարձ չի կատարվում հատուկ կարիքներ ունեցող ազատազրկված անձանց հետ աշխատանքների կազմակերպման առանձնահատկություններին: Քրեակատարողական ծառայության տրամադրած պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ հաշվի առնելով քրեակատարողական

[305]«Քրեակատարողական և հարկադիր կատարման ծառայողներին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանելու մասին» ՀՀ փոխվարչապետի 2020թ. հուլիսի 30-ի թիվ 461-Ն որոշում, http://bit.do/fLZ3D:

[306]«Քրեակատարողական և հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ուսումնական դասընթացում ներգրավվելու, դասընթաց անցնելու կարգը, պայմանները և դասընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման կարգը սահմանելու մասին» ՀՀ փոխվարչապետի 2020թ. հուլիսի 30-ի թիվ 462-Ն որոշում, http://bit.do/fLZ4p:

[307]«Քրեակատարողական և հարկադիր կատարման ծառայությունների պաշտոններ զբաղեցնելու մրցույթի անցկացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 16-ի թիվ 1217-Ն որոշում, http://bit.do/fNgtG:

համակարգի և ազատազրկված անձանց հետ իրականացվող աշխատանքների առանձնահատկությունները՝ այդ դասընթացների մեջ ներառվում են թեմաներ խոցելի խմբերի հետ աշխատանքի, անձնական տվյալների պաշտպանության և միջանձնային հարաբերությունների հոգեբանական առանձնահատկությունների, խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ պայքարի միջազգային չափանիշների և կոնֆլիկտների կառավարման վերաբերյալ[308]: Սակայն վերոնշյալ իրավական ակտերում ամրագրված չէ այդ դասընթացների մեջ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հետ կապված թեմաները ներառելու պահանջը:

Քրեակատարողական հիմնարկների հոգեբանների և սոցիալական աշխատողների համար չեն անցկացվում ազատազրկված ԼԳԲՏ անձանց հետ սոցիալ-հոգեբանական աշխատանքները կազմակերպելուն ուղղված նեղ մասնագիտական ուսուցումներ[309]: Հարցումների միջոցով պարզել ենք, որ նմանատիպ դասընթաց կազմակերպվել է 2018թ. «Նոր սերունդ» մարդասիրական հկ-ի կողմից, որին մասնակցել են քրեակատարողական ծառայողներ, այդ թվում՝ հոգեբաններ և սոցիալական աշխատողներ[310]: Պետք է նշել, որ դասընթացը կազմակերպվել է կազմակերպության նախաձեռնությամբ, և այս առումով համագործակցության մեխանիզմ առկա չէ: Ընդ որում, հկ-ներն այդ դասընթացները կազմակերպում են դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Հետևաբար ծրագրերի ավարտից հետո համապատասխան ֆինանսավորման բացակայության պատճառով հնարավոր չի լինում ապահովել այդ դասընթացների պարբերականությունը կամ շարունակականությունը:

Քրեակատարողական բժշկության ոլորտի մասնագետների շարունակական մասնագիտացված զարգացման ծրագրերը մշակում և իրականացնում է «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ը: Սակայն վերջին տարիներին ՊՈԱԿ-ի միջոցներով հոգեբուժների համար վերապատրաստման դասընթացներ չեն կազմակերպվել: ՀՀ առողջապահության նախարարության կողմից ՊՈԱԿ-ի աշխատակիցների վերապատրաստման համար 2020թ. հունիսին տրամադրվել է 45 բուժաշխատողի վերապատրաստման տեղ, որի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել նաև հոգեբույժների նպատակային վերապատրաստումներ[311]: Դարձյալ մտահոգության տեղիք է տալիս այն, որ քրեակատարողական բժշկության ոլորտի մասնագետների համար չեն կազմակերպվում այնպիսի վերապատրաստման դասընթացներ, որոնք կներկայացնեն ազատազրկված ԼԳԲՏ անձանց կարիքներին համահունչ բժշկական օգնության ու սպասարկման ծառայությունների մատուցման

[308] «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-59 գրության պատասխան, էջեր 1-2, http://bit.do/fNgvM:
[309] «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-59 գրության պատասխան, էջ 2, http://bit.do/fNgvM:
[310] «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 18-17 գրության պատասխան, http://bit.do/fNguj:
[311] «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-94 գրության պատասխան, http://bit.do/fNgxe:

առանձնահատկությունները և այդ ընթացքում խտրականության բացառման անհրաժեշտությունը:

Ավելացնենք, որ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով» նախատեսվում է 2020-2022թթ. ընթացքում քրեակատարողական ծառայողների համար պարբերաբար դասընթացներ իրականացնել կյանքի իրավունքի թեմայով[312]: Արդյունքում ակնկալվում է վերապատրաստել քրեակատարողական ծառայողների 8%-ին, ինչը կհանգեցնի քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի նվազեցմանը[313]:

Քրեակատարողական ծառայությունում կադրային քաղաքականության վերանայումն ամրագրվել է որպես քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության առանցքային նպատակ: Այս ուղղության ռազմավարական նպատակները միտված են քրեակատարողական ծառայության մասնագիտական համապատասխան ներուժ ունեցող կադրերի պատրաստմանը, ըստ այդմ՝ կադրերի ներգրավման մեխանիզմի և սոցիալական երաշխիքների համակարգի փոփոխությանը:

Պաշտպանի դիտարկմամբ՝ քրեական ենթամշակույթի ներկայացուցիչների կողմից հիմնարկներում կարգապահության ապահովման գործառույթի իրականացումը և վարչակազմի հետ վերջիններիս համագործակցությունը բացառելու տեսանկյունից անհրաժեշտ է ուշադրություն դարձնել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի համալրվածությանը և հաստիքների բավարար քանակին, ծառայողների սոցիալական երաշխիքներին և աշխատանքային պայմաններին, մասնագիտական վերապատրաստումներին[314]:

Սակայն ազատազրկված ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները չեն կարևորվել նաև ոլորտին առնչվող ռազմավարության փաստաթղթերում և Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգում:

---

[312]«ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023թթ. միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. նոյեմբերի 28-ի թիվ 1717-Լ որոշում, http://bit.do/fLtkH:

[313]«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշում, հավելված 2, https://bit.ly/3lUVaTH:

[314]ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգ», Երևան, 2018թ., էջեր 9-14, https://bit.ly/3pwU8PY:

# ԳԼՈՒԽ 3

# ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

Քրեակատարողական հիմնարկներում լեսբի, գեյ և բիսեքսուալ անձանցից առավել անբարենպաստ է ազատությունից զրկված տրանս անձանց վիճակը: Հիմնական խնդիրները կապված են տեղաբաշխման, անձնական խուզարկության կազմակերպման, կարիքներին ներհատուկ առողջապահական ծառայությունների հասանելիության, հագուստի, հիգիենայի և խնամքի պարագաների տրամադրման, սեռափոխության վիրահատություն կատարելուց հետո անձը հաստատող փաստաթղթերում անվան և սեռի փոփոխման հետ:

ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 68-րդ[315] և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 31-րդ[316] հոդվածները սահմանում են ազատազրկված անձանց անջատ պահելու հիմքերը: Սակայն նշված չէ՝ ազատազրկված անձանց տեղաբաշխման ժամանակ հիմք է ընդունվում անձի կենսաբանական սեռը, թե գենդերային ինքնությունը: Պարզաբանումներ ստանալու նպատակով դիմել ենք քրեակատարողական ծառայությանը, որտեղից պատասխանել են, որ Հայաստանում ազատազրկված անձանց տեղաբաշխումը կատարվում է անձնագրային տվյալների հիման վրա[317]: Այս սկզբունքն ընդհանուր է բոլոր ազատազրկված անձանց համար և գործում է նաև ազատազրկված տրանս անձանց նկատմամբ, ինչը նշանակում է, որ անձնագրում սեռի նշումը փոխված չլինելու դեպքում տրանս կանայք տեղաբաշխվում են տղամարդկանց, իսկ տրանս տղամարդիկ՝ կանանց քրեակատարողական հիմնարկներում: Տեղաբաշխման այս սկզբունքը մեծացնում է հատկապես տրանս կանանց խոցելիությունը, քանի որ տղամարդկանց հիմնարկներում մեծ է սեռական շահագործման կամ բռնաբարության ենթարկվելու վտանգը: Խնդիրն արձանագրվել է նաև ԽԿԵ-ի կողմից, որն իր 8-րդ տարեկան զեկույցում մտահոգություն է հայտնել՝ նշելով, որ նույնականացման և գրանցման պատշաճ մեխանիզմների բացակայությունը հանգեցնում է տրանսգենդեր կանանց՝ տղամարդկանց համար նախատեսված հիմնարկներում տեղաբաշխմանը, որտեղ նրանք բռնաբարության մեծ ռիսկի են ենթարկվում՝ հաճախ բանտի աշխատակիցների մասնակցությամբ[318]:

---

[315] ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 68, կետ 1.1, http://bit.do/fNh8F:

[316] «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 31, կետ 1.1, http://bit.do/fNh8L:

[317] «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 18-18 գրության պատասխան, http://bit.do/fNh7Z:

[318] 8th Annual Report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, CAT/C/54/2 para. 68, http://bit.do/fNiag. 9th Annual Report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, CAT/C/57/4, para. 66, http://bit.do/fNj83.

Ինչ վերաբերում է միջազգային տարբեր փաստաթղթերով սահմանված սկզբունքներին, ապա Եվրոպական բանտային վերանայված կանոնների 15.1(ա) կանոնը նշում է, որ բանտ ընդունման պահին յուրաքանչյուր բանտարկյալի վերաբերյալ պետք է անհապաղ գրառվեն նաև նրա ինքնության մասին տեղեկությունները[319]: Նելսոն Մանդելայի կանոնների 7(ա) կանոնը սահմանում է, որ հիմնարկ ընդունվելիս յուրաքանչյուր ազատազրկված անձի անձնական գործում ավելացվում է տեղեկություն նրա ինքնության մասին՝ հարգելով անձի՝ իր սեռի ինքնաընկալումը[320]: Նշված կարգավորումները կարող են նպաստել, որպեսզի ազատազրկված տրանս անձանց տեղաբաշխումը կանանց կամ տղամարդկանց հիմնարկներում իրենց ընտրությամբ կատարվի: Բանտի ղեկավարությանը ներկայացվող հիմնական պահանջն այն է, որ ազատազրկված տրանս անձանց տեղաբաշխումն ազատությունից զրկելու վայրերում, իսկ այնուհետև՝ խցերում կատարվի մեծագույն զգուշավորությամբ՝ ազատազրկված անձանցից տեղեկանալով՝ նրանք ցանկանում են գտնվել տղամարդկանց, թե կանանց համար նախատեսված հիմնարկում: Այս առումով ԽԿԵ-ն առաջարկում է, որպեսզի նախքան տրանսգենդեր անձանց տեղաբաշխելը նկատի առնվեն նրանց կարիքները և տեղաբաշխման ու ազատազրկման ընթացքում պաշտպանության մասին որոշումները կատարվեն նրանց տեղեկացված համաձայնությամբ[321]: «Հատուկ կարիքներ ունեցող բանտարկյալների վերաբերյալ ձեռնարկում» նշվում է, որ հնարավոր չէ տրանսգենդեր անձանց տեղաբաշխման վերաբերյալ հստակ ցուցումներ տալ, քանի որ անձինք կարող են մի սեռից մյուսին անցման փուլում լինել: Ուստի տեղաբաշխումը պետք է կազմակերպվի նրանց հետ խորհրդակցելով և անհատական սկզբունքով՝ հաշվի առնելով անձի ցանկությունը և անվտանգության ապահովման նկատառումները[322]:

Անդրադառնալով առանձին երկրների փորձին՝ նշենք, որ ամերիկյան շատ բանտերում տրանսգենդեր անձանց տեղաբաշխում են ծննդյան սեռի հիման վրա[323], ինչը մեծացնում է սեռական բռնության վտանգը: Այս պրակտիկան բավականին տարածված է՝ չնայած “Prison Rape Elimination Act”-ի կարգավորումներին, որոնք արգելում են զուտ կենսաբանական սեռի հիման վրա տեղաբաշխումը: Նշված կարգավորումները պահանջում են տրանսգենդեր անձանց անհատական գնահատում իրականացնել՝ միևնույն ժամանակ նկատի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են առողջությունը, անվտանգության նկատառումները,

---

[319]European Prison Rules, Rule 15.1(a), http://bit.do/fNibN.

[320]The United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (the Nelson Mandela Rules), Rule 7(a), http://bit.do/fNibk.

[321]«Միջազգային բանտային բարեփոխում», «ԼԳԲՏԻ անձինք ազատազրկման վայրերում. կանխարգելիչ մշտադիտարկման հիմունքները», Ազատազրկման վայրերում մշտադիտարկման ձեռնարկ, 2015թ., էջ 11, http://bit.do/fMuQa:

[322]United Nations Office on Drugs and Crime, “Handbook on Prisoners with Special Needs”, New York, 2009, page 115, http://bit.do/fMsep.

[323]Harvard Note, “Classification and Housing of Transgender Inmates in American Prisons”, 127 Harv. L. Rev., 2014, page 1746, http://bit.do/fMTxH.

տրանսգենդեր անձանց կարծիքը և մտահոգությունները: Կենսաբանական սեռի հիման վրա տեղաբաշխումը, որը նկատի չի առնում բռնության վտանգները, կարող է դիտարկվել որպես ԱՄՆ Սահմանադրության 8-րդ փոփոխության խախտում[324]:

Ամերիկյան բանտային համակարգում գենդերային ինքնության հիման վրա տեղաբաշխումը համեմատաբար քիչ է կիրառվում: 2002թ. Կալիֆոռնիայի Սան Ֆրանցիսկո քաղաքը սկսել է կիրառել «Սան Ֆրանցիսկոյի շրջանի բանտում տրանսգենդեր անձանց նկատմամբ վերաբերմունքի օրինակելի արձանագրությունները», որոնք բանտի աշխատակիցներից պահանջում են գնահատել ազատազրկված անձանց խոցելիությունը[325]: Եթե տրանսգենդեր անձն իրեն նույնականացնում է որպես կին, ապա նա տեղաբաշխվում է կանանց մասնաշենքում: Իսկ այն տրանսգենդեր կանանց, ովքեր սեռափոխության վիրահատություն չեն անցել, վարչակազմը տեղաբաշխում է խոցելի կանանց բաժնում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված արձանագրությունները կիրառելուց հետո Սան Ֆրանցիսկոյի շրջանի բանտում նվազել են սեռական ոտնձգությունները[326]:

2009թ. Վաշինգտոնում որդեգրվել է մի քաղաքականություն, որը հնարավորություն է տալիս տրանսգենդեր անձանց տեղաբաշխել ըստ գենդերային ինքնության: Այդ նպատակով ստեղծվում է տրանսգենդեր անձանց հարցերով հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են պրակտիկ բժիշկ, հոգեկան առողջության կլինիկական բժիշկ, ուղղիչ ծառայությունից վերահսկող, դեպք վարող և կամավոր, որը մասնագիտացած է տրանսգենդեր անձանց հարցերով: Հանձնաժողովը գնահատում է տրանսգենդեր անձանց կարիքներն ու խոցելիությունը և ըստ այդմ որոշում նրանց տեղաբաշխումը կանանց կամ տղամարդկանց բանտում: Նշված քաղաքականությունը կարևոր ձեռքբերում է այն առումով, որ տեղաբաշխման որոշումը կայացնելիս նկատի են առնվում ինչպես տրանսգենդեր անձանց, այնպես էլ առողջապահության ոլորտի մասնագետների կարծիքը[327]:

2011թ. մարտին Իլինոիս նահանգի Կուկ շրջանի բանտն ազատությունից զրկված տրանսգենդեր անձանց համար ներդրել է նոր քաղաքականություն, որի համաձայն գենդերային ինքնության հարցերով հանձնաժողովը պարբերաբար հանդիպումներ է անցկացնում՝ վերանայելու յուրաքանչյուր ազատազրկված տրանսգենդեր անձի համար կազմված ծրագիրը, այդ թվում՝ տղամարդկանց կամ կանանց հետ նրանց տեղաբաշխումը[328]:

---

[324]National Center for Transgender Equality, “LGBTQ People Behind Bars: A Guide to Understanding the Issues Facing Transgender Prisoners and Their Legal Rights”, page 14, http://bit.do/fNidP.

[325]Murray D. Scheel & Claire Eustace, (2002), “Model Protocols on the Treatment of Transgender Persons by San Francisco County Jail”, National Lawyers Guild & City & County of San Francisco Human Rights Commission, http://bit.do/fMiPV.

[326]Schweikart J., S., “Appropriate Placement and Treatment of Transgender Prisoners: Constitutional Concerns and Arguments for Alternative Housing and Treatment Policies”, American Medical Association, 2018, page 8, http://bit.do/fMiQi.

[327]Hagner, D., Fighting for Our Lives: The D.C. Trans Coalition’s Campaign for Humane Treatment of Transgender Inmates in District of Columbia Correctional Facilities. 11 GEO. J. GENDER & L. 837, 861 (2010), http://bit.do/fMiRB.

[328]Lu, A., The New York Times, “For Transgender Detainees, a Jail Policy Offers Some Security”, 2011, http://bit.do/fNiem.

Ավստրալիայի քրեական արդարադատության համակարգում գործում է տեղաբաշխման անհատական ընթացակարգը, որը հիմնվում է անձանց գենդերային ինքնության և անվտանգության ապահովման նկատառումների վրա: Տեղաբաշխման հարցում երկու մոտեցում է գործում: Առաջինի դեպքում կարևորվում է ինքնության սոցիալական կողմը և այն, թե անձն իրեն ինչպես է նույնականացնում: Երկրորդի դեպքում կարևորվում է այն, թե արդյոք անհատը ենթարկվել է սեռափոխության վիրահատության, թե՝ ոչ: Տեղաբաշխումը կատարվում է անհատական մոտեցմամբ և այն սկզբունքով, որ անձինք գտնվեն իրենց գենդերային ինքնությանը համապատասխանող բանտում: Օրինակ, տրանսգենդեր կանայք տեղաբաշխվում են կանանց բանտերում բացառությամբ այն դեպքերի, երբ կա այդ կամ այլ կանանց անվտանգության ապահովման հետ կապված խնդիր: Այս կանոնից բացառություն են կազմում տրանսգենդեր տղամարդիկ: Նրանց տեղաբաշխում են ոչ թե տղամարդկանց, այլ կանանց բանտերում՝ ելնելով անվտանգության, ինչպես նաև տղամարդկանց բանտերում սեռական բռնության հավանականության նկատառումներից[329]:

Կանադայում տեղաբաշխումը կատարվում է կենսաբանական սեռի հիման վրա: Սակայն 2017թ. դեկտեմբերի 27-ից Կանադայի Ուղղիչ ծառայությունում սկսել է գործել նոր քաղաքականություն, որի համաձայն տղամարդկանց կամ կանանց հաստատություններում տեղաբաշխումը կատարվում է անձանց գենդերային ինքնության հիման վրա: Միևնույն ժամանակ միջոցներ են ձեռնարկվում անձի գենդերային ինքնությանը վերաբերող տեղեկատվության գաղտնիությունն ապահովելու համար՝ այն տվյալ անձի խնամքով զբաղվող աշխատակիցներին տրամադրելով միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Բանավոր շփման ժամանակ և փաստաթղթերում օգտագործվում են անձի նախընտրած անունը և դերանունը (he կամ she): Անհատական մոտեցում է ցուցաբերվում այն անձանց, ովքեր իրենց գենդերային ինքնությամբ պայմանավորված հատուկ մոտեցումների կարիք ունեն, օրինակ, լոգանքից կամ զուգարանից օգտվելիս, անձնական խուզարկությունների ժամանակ և այլն: Տրանսգենդեր անձինք հնարավորինս ապահովվում են իրենց նախընտրած հագուստով և անձնական իրերով[330]: Նշենք, որ Կանադայում առաջին տրանսգենդեր անձը, ով տղամարդկանց բանտից տեղափոխվել է կանանց բանտ, Ֆալոն Օբին է: Նա ցմահ ազատազրկման է դատապարտվել 2003թ.[331]:

Շոտլանդիայի Բանտային ծառայությունում 2014թ. սկսել է գործել «Գենդերային ինքնության և գենդերի վերափոխության քաղաքականությունը», որի համաձայն տեղաբաշխման ժամանակ գործում է անհատական մոտեցման

---

[329]Mann, R., “The Treatment of Transgender Prisoners, Not Just an American Problem-A Comparative Analysis of American, Australian, and Canadian Prison Policies Concerning the Treatment of Transgender Prisoners and a “Universal” Recommendation to Improve Treatment”, Tulane Journal of Law and Sexuality, Vol. 15 (2006), pages 117, 119, http://bit.do/fNie9.

[330]Interim Policy Bulletin 584 Bill C-16 (Gender Identity or Expression), http://bit.do/fNifm.

[331]Harris, K., Transgender inmate hopes to make history with transfer to women's prison, 2017, http://bit.do/fMiYP

սկզբունքը: Տեղաբաշխումը և պահման պայմանները պետք է լավագույնս համապատասխանեն անձի գենդերային ինքնությանը և կարիքներին: Իսկ անձին սեռափոխությամբ պայմանավորված առանձին բնակեցնելու յուրաքանչյուր դեպք պետք է գնահատվի և առաջնահերթության կարգով բավարարվի: Քաղաքականությամբ մշակված ուղենիշները պահման պայմանների տեսանկյունից կարևորում են ազատազրկված անձի անվտանգության, արժանապատվության և գաղտնիության պահպանումը[332]:

Անգլիայում և Ուելսում կիրառվում է «Տրանսգենդեր իրավախախտների խնամք և կառավարում»[333] ուղեցույցը, որը սահմանում է գենդերային ինքնության մասին տեղեկատվություն տրամադրելու, տրանսգենդեր անձանց տեղաբաշխելու, անձնական խուզարկություն անցկացնելու, առողջապահական խնամքը կազմակերպելու, գենդերային ինքնությանը համապատասխան կեցությամբ և խնամքի ու հիգիենայի պարագաներով ապահովելու, նրանց կողմից բողոքների ներկայացման և քննարկման, ազատմանը նախապատրաստելու հետ կապված ընթացակարգեր: Ուղեցույցով նախատեսված է նաև անվանափոխությունը բանտից սկսելու մեխանիզմ: Նշվում է, որ տրանսգենդեր անձանց տեղաբաշխման ժամանակ պետք է հիմք ընդունել գենդերի ճանաչման վկայականում մատնանշված սեռը: Իսկ այն անձինք, ովքեր չունեն այդ վկայականը, պետք է տեղաբաշխվեն իրենց գենդերային ինքնությանը համապատասխան բանտում: Ավելացնենք, որ Լոնդոնում գործող «Բանտային բարեփոխումների հիմնադրամը» ազատազրկված տրանսգենդեր անձանց համար վերոնշյալ ուղեցույցի հիման վրա մշակել է տեղեկատվական թերթիկ[334]:

Հայաստանում ազատազրկված տրանս անձանց տեղաբաշխման վերաբերյալ հատուկ օրենսդրական կարգավորումներ կամ ընթացակարգեր առկա չեն, ինչն առաջ է բերում մի շարք խնդիրներ: Ընդհանուր սկզբունքով տեղաբաշխման հետևանքով անձանց գենդերային ինքնությամբ պայմանավորված հատուկ կարիքները նկատի չեն առնվում նրանց հագուստով, խնամքի և հիգիենայի պարագաներով ապահովելու ժամանակ: Ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրության համաձայն՝ դատապարտյալները[335], իսկ կալանավորված անձինք՝ անհրաժեշտության դեպքում[336], ապահովվում են միասնական նմուշի հագուստով՝ ըստ տարվա եղանակի, բնակլիմայական պայմանների՝ հաշվի առնելով նրանց սեռը: Տվյալ դեպքում վարչակազմի համար հիմքը ոչ թե անձի գենդերային ինքնությունն է, այլ անձնագրային սեռը, ինչը նշանակում է, որ անձնագրում սեռի նշումը փոխված չլինելու դեպքում տրանս կանայք ապահովվում են տղամարդկանց, իսկ տրանս տղամարդիկ՝ կանանց համար նախատեսված միասնական նմուշի հանդերձանքով:

[332]Scottish Prison Service, “Gender Identity and Gender Reassignment Policy”, 2014, http://bit.do/fNifr.
[333]Ministry of Justice, UK, “Review on the Care and Management of Transgender Offenders”, 2016, http://bit.do/fMkma.
[334]Prison Reform Trust, Advice and Information Service, “Information sheet for transgender people in prison”, http://bit.do/fMkoz .
[335]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 75, կետ 1, http://bit.do/fLZXG:
[336]«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 20, http://bit.do/fLZXH:

Ներպետական օրենսդրության հիմնական բացթողումներից է նաև այն, որ ազատազրկված տրանս անձանց կարիքներին ներհատուկ խնամքի և հիգիենայի պարագաներ չեն տրամադրվում, թեև ոլորտը կարգավորող օրենսդրությունը սահմանում է, որ ազատազրկված անձինք պետք է ապահովված լինեն իրենց հիգիենայի պահանջները բավարարելու համար մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններով[337]: Ներքին կանոնակարգը սահմանում է, որ ազատազրկված անձանց հիգիենայի պայմանները և կանոնները պահպանելու նպատակով հիմնարկի վարչակազմն ազատազրկված անձանց ապահովում է համապատասխան միջոցներով, այդ թվում՝ հիմնական մաքրող միջոցներով և նյութերով[338]: Ազատազրկված անձանց տրամադրվող հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանված են ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 15-ի թիվ 1182-Ն որոշման Հավելված 3-ով[339], ըստ որի՝ հիգիենիկ պարագաների մեջ ներառված են տնտեսական և ձեռքի օճառը, լվացքի փոշին, սպասք լվանալու նյութերը, ատամի մածուկը և խոզանակը, զուգարանի թուղթը, մեկանգամյա օգտագործման սափրող սարքը և կանացի հիգիենայի միջոցները: Հիգիենիկ պարագաների առանձին ցանկ նախատեսված է միայն իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձանց համար: Նշված իրավական ակտերով որևէ կարգավորում նախատեսված չէ ազատազրկված տրանս անձանց իրենց կարիքներին համապատասխան հիգիենայի կամ խնամքի պարագաներով ապահովելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է առանձին երկրների փորձին, ապա Ավստրալիայում Նոր Հարավային Ուելսի բանտային համակարգը կիրառում է մի քաղաքականություն, որը սահմանում է, որ տրանսգենդեր անձինք կարող են օգտագործել առանձին զուգարան և լողասենյակ և իրավունք ունեն կրել իրենց սեռին համապատասխանող հագուստ[340]:

Հաջորդ խնդիրը, որը մտահոգության տեղիք է տալիս, Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված տրանս անձանց կարիքներին ներհատուկ առողջապահական ծառայությունների բացակայությունն է:

Նշենք, որ մարմինն ու արտաքին տեսքը իրենց նախընտրած գենդերին համապատասխանեցնելու համար անձինք կարող են դիմել տարբեր փոփոխությունների կամ միջամտությունների՝ սոցիալական՝ անվան, հագուկապի,

---

[337]ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 74, կետ 1, http://bit.do/fLZXG: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 21, http://bit.do/fLZXH:

[338]«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, բաժին 4, http://bit.do/fLZXL:

[339]«ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական նվազագույն չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանելու և ՀՀ կառավարության 2003 թ. ապրիլի 10-ի թիվ 413-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2015 թ. 15 հոկտեմբերի թիվ 1182-Ն որոշում, հավելված 3, http://bit.do/fNihK:

[340]Mann, R., “The Treatment of Transgender Prisoners, Not Just an American Problem-A Comparative Analysis of American, Australian, and Canadian Prison Policies Concerning the Treatment of Transgender Prisoners and a “Universal” Recommendation to Improve Treatment”, Tulane Journal of Law and Sexuality, Vol. 15 (2006), page 118, http://bit.do/fNie9.

մազերի ոճի փոփոխություն և այլն, իրավական՝ անձնագրում անվան և սեռի մասին նշումի փոփոխություն, բժշկական և ոչ բժշկական միջամտություններ՝ հորմոնաթերապիա, սեռի վիրահատական շտկում, սեռական օրգանների վիրահատական շտկում, լազերային մազահեռացում, ձայնի շտկում: Սեռափոխության վիրահատությունը բժշկական օգնության իրականացմանն ուղղված միջոցառումների ամբողջություն է (որը կարող է, սակայն պարտադիր չէ, որ ներառի հոգեբանական, ներզատաբանական և այլ բժշկական օգնության տեսակները), որի նպատակն է նույնականացնել անձի ֆիզիկական արտաքին տեսքն իր գենդերային ինքնությանը: Այն կարող է ներառել հոգեբանական խորհրդատվություն, միջսեռային հորմոնալ թերապիա, սեռափոխության վիրահատություն[341]: Սեռափոխությունն իրագործվում է բժշկական շտկման միջոցով, որն իր մեջ ներառում է հետևյալ միջամտություններից ցանկացածը կամ բոլորը միասին՝

- Հորմոնաթերապիա՝ էկզոգեն ներզատական դեղամիջոցների ներարկում՝ տղամարդկային կամ կանացի երկրորդական սեռական հատկանիշներ (ձայն, դեմք, մազեր մարմնի վրա, կաթնագեղձեր, ճարպի տեղաբաշխում, մկանային զանգված) առաջացնելու կամ ուժգնացնելու նպատակով,
- Սեռի վիրահատական շտկում՝ երկրորդական սեռական հատկանիշները փոխելու նպատակով վիրաբուժական միջամտություն, օրինակ՝ մամոպլաստիկա (կրծքի մեծացում կամ մաստէկտոմիյա), դեմքի պլաստիկ վիրահատություն, ձայնը փոխելու վիրահատություն և այլն,
- Սեռական օրգանների վիրահատական շտկում՝ պանէկտոմիա/օրխիէկտոմիա (առնանդամի և ամորձիների հեռացում) և այլն,
- Ոչ բժշկական միջամտություններ՝ լազերային մազահեռացում, ձայնի շտկում[342]:

Միջազգային փաստաթղթերով ներկայացվող հիմնական պահանջն այն է, որ քրեակատարողական հիմնարկներում տրամադրվող առողջապահական ծառայությունները պետք է լինեն այնպիսին, ինչպիսին հասանելի են ազատության պայմաններում: Հիմնարկի ղեկավարությունն իր հերթին պետք է երաշխավորի, որպեսզի այդ ծառայությունների ապահովումը չընդհատվի անձի՝ ազատությունից զրկվելու կամ ազատվելու պատճառով: Ինչ վերաբերում է ազատազրկված տրանս անձանց, ապա բանտերից պահանջվում է նրանց ապահովել համապատասխան բժշկական խնամքով, որը հավասար է համայնքում առկա խնամքին: Տրանս անձանց խնամքը և բուժումը պետք է կազմակերպվի առողջապահական կարիքների անհատական գնահատման հիմման վրա: Այդուհանդերձ, հիմնարկները չեն կարող սահմանել հորմոնաթերապիայի կամ սեռափոխության վիրահատության արգելք:

---

[341]«Նոր սերունդ» մարդասիրական հկ, «Սեռափոխության վիրահատության իրավական կարգավորումները ՀՀ-ում», Երևան, 2016թ., էջ 8, http://bit.do/fNiji:
[342]«Նոր սերունդ» մարդասիրական հկ, «Սեռափոխության վիրահատության իրավական կարգավորումները ՀՀ-ում», Երևան, 2016թ., էջ 9, http://bit.do/fNiji:

Անհրաժեշտ է, որպեսզի այն անձինք, ովքեր հորմոնաթերապիան կամ սեռափոխության գործընթացը սկսել են մինչև ազատազրկվելը, քրեակատարողական հիմնարկում հայտնվելուց հետո չզրկվեն այն շարունակելու հնարավորությունից, իսկ այդ գործընթացն ազատազրկման ընթացքում սկսել ցանկացող անձինք ապահովվեն համապատասխան մասնագետներով և ծառայություններով: Եթե համայնքում նշված ծառայություններն առկա են, ապա դրանք պետք է հասանելի լինեն նաև բանտերում: Կարևորվում է, որպեսզի ազատազրկման վայրերն ազատազրկված տրանսգենդեր անձանց համար ներդնեն և կիրառեն ոլորտային մասնագետների կողմից մշակված անհատական խնամքի ծրագրեր[343]: Ընդ որում, առողջապահական ծառայությունների, ներառյալ հորմոնաթերապիայի և սեռափոխության վիրահատության շարունակականությունը պետք է ապահովվի ինչպես ազատությունից զրկվելուց, այնպես էլ ազատ արձակվելուց հետո:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա ներպետական օրենսդրությամբ սեռափոխության վիրահատություն իրականացնելու հնարավորություն նախատեսված չէ: Հորմոնաթերապիան և սեռափոխության վիրահատությունը ներառված չեն ՀՀ կառավարության 2008թ. մարտի 27-ի թիվ 276-Ն որոշմամբ սահմանված բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկում[344]: Անհրաժեշտության դեպքում անձինք նշված վիրահատությունը կատարում են արտերկրում: Հայաստանում ևս կատարվում է սեռափոխության վիրահատություն, սակայն գաղտնի և անօրինական կերպով: Այս դեպքում սեռափոխության կարիք ունեցող տրանս անձինք մինչև հորմոնաթերապիա սկսելը բախվում են սեռափոխության կարիքը հաստատող եզրակացության ձեռքբերման խնդրի: Նրանք հորմոնաթերապիան սկսում են կամ բժշկական վերահսկողությունից դուրս, կամ գաղտնի: Գաղտնիությունը պահպանվում է նաև վիրահատությունների անցկացման փուլում, ինչը գործընթացում ներգրավված մասնագետներին ազատում է պատասխանատվությունից[345]: Բացի այդ, Հայաստանում սեռափոխության վիրահատությունն անօրինական կարգով կատարելն անձին զրկում է հետագայում առողջությանը պատճառված վնասի դեպքում պետության կողմից փոխհատուցում ստանալուց:

Հորմոնաթերապիայի և սեռափոխության վիրահատության իրականացման՝ ներպետական օրենսդրությամբ նախատեսված չլինելու պատճառով առավել անբարենպաստ վիճակում են հայտնվում ազատազրկված տրանս անձինք: Հորմոնաթերապիան և սեռափոխության վիրահատությունը ներառված չեն ազատազրկված անձանց տրամադրվող առողջապահական ծառայությունների ցանկում, հիմնարկներն ապահովված չեն համապատասխան մասնագետներով, ինչը

[343] Rogers, J., “Being Transgender Behind Bars in the Era of Chelsea Manning: How Transgender Prisoners’ Rights are Changing”, 6 ALA. C.R. & C.L.L. REV. 189, page 203 (2015), http://bit.do/fMiTQ.

[344] «ՀՀ-ում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. մարտի 27-ի թիվ 276-Ն որոշում, http://bit.do/fNiju:

[345] «Նոր սերունդ» մարդասիրական հկ, «Տրանսգենդեր անձանց սեռափոխության կարիքները. իրավական խոչընդոտների գնահատում», Երևան, 2016թ., էջեր 17-18, 24, http://bit.do/fLWXX:

նշանակում է, որ տրանս անձինք այդ գործընթացն ազատազրկման ընթացքում սկսելու հնարավորություն չունեն: Նրանք, ովքեր հորմոնաթերապիան կամ սեռափոխության գործընթացն անօրինական կարգով սկսել են մինչև ազատազրկվելը, քրեակատարողական հիմնարկում հայտնվելուց հետո զրկվում են այն շարունակելու հնարավորությունից: Թեև հետազոտության իրականացման ընթացքում պարզել ենք, որ հորմոնաթերապիա անցնող տրանս անձինք քրեակատարողական հիմնարկում հայտնվելուց հետո պետի հետ բանավոր պայմանավորվածություն են ձեռք բերում՝ հորմոնները հիմնարկ ներս տանելու համար: Պարզաբանումներ ստանալու նպատակով դիմել ենք քրեակատարողական ծառայությանը և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ին, որտեղից տեղեկացրել են, որ ազատազրկված տրանս անձանց վերաբերյալ առանձնացված հաշվառում չի իրականացվում, նրանց կարիքներին ներհատուկ բժշկական, առողջապահական և խնամքի միջոցներ չեն տրամադրվում[346]:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ազատազրկված տրանս անձանց հորմոնաթերապիայի կամ սեռափոխության վիրահատության ծառայությունների հասանելիությունն ապահովելը խնդրահարույց է աշխարհի գրեթե բոլոր երկրներում:

Միացյալ Նահանգներում, օրինակ, տրանսգենդեր անձանց տեղաբաշխման և խնամքի ծառայություններով ապահովելու հետ կապված խնդիրները դիտարկվում են անձանց սահմանադրական իրավունքների, մասնավորապես՝ ԱՄՆ Սահմանադրության 8-րդ փոփոխության խախտման շրջանակներում: Այսինքն՝ ազատազրկված տրանսգենդեր անձանց տեղաբաշխմանը և խնամքի կազմակերպմանն առնչվող հարցերը կարևոր են ոչ միայն առողջապահության էթիկայի պահպանման, այլև անձանց սահմանադրական իրավունքներն ապահովելու տեսանկյունից: Սահմանադրական իրավունքի ամենավիճելի խախտումն ԱՄՆ Սահմանադրության 8-րդ փոփոխությունն է, որն ամրագրում է դաժան կամ անսովոր պատժի կիրառման արգելքը: Այն լայնորեն կիրառվում է՝ ամրագրելով նաև տրանսգենդեր անձանց հորմոնաթերապիայով և սեռափոխության վիրահատությամբ ապահովելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ազատազրկված անձանց պաշտպանության շրջանակներում բանտերից պահանջում է ապահովել պատշաճ առողջապահական խնամք[347]: Բանտի ղեկավարությունը պետք է հնարավոր բոլոր քայլերը ձեռնարկի՝ տրանսգենդեր անձանց անհրաժեշտ բժշկական խնամք և աջակցություն տրամադրելու համար: Տարբերակներից մեկն այն է, որ բարեկեցությունն ապահովելու համար տրանսգենդեր բանտարկյալներին թույլատրեն կրել կամ օգտագործել իրենց գենդերային ինքնությանը համապատասխան հագուստ կամ դիմահարդարման պարագաներ, ինչը

---

[346]«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» hկ, թիվ 18-19 գրության պատասխան, http://bit.do/fNimZ, թիվ 20-88 գրության պատասխան, http://bit.do/fNinR:

[347]Schweikart, J., S., "Appropriate Placement and Treatment of Transgender Prisoners: Constitutional Concerns and Arguments for Alternative Housing and Treatment Policies", American Medical Association, 2018, pages 10-11; http://bit.do/fMiQi.

կազմակերպելը համեմատաբար հեշտ է և ոչ ծախսատար: Խնամքի հաջորդ ձևերից մեկը հոգեբանական աջակցությունն է: Կարևոր է, որպեսզի հոգեբանները հատուկ վերապատրաստում անցնեն տրանսգենդեր անձանց հետ աշխատելու համար: Եթե վերապատրաստման ֆինանսական ծախսերը շատ են, ապա նշվում է այդ ծառայությունները պատվիրակելու մասին: Բանտերի կողմից տրամադրվող հաջորդ աջակցությունը հորմոնաթերապիան է: Հիմնական պահանջն այն է, որ բանտերը հնարավորություն ստեղծեն, որպեսզի տրանսգենդեր անձինք կարողանան շարունակել նախքան ազատազրկումը սկսած հորմոնաթերապիան[348]:

Եթե որոշ նահանգներում թույլատրվում է ազատազրկումից հետո շարունակել հորմոնաթերապիան, մյուսներում՝ ոչ, ապա սեռափոխության վիրահատությունը գրեթե միանշանակորեն մերժվում է[349]: ԱՄՆ-ում սեռափոխության վիրահատություն հիմնականում չի թույլատրվում: Առաջարկվում է, որպեսզի անձինք ազատազրկումից հետո «սառեցնեն» ֆեմինացման կամ առնականացման պրոցեսը: Պետական կամ մասնավոր ապահովագրությունը չի ներառում ինչպես հորմոնաթերապիայի կամ սեռափոխության վիրահատության, այնպես էլ հետվիրահատական բժշկական ծախսերը[350]: Ինչ վերաբերում է առանձին նահանգներին, ապա 2009թ. Վաշինգտոնի Դատապարտյալների արդարադատության վարչությունը որդեգրել է մի քաղաքականությունը, որն ազատազրկված տրանսգենդեր անձանց տեղաբաշխման հետ կապված հարցերը կարգավորելու հետ մեկտեղ նախատեսում է այնպիսի ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս բանտում սկսել կամ շարունակել հորմոնաթերապիան՝ բժշկի թույլտվությամբ[351]:

Ավստրալիայում ընդհանուր քաղաքականությունն այն է, որ տրանսգենդեր անձինք, ովքեր հորմոնաթերապիան սկսել են մինչև ազատազրկումը, պետք է այն շարունակեն նաև բանտում գտնվելու ընթացքում: Քանի որ Ավստրալիայում սեռափոխության վերաբերյալ մեկ միասնական ստանդարտ գոյություն չունի, այն սկսելու մասին որոշումը մնում է բանտի բուժանձնակազմի հայեցողությանը: Օրինակ՝ Հարավային Ավստրալիայում հորմոնաթերապիան կարող է սկսվել ազատազրկման ընթացքում՝ բժշկական անձնակազմի հայեցողությամբ, մինչդեռ Նոր Հարավային Ուելսում ազատազրկված անձանց կարող են հորմոնաթերապիան կամ «ընտրովի սեռի» վիրահատությունը հասանելի լինել այն պայմանով, որ ծախսերն

---

[348]Mann, R., “The Treatment of Transgender Prisoners, Not Just an American Problem-A Comparative Analysis of American, Australian, and Canadian Prison Policies Concerning the Treatment of Transgender Prisoners and a “Universal” Recommendation to Improve Treatment”, Tulane Journal of Law and Sexuality, Vol. 15 (2006), pages 110-115, http://bit.do/fNie9.

[349]Brown GR, McDuffie E. Health care policies addressing transgender inmates in prison systems in the United States. J Correct Health Care. 2009; 15, pages 280–291, http://bit.do/fNikA.

[350]Mann, R., “The Treatment of Transgender Prisoners, Not Just an American Problem-A Comparative Analysis of American, Australian, and Canadian Prison Policies Concerning the Treatment of Transgender Prisoners and a “Universal” Recommendation to Improve Treatment”, Tulane Journal of Law and Sexuality, Vol. 15 (2006), pages 102-103, http://bit.do/fNie9.

[351]Hagner, D., Fighting for Our Lives: The D.C. Trans Coalition’s Campaign for Humane Treatment of Transgender Inmates in District of Columbia Correctional Facilities. 11 GEO. J. GENDER & L. 837, page 862, (2010), http://bit.do/fMiRB.

ազատազրկված անձինք հոգան[352]: Նոր Հարավային Ուելսի Բանտային առողջապահության ծառայության քաղաքականությունը նշում է, որ հորմոնաթերապիան տրամադրվում է միայն այն տրանսգենդեր անձանց, ովքեր այն սկսել են նախքան ազատազրկումը: Տրանսգենդեր անձինք կարող են դիմում ներկայացնել և իրենց ֆինանսական միջոցներով «ընտրովի սեռի» վիրահատություն, հորմոնաթերապիա կամ իրենց կարիքներին համապատասխան այլ թերապիաներ ստանալ: Այդ ծառայությունների ծախսերը բանտը չի հոգում, սակայն հնարավորություն է տալիս, որպեսզի ազատազրկված անձինք այդ ծախսերը կատարեն փոխանցման միջոցով[353]:

Կանադայում թեև առողջության ապահովագրության տեսանկյունից ԼԳԲՏ անձինք խոցելի խումբ են կազմում, այնուամենայնիվ, մարզերի մեծ մասում սեռափոխության վիրահատությունը՝ որպես անհրաժեշտ բժշկական գործընթաց, ֆինանսավորվում է պետության կողմից[354]: Կանադայի Ուղղիչ ծառայությունները տրանսգենդեր անձանց խնդիրներին սկսել են անդրադառնալ 1980թ.: Կանադայի առաջին բանտային քաղաքականությունը տրանսգենդեր անձանց վերաբերյալ նշում էր, որ յուրաքանչյուր անձի նկատմամբ պետք է ցուցաբերվի անհատական մոտեցում: Հորմոնաթերապիան կարող է շարունակվել այն դեպքում, երբ անձն այն սկսել է մինչև ազատազրկվելը: Բանտում հորմոնաթերապիա սկսելու և սեռափոխության վիրահատության վերաբերյալ որևէ ընթացակարգ նախատեսված չէ: Հետագայում այս քաղաքականությանն ավելացվել է նոր պահանջ, որով առաջարկվում է ազատազրկումից հետո «սառեցնել» տրանսգենդեր անձանց ֆեմինացման կամ առնականացման պրոցեսը: 1993թ. Կանադայի Ուղղիչ ծառայությունը որդեգրեց նոր քաղաքականություն, որը թույլատրում էր հորմոնաթերապիան: 1995թ. քաղաքականությունը դարձյալ փոփոխության ենթարկվեց: Այս անգամ թույլատրվեց սեռափոխության վիրահատությունը, որը, սակայն, արգելվեց 1997թ.: Ներկայումս գործող քաղաքականությունը չի նախատեսում սեռափոխության վիրահատություն, բայց երաշխավորում է ազատազրկված անձանց հասանելիությունն անհրաժեշտ բժշկական, ատամնաբուժական և հոգեկան առողջության ծառայություններին՝ ընդհանուր չափանիշներին համապատասխան: Եթե անձը մինչև ազատազրկվելը ստացել է հորմոնաթերապիա, ապա ազատազրկվելուց հետո կարող է շարունակել այն: Նշվում է, որ քանի դեռ սեռափոխության վիրահատությունը չի ավարտվել, արական սեռի անձինք պետք է պահվեն արական սեռի համար նախատեսված

---

[352]Mann, R., "The Treatment of Transgender Prisoners, Not Just an American Problem-A Comparative Analysis of American, Australian, and Canadian Prison Policies Concerning the Treatment of Transgender Prisoners and a "Universal" Recommendation to Improve Treatment", Tulane Journal of Law and Sexuality, Vol. 15 (2006), page 118, http://bit.do/fNie9.
[353]Mann, R., "The Treatment of Transgender Prisoners, Not Just an American Problem-A Comparative Analysis of American, Australian, and Canadian Prison Policies Concerning the Treatment of Transgender Prisoners and a "Universal" Recommendation to Improve Treatment", Tulane Journal of Law and Sexuality, Vol. 15 (2006), page 121, http://bit.do/fNie9.
[354]Mann, R., "The Treatment of Transgender Prisoners, Not Just an American Problem-A Comparative Analysis of American, Australian, and Canadian Prison Policies Concerning the Treatment of Transgender Prisoners and a "Universal" Recommendation to Improve Treatment", Tulane Journal of Law and Sexuality, Vol. 15 (2006), page 120, http://bit.do/fNie9.

հաստատություններում: Կանադայում հնարավորություն են տալիս ազատազրկված տրանս անձանց իրենց հաշվին սեռափոխության վիրահատություն կատարել:

2015թ. Մալթա կատարած այցից հետո ԽԿԿ-ն տրանս անձանց խնամքի վերաբերյալ մի շարք առաջարկություններ է ներկայացրել: Ի պատասխան՝ Մալթայի կառավարությունը ԽԿԿ-ին տեղեկացրել է, որ 2016թ. օգոստոսից գործում է ազատազրկված անձանց վերաբերյալ նոր քաղաքականություն, որն ապահովում է տրանս և ինտերսեքս անձանց հասանելիությունն առողջապահական համապարփակ ծառայություններին[355]:

Հայաստանում սեռափոխության վիրահատություն անցած տրանս անձանց հիմնական խնդիրները կապված են վիրահատություն կատարելուց հետո արտաքին տեսքի և անձը հաստատող փաստաթղթերում նշված տվյալների՝ անվան և սեռի անհամապատասխանության հետ: Ներպետական օրենսդրությամբ նախատեսված չէ անվան և սեռի փոփոխությունները կատարելու որևէ մեխանիզմ: «Անվան փոխման կարգն ու պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 23-ի թիվ 941-Ն որոշման համաձայն՝ 16 տարեկանից բարձր անձանց անվան փոխման գրանցում կատարել թույլատրվում է այն դեպքում, եթե անձը փաստացի կրում է իր ծննդյան գրանցման մեջ նշված անունից տարբերվող անուն[356]: Այս հիմքով տրանս անձինք ևս կարող են առանց որևէ խոչընդոտի փոխել իրենց անունը: Ավելին, ներպետական օրենսդրության մեջ անուններն ըստ սեռի տարանջատված չեն: Ինչ վերաբերում է սեռի վերաբերյալ նշումների փոփոխությանը, ապա դա ավելի բարդ գործընթաց է: «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու մասին ՔԿԱԳ մարմնի եզրակացությունը կազմվում է այն դեպքում, եթե ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական կազմակերպությունը տվել է սեռի փոփոխության մասին սահմանված ձևի փաստաթուղթ[357]: Մինչդեռ խնդրահարույց է այն, որ ներպետական օրենսդրությամբ սեռի փոփոխման մասին սահմանված ձևի փաստաթուղթ կամ դրա տրամադրման վերաբերյալ կարգ նախատեսված չէ:

Արտերկրում կատարված վիրահատությունների հիմքով քաղաքացիական կացության ակտերում փոփոխություններ կատարելու կարգ ևս նախատեսված չէ: Այս դեպքում բավարար է ներկայացնել սեռափոխության վիրահատության վերաբերյալ բժշկական կամ այլ տիպի փաստաթուղթ, որտեղ կա նշում սեռի փոփոխման մասին[358]: Նշված փաստաթղթի հիման վրա անձը քաղաքացիական կացության ակտի գրառման համապատասխան տվյալների մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն

---

[355]Association for the Prevention of Torture, Towards the Effective Protection of LGBTI Persons Deprived of Liberty: A Monitoring Guide, 2018, Geneva, page 92, http://bit.do/fM94i.

[356]«Անվան փոխման կարգն ու պայմանները հաստատելու մասին», ՀՀ Կառավարության 2005թ. հունիսի 23-ի թիվ 941-Ն որոշում, կետ 9(թ), http://bit.do/fNik2:

[357]«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 70 (գ), http://bit.do/fLZXw:

[358]«Փինք» իրավապաշտպան հկ, «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրադրության բարելավմանն ուղղված ջատագովության երկարաժամկետ ռազմավարություն», էջ 12, http://bit.do/fMq7B:

կատարելու մասին դիմում է ներկայացնում ՔԿԱԳ գործակալություն: Դիմումն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում քննարկելուց հետո քաղաքացիական կացության ակտի ուղղված, լրացված կամ փոփոխված գրառման հիման վրա անձին տրվում է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման նոր վկայական[359]: Այն ստանալուց հետո անձը դիմում է ներկայացնում Անձնագրային և վիզաների վարչություն՝ նոր անձնագիր ստանալու համար[360]:

Հայաստանը դեռևս չունի «Գենդերային ինքնության իրավական ճանաչման» մասին ինքնուրույն օրենք, ինչը կարևոր է գենդերի իրավական ճանաչման և դրա հստակ ընթացակարգ սահմանելու համար՝ ներառյալ դիմումի ներկայացման կարգը, դրան ներկայացվող պահանջները, քննության ժամկետներն ու կարգը, վերադարձի և վերաքննության հնարավորությունները[361]:

«Նոր սերունդ» մարդասիրական հկ-ն 2018թ. մշակել է «Գենդերային ինքնության իրավական ճանաչման» մասին օրենքի նախագիծ: Այն վերանայվել է համապատասխան միջազգային փորձագետի կողմից, ինչպես նաև լրացվել է ՀՀ կառավարության 2008թ. մարտի 27-ի թիվ 276-Ն որոշման հավելվածի՝ բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկի 3-րդ կետում փոփոխություններ կատարելու մասին նախագծով վերջինիս անհրաժեշտության մասին հիմնավորումներով[362]: Օրենքի նախագիծը կարգավորում է գենդերային ինքնության իրավական ճանաչման, այդ թվում՝ գենդերի վերաբերյալ նշումի փոփոխման կարգի և համապատասխան լիազոր մարմնի իրավասությունների վերաբերյալ հարցերը: Կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը ենթադրում է բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկի դրույթների ընդլայնում՝ հաշվի առնելով տրանս անձանց բժշկական օգնություն ցուցաբերելու առանձնահատկությունները: Նախագիծը կից փաստաթղթերով ուղարկվել է ՀՀ առողջապահության և արդարադատության նախարարություններին՝ ծանոթացման և համապատասխան մասնագիտական եզրակացություն տրամադրելու համար: Առողջապահության նախարարությունից տեղեկացրել են, որ նախագիծը քննարկման ենթակա չէ: Արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ այն նախարարության կողմից կքննարկվի համապատասխան օրենսդրական փոփոխությունների համատեքստում:

Առկա օրենսդրական բացերի պատճառով տրանս անձինք առավել խոցելի են դառնում ազատազրկման ընթացքում, քանի որ առկա չէ ազատազրկվելուց հետո անվան և սեռի փոփոխության գործընթացի շարունակականությունն ապահովող կամ այն քրեակատարողական հիմնարկից սկսելու որևէ մեխանիզմ: Ավելին, այն տրանս անձինք, ովքեր անձնագրում կատարել են միայն անվան փոփոխություն, արտաքին

359«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 71-73, http://bit.do/fLZXB:
360«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենք, հոդված 5, http://bit.do/fLZXD:
361«Փինք» իրավապաշտպան հկ, «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրադրության բարելավմանն ուղղված ջատագովության երկարաժամկետ ռազմավարություն», էջ 12, http://bit.do/fMq7B:
362«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հկ, թիվ 20-143 գրության պատասխան, http://bit.do/fNimG:

տեսքի և անձնագրում գրանցված սեռի ու անվան միջև առկա տարբերության պատճառով կարող են կրկնակի խտրականության և խարանի ենթարկվել քրեակատարողական հիմնարկներում: Ճիշտ է, «Նոր սերունդ» մարդասիրական հկ-ի կողմից մշակված օրենքի նախագծի ընդունման ուղղությամբ պետության կողմից դեռևս քայլեր չեն ձեռնարկվել, սակայն կարևոր է, որպեսզի նախագծով որոշ մեխանիզմներ նախատեսվեն նաև գենդերային ինքնության իրավական ճանաչման գործընթացն ազատազրկվելուց հետո շարունակելու կամ ազատազրկման ընթացքում սկսելու վերաբերյալ:

Անդրադառնալով առանձին երկրների փորձին՝ նշենք, որ ԱՄՆ-ում տրանսգենդեր անձինք միայն սեռափոխության վիրահատություն կատարելուց հետո կարող են փոխել ծննդյան վկայականը կամ նույնականացնող այլ իրավական փաստաթղթերը: Այս պահանջը, սակայն, հասարակության մեջ ինտեգրվելու տեսանկյունից գործնականում դժվարություններ է առաջացնում այն անհատների համար, ովքեր ապրում են որպես տրանսգենդեր, բայց վիրահատություն չեն կատարել կամ չեն ցանկանում կատարել: Նահանգների մեծամասնությունն ունի կանոնադրություն կամ հանրային քաղաքականություն, որը թույլ է տալիս կառավարությանը փոփոխել կամ նոր ծննդյան վկայական տրամադրել այն անձանց, ովքեր ենթարկվել են սեռափոխության վիրահատության՝ այնտեղ նշելով նոր սեռը: 50 նահանգներից 48-ը թույլ են տալիս փոփոխություն կատարել ծննդյան վկայականում, բացառությամբ 2 նահանգի՝ Թենեսի և Օհայո: Սեռափոխության վիրահատության վերաբերյալ վիրաբույժի կողմից տրված վկայականի հիման վրա Ալաբամա, Իլինոյս, Հավայի, Հյուսիսային Կարոլինա, Մերիլենդ, Նյու Ջերսի, Վիրջինիա և Փենսիլվանիա նահանգներում տրամադրվում է նոր ծննդյան վկայական, որտեղ անձի նախորդ սեռի մասին որևէ նշում չկա: Մնացած նահանգներում, բացառությամբ Թենեսիի և Օհայոյի, սեռափոխության վիրահատության վերաբերյալ ապացույց ներկայացնելուց հետո ծննդյան վկայականում կատարվում է սեռի վերաբերյալ փոփոխություն, ինչը նշանակում է, որ անձի՝ նախորդ սեռի վերաբերյալ նշումը պահպանվում է[363]:

Ավստրալիայում գենդերի իրավական ճանաչման հարցը պայմանավորված է անձի նախավիրահատական կամ հետվիրահատական փուլում գտնվելու փաստով: Եթե անձը նախավիրահատական փուլում է, ապա ներկայացնում է անվանափոխության դիմում և վերահսկող բժշկի կողմից նամակ, որում ասվում է, որ անհատը մտադիր է կատարել սեռափոխության վիրահատություն, ինչից հետո տրամադրվում է 1 տարի ժամկետով անձնագիր, որտեղ սեռի մասին նշումը փոխված է: Հետվիրահատական փուլում գտնվող անձը կարող է անձնագրում սեռի մասին նշումը փոխել այն ժամանակ, երբ ներկայացնում է անվանափոխության մասին դիմում և վիրաբույժի կողմից նամակ, որտեղ ասվում է, որ կատարվել է

[363]Mann, R., “The Treatment of Transgender Prisoners, Not Just an American Problem-A Comparative Analysis of American, Australian, and Canadian Prison Policies Concerning the Treatment of Transgender Prisoners and a “Universal” Recommendation to Improve Treatment”, Tulane Journal of Law and Sexuality, Vol. 15 (2006), pages 101-102, http://bit.do/fNie9.

սեռափոխության վիրահատություն: Չնայած այս քաղաքականությունն ընդհանուր է ամբողջ երկրի համար, տարբեր նահանգներ կամ տարածքներ ստեղծում են իրենց օրենքները և քաղաքականությունները[364]:

Կանադան, ընդհանուր առմամբ, ընդունում է նույնականացման փաստաթղթերում փոփոխությունները, սակայն ընթացակարգն ըստ նահանգների և տարածքների տարբերվում է: Օրինակ, Բրիտանական Կոլումբիայում պահանջվում է, որպեսզի նախքան ծննդյան վկայականը փոխելը տրանսգենդեր անձը ներկայացնի այն լիցենզավորված վիրաբույժի տրամադրած վկայականը, ով կատարել է վիրահատությունը, և Կանադայում աշխատելու լիցենզիա ունեցող բժշկի կողմից տրամադրված վկայական այն մասին, որ վիրահատության արդյունքները համապատասխանում են օրենքի պահանջներին[365]:

[364]Mann, R., "The Treatment of Transgender Prisoners, Not Just an American Problem-A Comparative Analysis of American, Australian, and Canadian Prison Policies Concerning the Treatment of Transgender Prisoners and a "Universal" Recommendation to Improve Treatment", Tulane Journal of Law and Sexuality, Vol. 15 (2006), pages 115-116, http://bit.do/fNie9.

[365]Mann, R., "The Treatment of Transgender Prisoners, Not Just an American Problem-A Comparative Analysis of American, Australian, and Canadian Prison Policies Concerning the Treatment of Transgender Prisoners and a "Universal" Recommendation to Improve Treatment", Tulane Journal of Law and Sexuality, Vol. 15 (2006), page 123, http://bit.do/fNie9.

# ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

**Հակախտրական օրենսդրություն, քաղաքականություն և ռազմավարություններ**

- Ներպետական, այդ թվում՝ քրեակատարողական ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը նախատեսում է խտրականության արգելքը սահմանող իրավանորմեր, որոնք դրվագային և ոչ համապարփակ բնույթ են կրում, չեն տրամադրում իրավական պաշտպանության մեխանիզմներ, ինչպես նաև չեն ամրագրում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքը: Ընդ որում, այդ իրավանորմերից յուրաքանչյուրը կարգավորում է միայն այն ոլորտը, որի համար ընդունված է տվյալ իրավական ակտը:
- Հայաստանը դեռևս չունի խտրականությունն արգելող համապարփակ օրենսդրություն, որը կարող է իրավական և դատական պաշտպանության մեխանիզմներ տրամադրել խտրականությունից տուժած անձանց:
- 2018թ. ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ դարձյալ խտրականության արգելքով պաշտպանված հիմքերը սահմանափակ են և ուղղակիորեն չեն պաշտպանում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության ենթարկվող անձանց:
- Հայաստանի դատական պրակտիկայում առկա չէ որևէ նախադեպ, որը ցույց կտա, որ ներպետական օրենսդրության մեջ արդեն գոյություն ունեցող ընդհանուր հակախտրական չափորոշիչները դատարաններում կամ վարչական վարույթներում կիրառվում են ԼԳԲՏ անձանց նկատմամբ:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ նախատեսված չեն ազատազրկված ԼԳԲՏ անձանց պաշտպանությունը երաշխավորող հատուկ դրույթներ և սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունից պաշտպանության իրավական մեխանիզմներ, ինչի հետևանքով կրկնակի խոցելի վիճակում են հայտնվում ազատազրկված ԼԳԲՏ անձինք:
- Հայաստանում անձանց նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցներ կամ պատժատեսակներ կիրառելու, նրանց պատժաչափը կրճատելու, պատժատեսակը կամ ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու հիմքերի մեջ չի դիտարկվում անձանց սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված խոցելիությունը:
- Հայաստանում ազատազրկված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները ներկայացված չեն մարդու իրավունքների պաշտպանության կամ քրեակատարողական ոլորտի ռազմավարություններում:

- «Մարդու իրավունքների պաշտպանության 2020-2022թթ. ազգային ռազմավարության» մեջ ազատազրկված ԼԳԲՏ անձանց իրավահավասարության ապահովմանն ուղղված որևէ գործողություն նախատեսված չէ:
- Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության մեջ ազատազրկված ԼԳԲՏ անձանց համար պահման հավասար պայմանների ապահովումը և նրանց վիճակի բարելավումը չեն դիտարկվել որպես ռազմավարական նպատակ:
- Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության մեջ սահմանված չէ հատուկ պաշտպանության կարիք ունեցող ազատազրկված անձանց շրջանակը:
- Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում չեն գործում ազատազրկված ԼԳԲՏ անձանց պաշտպանությանը և նրանց ներհատուկ կարիքների ապահովմանն ուղղված քաղաքականություններ:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ սահմանված չեն ազատազրկված ԼԳԲՏ անձանց պահելու պայմանների առանձնահատկությունները, նախատեսված չեն ազատազրկման ընթացքում անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքի ապահովմանն ուղղված ընթացակարգեր:
- Հայաստանի քրեակատարողական ծառայության և հիմնարկների կառավարման և գնահատման մոդելի մշակման նպատակով իրականացված ուսումնասիրության մեջ ազատազրկված ԼԳԲՏ անձանց կարիքների ուսումնասիրությանը և նրանց ներհատուկ խնամքի ու պաշտպանության ապահովմանն անդրադարձ չի կատարվել:
- Հայաստանում ազատազրկված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրների ուսումնասիրությանն ուշադրություն չի դարձվում ոլորտին առնչվող հետազոտություններում: Քրեակատարողական ոլորտի վերաբերյալ հաշվետվությունների մեջ անդրադարձ չի կատարվում ազատազրկված ԼԳԲՏ անձանց առնչվող հարցերին:

**Քրեական ենթամշակույթ**

- Ըստ քրեակատարողական հիմնարկներում գործող ոչ ֆորմալ «օրենքների»՝ ազատազրկված անձինք բաժանվում են մի քանի խմբերի: Բարձր խավի ներկայացուցիչներն արտոնյալ կարգավիճակ ունեն, իսկ ցածր խավի ներկայացուցիչներն արժանանում են անմարդկային վերաբերմունքի, ստորացվում և ենթարկվում են բռնության, այդ թվում՝ սեռական:
- Այդ օրենքներն առավել խիստ են գործում տղամարդկանց քրեակատարողական հիմնարկներում, որտեղ անձինք պիտակավորվում են

որպես նույնասեռական՝ անկախ նրանից՝ իրենք իրենց նույնականացնում են որպես այդպիսին, թե՝ ոչ: Նույնասեռականի կարգավիճակում են հայտնվում ԳԲՏ և որևէ պատճառով նրանց հավասարեցված անձինք:

- Անկախ քրեական աստիճանակարգության մեջ ունեցած դիրքից՝ ԳԲՏ և նրանց հավասարեցված անձինք ստորադասվում են մնացած ազատազրկված անձանց: Նրանք քրեակատարողական հիմնարկներում առանձնացված են պահվում, չեն ընդգրկվում կրթական կամ վերասոցիալականացման ծրագրերում, կատարում են ամենակեղտոտ և այլ ազատազրկված անձանց ոչ հարիր աշխատանքները և այլն:
- Քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դեպքերը չեն դիտարկվում որպես քրեական ենթամշակույթի հետևանք և դրա հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակներում ուշադրության չեն արժանանում:
- 2018թ. Պաշտպանի աշխատակազմը մշակել է «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգը», որտեղ անդրադարձ չի կատարվում ազատազրկված ԳԲՏ անձանց նկատմամբ քրեական ենթամշակույթի հետևանքով դրսևորվող խտրականության կանխարգելմանը և նրանց վիճակի բարելավմանը:
- ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունների շրջանակներում ազատազրկված անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացման մեջ ներգրավելը չի նախատեսվել որպես քրեական պատժի ենթարկելու հիմք կամ ծանրացուցիչ հանգամանք:

**Սեռական բռնություն և շահագործում**

- Հայաստանում ազատազրկված անձանց սեռական բռնության կամ շահագործման վերաբերյալ հետազոտություններ առկա չեն: Բացառություն են կազմում Դիտորդների խմբի տարեկան զեկույցները և մամուլի որոշ հրապարակումներ, որոնք փաստում են, որ Հայաստանի բանտերում ԳԲՏ անձինք են առավել հաճախ ենթարկվում բռնության, այդ թվում՝ սեռական:
- Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում գործում է զոհին մեկուսացնելու պրակտիկան, այնինչ միջազգային լավագույն փորձը պահանջում է մեկուսացնել բռնարարին, այլ ոչ թե զոհին:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ սահմանված չէ ազատազրկված անձանց նկատմամբ հիմնարկների աշխատակիցների կամ այլ ազատազրկված անձանց կողմից սեռական բռնության անթույլատրելիությունը:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ նախատեսված չեն սեռական բռնություն կամ սեռական

բնույթի հանցագործություն կատարող ազատազրկված անձանց և աշխատակիցներին պատժի և պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ:

- Ներպետական օրենսդրությամբ կարգավորված չէ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնությամբ հիմքով ատելության խոսքը: Այդ հիմքով կատարված հանցագործությունները ներառված չեն ՀՀ քրեական օրենսգրքում և չեն դիտարկվում որպես քրեորեն պատժելի արարքի շարժառիթ՝ հանցագործության և պատժի ծանրացուցիչ հանգամանք:
- Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնությամբ հիմքով ատելության խոսքի, այդ հիմքով կատարված հանցագործությունների անթույլատրելիության վերաբերյալ որևէ կարգավորում նախատեսված չէ նաև քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ:

**Տեղաբաշխում**

- Ազատազրկված ԳԲՏ անձինք քրեակատարողական հիմնարկ մուտք գործելուն պես գրավոր դիմում են ներկայացնում հիմնարկի վարչակազմին՝ խնդրելով իրենց տեղափոխել համապատասխան խցեր, թեև քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ նմանատիպ դիմումներ ներկայացնելու և դրանց հաշվառում իրականացնելու վերաբերյալ ընթացակարգ նախատեսված չէ:
- Քրեակատարողական հիմնարկներում ԳԲՏ անձանց «պարտադրվում է» հայտնել իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին, ինչը նշանակում է, որ չի պահպանվում ազատազրկված անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության գաղտնիությունը:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությունն ազատազրկված անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության գաղտնիության պահպանման մասին դրույթներ չի պարունակում:
- Քրեակատարողական հիմնարկներում ներքին կարգով տիրապետում են ազատազրկված ԼԳԲՏ անձանց թվի վերաբերյալ տեղեկատվությանը, սակայն այդ մասին պաշտոնական տվյալներ առկա չեն, քանի որ անազատության մեջ պահվող անձանց ըստ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հաշվառում չի իրականացվում:
- Տեղաբաշխման ընթացքում անտեսվում են ազատազրկված ԼԳԲՏ անձանց կարծիքը և մտահոգությունները: Նրանք չեն մասնակցում իրենց տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացմանը:
- Անտեսվում է անձանց որպես ԳԲՏ ինքնանույնականացման իրավունքը, ինչի հետևանքով նույն խցում կամ կացարանում կարող են տեղաբաշխվել ինչպես ԳԲՏ, այնպես էլ սեռական բնույթի հանցագործություն կատարելու մեջ

մեղադրվող, այդ արարքի համար ազատազրկման դատապարտված, սեռական բռնության ենթարկված անձինք և այլն:

- Տեղաբաշխման ընթացքում ԳԲՏ անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը չի դիտարկվում որպես քրեական ենթամշակույթի հետևանք: Դրա հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակներում հիմնախնդրի կարգավորմանն ուշադրություն չի դարձվում:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական իրավական ակտերում ամրագրված չեն քրեակատարողական հիմնարկներ ընդունելու, խցերում կամ կացարաններում տեղաբաշխելու, ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու և/կամ փոփոխելու ընթացքում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքը: Այդ հիմքով խտրականության դեպքում պատժի և պատասխանատվության մեխանիզմներ, դրանց ապահովմանն ուղղված ընթացակարգեր նախատեսված չեն:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական իրավական ակտերում նախատեսված չեն ազատազրկված ԼԳԲՏ անձանց տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացմանը ներգրավվելու, նրանց մտահոգությունների կամ կարծիքի հիման վրա համապատասխան որոշում կայացնելուն ուղղված ընթացակարգեր:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ ազատազրկված ԳԲՏ անձանց պաշտպանական նկատառումներով մեկուսի պահելու հարցը կարգավորված չէ:
- «Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2022թթ. ռազմավարության» մեջ սահմանված չէ հատուկ կատեգորիայի անձանց շրջանակը: Անդրադարձ չի կատարվում ազատազրկված ԼԳԲՏ անձանց մեկուսի պահելու հետ կապված խնդիրներին և դրանց կարգավորմանը:

**Պահման պայմաններ**

- Ազատազրկված անձանց կենցաղային պայմանների միջև տարբերությունը պայմանավորված է նրանց կարգավիճակով:
- Հիմնարկների վարչակազմը ԳԲՏ անձանց տեղաբաշխում է ամենախոնավ և անմխիթար պայմաններով խցերում: ԳԲՏ անձանց հավասարեցված ազատազրկված անձինք ևս տեղաբաշխվում են նշված խցերում, որոնք պիտակավորված են և կոչվում են «թռածների», «արվամոլների», «գոմիկների» կամ «այլազգիների» խցեր:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական իրավական ակտերով նախատեսված չեն ազատազրկված անձանց հավասար պայմաններով ապահովելու վերաբերյալ իրավական պահանջներ և

ընթացակարգեր, խտրականության դրսևորման դեպքում պատժի և պատասխանատվության մեխանիզմներ:

- Քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավման, քրեակատարողական հիմնարկների խցերի վերանորոգման, ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավման, քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման և արդիականացման ուղղությամբ գործողություններ են նախատեսվել ՀՀ կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրով, «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով», ինչպես նաև քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությամբ:
- Քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավումը կամ ազատազրկված անձանց համար պահման պատշաճ պայմանների ապահովումը կարող են անուղղակիորեն հանգեցնել ազատազրկված ԼԳԲՏ անձանց պայմանների բարելավմանը: Սակայն մտահոգության տեղիք է տալիս այն, որ նշված ծրագրերի շրջանակներում ԼԳԲՏ անձինք չեն դիտարկվում որպես հատուկ խոցելի խումբ, և նրանց համար հավասար պայմաններ ապահովելուն ուղղված հասցեական միջոցառումներ կամ գործողություններ նախատեսված չեն:
- ԳԲՏ անձանց ամենավատ պայմաններով խցերում կամ կացարաններում բնակեցնելը չի դիտարկվում որպես քրեական ենթամշակույթի հետևանք: Հետևաբար քրեական ենթամշակույթի հաղթահարման ուղղությամբ իրականացվող նախաձեռնությունների շրջանակներում հիմնախնդրի կարգավորմանն ուշադրություն չի դարձվում:

**Անձնական խուզարկություններ**

- Անձնական խուզարկություն անցկացնելու վերաբերյալ ներպետական իրավական կարգավորումները սահմանում են, որ ազատությունից զրկված անձի խուզարկությունն իրականացվում է նույն սեռի աշխատակցի կողմից: Այս չափանիշն ընդհանուր է և վերաբերում է ազատությունից զրկված բոլոր անձանց, ինչը նշանակում է, որ ԼԳԲՏ անձանց հնարավորություն չի տրվում ընտրել խուզարկությունն անցկացնող աշխատակցի սեռը:
- Նշված կարգավորման հետևանքով խոցելի վիճակում են հայտնվում հատկապես ազատազրկված տրանս անձինք, քանի որ սահմանված պահանջից բխում է, որ անձնագրում սեռի նշումը փոխված չլինելու դեպքում տրանս կանայք խուզարկության են ենթարկվում արական սեռի աշխատակցի կողմից, իսկ տրանս տղամարդիկ՝ իգական:
- Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաշվի առնելով անձնական խուզարկության անցկացման ժամանակ ազատազրկված ԼԳԲՏ անձանց խոցելիությունը՝ խորհուրդ է տրվում ընդհանուր պահանջից

բացառություն կատարել և ԼԳԲՏ անձանց խուզարկություն կատարող աշխատակցի սեռն ընտրելու իրավունք տալ:

**Առողջապահական ծառայությունների հասանելիություն**

- Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում առողջապահական ծառայությունների որակը և հասանելիությունը խնդրահարույց են բոլոր ազատազրկված անձանց համար: Մյուս կողմից այդ ծառայությունները համահունչ չեն ազատազրկված ԼԳԲՏ անձանց ներհատուկ կարիքներին:
- Հոգեբուժական ծառայության հասանելիության ապահովման տեսանկյունից առկա խնդիրներն ընդհանուր են բոլոր ազատազրկված անձանց համար և վերաբերում են բուժանձնակազմի համալրվածությանը և մասնագիտական որակավորմանը, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ազատազրկված անձանց ստացիոնար բուժման կազմակերպմանը, քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս անձանց հոգեկան առողջության վիճակի գնահատման և սկրինինգային հետազոտություն անցկացնելու համար անհրաժեշտ ծրագրերի և մասնագետների բացակայությանը և այլն:
- Առկա հոգեբուժական օգնության և սպասարկման ծառայությունները չեն ներառում ազատազրկված ԼԳԲՏ անձանց կարիքներին համահունչ մասնագիտական աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները:
- Սեռական բռնության ենթարկված ԳԲՏ անձանցից բացի համապատասխան վերապատրաստում անցած հոգեբույժների բացակայության պատճառով նեղ մասնագիտական ծառայություններ և խորհրդատվություն ստանալու հնարավորությունից զրկվում են նաև ազատազրկման պահին հորմոնաթերապիայի փուլում գտնվող, սեռափոխության վիրահատություն կատարած կամ նման ծառայությունների կարիք ունեցող տրանս անձինք:
- Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունն անցկացվում է տարեկան 2 անգամ, ինչը բավարար չէ վարակի տարածման ռիսկերը կանխարգելելու կամ նվազեցնելու տեսանկյունից, քանի որ ՄԻԱՎ հետազոտության անցկացման և անձի՝ քրեակատարողական հիմնարկ մուտք գործելու ժամանակահատվածները կարող են չհամընկնել:
- Ներկայումս ազատազրկված անձանց պահպանակներ չեն տրամադրվում, ինչի հետևանքով ՄԻԱՎ վարակ ձեռք բերելու կամ այլ ազատազրկված անձանց փոխանցելու վտանգի առջև են կանգնում հատկապես ԳԲՏ անձինք, քանի որ նրանք քրեակատարողական հիմնարկներում ոչ միայն սեռական բռնության են ենթարկվում, այլև սեռական ծառայություններ են մատուցում:
- Ոլորտը կանոնակարգող ներպետական իրավական ակտերը չեն ամրագրում բժշկական օգնություն ստանալու ընթացքում ազատազրկված անձանց

նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքի պահանջը:

- Բանտային առողջապահության բարեփոխմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակներում անդրադարձ չի կատարվում ազատազրկված ԼԳԲՏ անձանց առողջապահական կարիքների ուսումնասիրությանը և քրեակատարողական հիմնարկների կողմից տրամադրվող ծառայություններն այդ կարիքներին համահունչ դարձնելուն:

**Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ**

- Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքների հարցը խնդրահարույց է: Արձանագրված խնդիրներն առնչվում են նշված աշխատանքների ոչ արդյունավետ կազմակերպմանը, մասնագետների ոչ բավարար թվին, աշխատանքային պայմանների, մասնագիտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմի և մեթոդական ուղեցույցների, ազատազրկված անձանց սոցիալ-հոգեբանական կարիքների գնահատման գործիքակազմի բացակայությանը և այլն: Բացի այդ, հոգեբանները չունեն բավարար գիտելիքներ, նրանց համար չեն կազմակերպվում մասնագիտական վերապատրաստումներ:
- Ինչ վերաբերում է ազատազրկված ԼԳԲՏ անձանց, ապա խնդիրն այն է, որ սոցիալ-հոգեբանական աշխատանքները համահունչ չեն նրանց կարիքներին:
- ՀՀ արդարադատության նախարարի 2016թ. հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանով սեռական բռնության հետևանքով առաջացած խնդիրների կարգավորման և նմանատիպ աշխատանքներ նաև կալանավորված անձանց հետ կազմակերպելու վերաբերյալ դրույթներ նախատեսված չեն: Նախատեսված չեն այն միջոցներն ու հստակ չափանիշները, որոնց հիման վրա պետք է ի հայտ բերվեն բարձր ռիսկայնություն ունեցող ազատազրկված անձինք: Պարզ չէ, թե գնահատման արդյունքում կարող են բացահայտել սեռական բռնություն գործելու կամ այդ բռնության զոհ դառնալու տեսանկյունից ռիսկային անձանց, և ինչ առանձնահատուկ աշխատանքներ են իրականացվում նրանց հետ:
- Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությամբ անդրադարձ չի կատարվում ազատազրկված ԼԳԲՏ անձանց ներհատուկ կարիքների գնահատման մեխանիզմի մշակման և ներդրման անհրաժեշտությանը:
- «Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2020թթ. ռազմավարությամբ» ազատազրկված ԼԳԲՏ անձանց սոցիալ-հոգեբանական վիճակի բարելավմանը կամ տրամադրվող ծառայությունները նրանց կարիքներին համահունչ դարձնելուն ուղղված հասցեական գործողություններ նախատեսված չեն:

- Նշված ռազմավարությամբ անդրադարձ չի կատարվում սեռական բռնության ենթարկված ԼԳԲՏ անձանց, հորմոնաթերապիայի փուլում գտնվող, սեռափոխության վիրահատություն կատարած կամ այդ ծառայությունների կարիքն ունեցող ազատազրկված տրանս անձանց հոգեկան առողջության վիճակի գնահատման կարևորությանը:
- Ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման ու ռիսկերի գնահատման գործիքակազմի մշակման շրջանակներում չի կարևորվում սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված գործոնների կամ պատճառների ուսումնասիրությունը և կանխարգելման մեխանիզմների մշակման գործընթացում այդ գործոնները կամ պատճառները դիտարկելու անհրաժեշտությունը:

**Սննդի կազմակերպում**

- Ազատազրկված ԳԲՏ անձանց սնունդը լցվում է առանձին կաթսաների մեջ և բաժանվում առանձին շերեփներով կամ միանգամից տրամադրվում է առանձնացված տարրաներով, քանի որ մնացած ազատազրկված անձինք հրաժարվում են շփվել նրանց հետ և օգտվել նույն սպասքից: Սննդի տրամադրման ընթացքում ԳԲՏ անձանց նկատմամբ դրսևորվող խտրականության խնդիրն արձանագրվել է նաև քրեակատարողական հիմնարկներում սննդի ապահովումը մասնավոր ընկերությանը պատվիրակելու գործընթացը մեկնարկելուց հետո:
- Այդ դեպքերն արդարադատության նախարարության կողմից չեն դիտարկվում որպես սննդի տրամադրման ընթացքում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորում, հետևաբար կանխարգելման ուղղությամբ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվում:
- Ոլորտը կարգավորող ներպետական իրավական ակտերով սննդի կազմակերպման ընթացքում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքի, խտրականություն դրսևորող անձանց պատժի և պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ նախատեսված չեն:
- Սնունդը տրամադրելու ընթացքում ազատազրկված ԳԲՏ անձանց նկատմամբ դրսևորվող խտրական վերաբերմունքը չի դիտարկվում որպես քրեական ենթամշակույթի հետևանք: Հետևաբար վերջինիս հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակներում հիմնախնդրի կարգավորմանն ուշադրություն չի դարձվում:

**Աշխատանք**

- Քրեակատարողական հիմնարկներում առանց վարձատրության աշխատանքները պիտակավորված են, համարվում են «նվաստացուցիչ», «կեղտոտ» և կատարվում են ազատազրկված ԳԲՏ կամ նրանց հավասարեցված անձանց կողմից:
- Քրեական ենթամշակույթի չգրված օրենքները նշված խմբի անձանց արգելում են կատարել այնպիսի աշխատանքներ, որոնք շփում են ենթադրում ազատազրկված անձանց, վերջիններիս իրերի կամ սննդի հետ:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական իրավական ակտերը չեն նախատեսում ազատազրկված անձանց տրամադրվող աշխատանքի տեսակի առումով խտրականության արգելքի պահանջը: Առկա չեն նաև խտրականություն դրսևորած անձանց պատժի և պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ:
- Ազատազրկված անձանց զբաղվածության ապահովումը նախատեսված է քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությամբ: Սակայն ռազմավարության մեջ ազատազրկված անձանց համար հավասար աշխատանքային պայմանների ապահովմանն ուղղված որևէ գործողություն նախատեսված չէ:
- Սանիտարահիգիենիկ մաքրման աշխատանքները խոցելի խմբերի ազատազրկված անձանց կողմից իրականացնելու պրակտիկան չի դիտարկվում որպես քրեական ենթամշակույթի հետևանք: Հետևաբար դրա հաղթահարման նպատակով իրականացվող գործողությունների շրջանակներում հիմնախնդրի կարգավորմանն ուշադրություն չի դարձվում:

**Դասընթացներ և միջոցառումներ**

- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական իրավական ակտերը չեն ամրագրում հիմնարկների կողմից կազմակերպվող դասընթացներին և միջոցառումներին ազատազրկված անձանց հասանելիությունը և հավասար մասնակցությունն ապահովելուն ուղղված դրույթներ, ինչպես նաև չեն նախատեսում խտրականություն դրսևորած անձանց պատժի և պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ:
- Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության մեջ անդրադարձ չի կատարվում կրթական ծրագրերին ազատազրկված ԼԳԲՏ անձանց հասանելիության կամ հավասար մասնակցության ապահովման խնդրին:
- Ազատազրկված ԼԳԲՏ անձինք հիմնարկների կողմից կազմակերպվող դասընթացներից կամ միջոցառումներից կարող են դուրս մնալ քրեական ենթամշակույթի հետևանքով ձևավորված ոչ կանոնադրական հարաբերությունների պատճառով: Սակայն քրեական ենթամշակույթի

վերացման նպատակով իրականացվող նախաձեռնությունների շրջանակներում հիմնախնդրի լուծմանն ուղղված որևէ գործողություն նախատեսված չէ:

**Արտաքին աշխարհի հետ կապը**

- Ազատազրկված ԼԳԲՏ անձինք խոցելի են արտաքին աշխարհի հետ կապի պահպանման տեսանկյունից: Հիմնական մտահոգությունը կապված է օրենսդրական բացերի հետ:
- Նույնասեռ ամուսնությունները Հայաստանում օրինական չեն: Ներպետական օրենսդրությամբ ամուսնությունը թույլատրվում է միայն կնոջ և տղամարդու միջև: Փաստական ամուսնություններն իրավական կարգավիճակ չունեն և որևէ իրավական հետևանք չեն առաջացնում:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ ազատազրկված անձինք կարող են կարճատև և երկարատև տեսակցություններ ունենալ մերձավոր ազգականների հետ: Ներպետական օրենսդրությամբ ամուսինները մտնում են մերձավոր ազգականների ցանկի մեջ:
- Ներպետական իրավական ակտերով նախատեսված չէ զուգընկեր կամ մեկ այլ տերմին, որը սահմանում է նախատեսում «ԼԳԲՏ անձանց զույգ» հասկացության համար: ԼԳԲՏ զույգերը չունեն ամուսնու կամ մերձավոր ազգականի իրավական կարգավիճակ:
- Օրենսդրական կարգավորումների բացակայության պատճառով քրեակատարողական հիմնարկներն ազատազրկված անձանց կարճատև կամ երկարատև տեսակցություններ տրամադրելիս հիմք են ընդունում միայն պաշտոնապես գրանցված ամուսնությունները, ինչը բացառում է փաստական ամուսնությունները: Հետևաբար ազատազրկված ԼԳԲՏ անձինք զրկվում են իրենց զուգընկերների հետ տեսակցության հնարավորությունից:
- Նույնասեռ զույգերի ամուսնությունը Հայաստանում օրինական է համարվում միայն այն դեպքում, եթե արտերկրում նրանց ամուսնությունը գրանցվել է տվյալ երկրի օրենքի դրույթներին համապատասխան հյուպատոսական վավերացումից հետո: Սակայն հնարավոր չէ պաշտոնական տեղեկատվություն ստանալ այն մասին, թե եղել են դեպքեր, երբ նշված ընթացակարգով ամուսնացած նույնասեռ զույգերից մեկը, հայտնվելով քրեակատարողական հիմնարկում, տեսակցություն է ունեցել իր ամուսնու հետ, քանի որ համապատասխան հաշվառումներ չեն իրականացվում:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական իրավական ակտերով նախատեսված չեն այնպիսի հատուկ կարգավորումներ, որոնք, հաշվի առնելով ազատազրկված ԼԳԲՏ անձանց խոցելիությունը, բացառություն

կսահմանեն նրանց համար՝ թույլատրելով տեսակցությունները զուգընկերների կամ փաստական ամուսինների հետ:

- Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության մեջ անդրադարձ չի կատարվում ազատազրկված ԼԳԲՏ անձանց արտաքին աշխարհի հետ կապի ապահովմանն առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրությանը կամ կարգավորմանը:
- Պաշտպանի կողմից ազատազրկված ԼԳԲՏ անձանց արտաքին աշխարհի հետ կապի պահպանմանն առնչվող օրենսդրական բացերին կողմից անդրադարձ չի կատարվում:

**Բողոքների ներկայացման և քննության կարգը**

- Քրեական ենթամշակույթի չգրված օրենքներն արգելում են բողոքել հիմնարկների պայմանների, վարչակազմի կամ խցակիցների դեմ: Բացի այդ, ԼԳԲՏ անձինք խուսափում են բարձրաձայնել իրենց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի մասին, քանի որ չեն ցանկանում բացահայտել իրենց կարգավիճակը, կրկնազոհացման (վիկտիմիզացիայի) ենթարկվելու մտավախություն ունեն, որոշ դեպքերում էլ իրենց նկատմամբ վատ վերաբերմունքը չեն ընկալում որպես խնդիր՝ նշելով, որ իրենք իրենց տեղը գիտեն:
- Արդարադատության նախարարությունն ազատազրկված անձանց կողմից ներկայացվող բողոքների, դրանց բնույթի կամ բողոք ներկայացնող ազատազրկված անձանց վերաբերյալ առանձնացված հաշվառում չի իրականացնում: Այսինքն՝ առկա չէ այնպիսի ընթացակարգ, որը հնարավորություն կտա պարզել ազատազրկված ԼԳԲՏ անձանց կողմից ներկայացված բողոքների հաճախականությունը և դրանց միջոցով բարձրաձայնվող հիմնախնդիրների օրինաչափությունը, ինչը կարող է նպաստել այդ խնդիրների կարգավորման ուղղությամբ առավել հասցեական լուծումներ մշակելուն:
- Տղամարդկանց քրեակատարողական հիմնարկներում բարձր է ԳԲՏ անձանց սեռական և շահագործման ենթարկվելու վտանգը, սակայն մտահոգության տեղիք է տալիս այն, որ այդ դեպքում ևս ԳԲՏ անձինք վարչակազմին կամ իրավապահ մարմիններին բողոքներ չեն ներկայացնում:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական իրավական ակտերը սահմանում են ազատազրկված անձանց կողմից առաջարկություններ, բողոքներ և դիմումներ ներկայացնելու և քննարկելու կարգը, որոնք ընդհանուր են բոլոր ազատազրկված անձանց համար և հատուկ կարգավորումներ կամ ընթացակարգեր չեն նախատեսում ազատազրկված ԼԳԲՏ անձանց համար՝ հաշվի առնելով նրանց խոցելիությունը:

**Ազատման նախապատրաստում և վերասոցիալականացում**

- Ազատ արձակմանը նախապատրաստելու, հետազատման և վերասոցիալականացման փուլերում ԼԳԲՏ անձանց տրամադրվող հատուկ աջակցության անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք գործոններով՝ ընտանեկան կապերի բացակայություն, բանտում ունեցած փորձառություն, համայնքում աջակցության համարժեք մեխանիզմների բացակայություն և այլն:
- Ազատ արձակվելուց հետո ԼԳԲՏ անձինք կրկնակի խոցելի վիճակում են հայտնվում, քանի որ սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված կարծրատիպերին ավելանում է նաև ազատազրկվածի կարգավիճակ ունենալը:
- Կալանավորված անձանց և դատապարտյալներին ազատմանը նախապատրաստելու ընթացակարգը և այդ փուլում իրականացվող սոցիալ-հոգեբանական և իրավական աշխատանքներն ընդհանուր են բոլոր ազատազրկված անձանց համար և նկատի չեն առնում ԼԳԲՏ անձանց վերասոցիալականացման առանձնահատկությունները:
- Առկա չէ ազատմանը նախապատրաստելու փուլում աջակցություն տրամադրելու մեխանիզմ այն ԼԳԲՏ անձանց, որոնց կապն ընտանիքի հետ խզված է:
- Առկա չեն պրոբացիայի ծառայության, զբաղվածության կենտրոնների կամ համայնքային կազմակերպությունների հետ համագործակցության ծրագրեր՝ ուղղված ԼԳԲՏ անձանց կացարանով և աշխատանքով ապահովելուն կամ որոշակի ժամանակահատվածով սոցիալական աջակցություն տրամադրելուն:
- Բացակայում են ազատվելուց հետո իրականացվող վերասոցիալականացման կամ խնամքի ծրագրերը, որոնք կարող են կազմակերպվել համայնքային կազմակերպությունների հետ համագործակցությամբ:
- Ազատազրկված անձանց վերասոցիալականացումն ամրագրվել է որպես քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության առանցքային նպատակ: Սակայն ազատազրկված ԼԳԲՏ անձանց կարիքներին համահունչ վերասոցիալականացման ծրագրեր կամ նրանց սոցիալական վերաինտեգրումը երաշխավորող հատուկ միջոցառումներ ռազմավարությամբ նախատեսված չեն:

**Քրեակատարողական հիմնարկների աշխատողների ուսուցում և վերապատրաստում**

- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող վերաբերելի ներպետական օրենսդրությամբ ամրագրված չէ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների կողմից ազատազրկված անձանց նկատմամբ հավասար վերաբերմունքի և խտրականության արգելքի պահանջը: Սահմանված չեն հատուկ կարիքներ ունեցող ազատազրկված անձանց հետ աշխատանքների

կազմակերպման առանձնահատկությունները: Ամրագրված չէ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների վերապատրաստման կամ ուսուցման դասընթացների մեջ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ թեմաներ ներառելու պահանջը:

- Քրեակատարողական հիմնարկների հոգեբանների և սոցիալական աշխատողների համար չեն անցկացվում ազատազրկված ԼԳԲՏ անձանց հետ սոցիալ-հոգեբանական աշխատանքները կազմակերպելուն ուղղված նեղ մասնագիտական դասընթացներ:
- Քրեակատարողական բժշկության ոլորտի մասնագետների համար չեն կազմակերպվում վերապատրաստման այնպիսի դասընթացներ, որոնք կներկայացնեն ազատազրկված ԼԳԲՏ անձանց կարիքներին համահունչ բժշկական օգնության ու սպասարկման ծառայությունների մատուցման առանձնահատկությունները և այդ ընթացքում խտրականության բացառման անհրաժեշտությունը:
- «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով» նախատեսվում է 2020-2022թթ. ընթացքում քրեակատարողական ծառայողների համար պարբերաբար դասընթացներ իրականացնել կյանքի իրավունքի թեմայով: Քրեակատարողական ծառայությունում կադրային քաղաքականության վերանայումն ամրագրվել է որպես քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության առանցքային նպատակ: Սակայն ազատազրկված ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները չեն կարևորվել նշված փաստաթղթերում:

**Խտրականության դրսևորումներն ազատազրկված տրանս անձանց նկատմամբ**

- Քրեակատարողական հիմնարկներում լեսբի, գեյ և բիսեքսուալ անձանցից առավել անբարենպաստ է ազատությունից զրկված տրանս անձանց վիճակը: Հիմնական խնդիրները կապված են տեղաբաշխման, անձնական խուզարկության կազմակերպման, կարիքներին ներհատուկ առողջապահական ծառայությունների հասանելիության, հագուստի, հիգիենայի և խնամքի պարագաների տրամադրման, սեռափոխության վիրահատություն կատարելուց հետո անձը հաստատող փաստաթղթերում անվան և սեռի փոփոխման հետ:
- Հայաստանում ազատազրկված անձանց տեղաբաշխումը կատարվում է անձնագրային տվյալների հիման վրա: Այս սկզբունքն ընդհանուր է բոլոր անձանց համար և գործում է նաև ազատազրկված տրանս անձանց նկատմամբ, ինչը նշանակում է, որ անձնագրում սեռի նշումը փոխված չլինելու դեպքում տրանս կանայք տեղաբաշխվում են տղամարդկանց, իսկ տրանս տղամարդիկ՝ կանանց քրեակատարողական հիմնարկներում:

- Տեղաբաշխման այս սկզբունքը մեծացնում է հատկապես ազատազրկված տրանս կանանց խոցելիությունը, քանի որ տղամարդկանց քրեակատարողական հիմնարկներում մեծ է սեռական շահագործման կամ բռնաբարության ենթարկվելու վտանգը:
- Հայաստանում ազատազրկված տրանս անձանց տեղաբաշխման վերաբերյալ հատուկ օրենսդրական կարգավորումներ կամ ընթացակարգեր առկա չեն: Ընդհանուր սկզբունքով տեղաբաշխման հետևանքով ազատազրկված անձանց գենդերային ինքնությամբ պայմանավորված հատուկ կարիքները նկատի չեն առնվում քրեակատարողական հիմնարկներում նրանց հագուստով, հիգիենայի և խնամքի պարագաներով ապահովելու ժամանակ:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ ազատազրկված տրանս անձանց գենդերային ինքնությանը համապատասխանող հագուստով, կարիքներին ներհատուկ հիգիենայի և խնամքի պարագաներով ապահովելու վերաբերյալ կարգավորում նախատեսված չէ:
- Հաջորդ խնդիրը, որը մտահոգության տեղիք է տալիս, Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված տրանս անձանց կարիքներին ներհատուկ առողջապահական ծառայությունների բացակայությունն է:
- Ներպետական օրենսդրությամբ հորմոնաթերապիա անցնելու և սեռափոխության վիրահատություն կատարելու հնարավորություն նախատեսված չէ: Անհրաժեշտության դեպքում անձինք նշված վիրահատությունը կատարում են արտերկրում: Հայաստանում ևս կատարվում է սեռափոխության վիրահատություն, սակայն գաղտնի և անօրինական կերպով:
- Հորմոնաթերապիայի և սեռափոխության վիրահատության իրականացման՝ ներպետական օրենսդրությամբ նախատեսված չլինելու պատճառով առավել անբարենպաստ վիճակում են հայտնվում ազատազրկված տրանս անձինք:
- Հորմոնաթերապիան և սեռափոխության վիրահատությունը ներառված չեն ազատազրկված անձանց տրամադրվող առողջապահական ծառայությունների ցանկում, քրեակատարողական հիմնարկներն ապահովված չեն համապատասխան մասնագետներով, ինչը նշանակում է, որ տրանս անձինք այդ գործընթացն ազատազրկման ընթացքում սկսելու հնարավորություն չունեն: Նրանք, ովքեր հորմոնաթերապիայի կամ սեռափոխության գործընթացը սկսել են մինչև ազատազրկվելը, քրեակատարողական հիմնարկում հայտնվելուց հետո զրկվում են այն շարունակելու հնարավորությունից:

- Սեռափոխության վիրահատություն անցած անձանց հիմնական խնդիրները կապված են սեռափոխության վիրահատություն կատարելուց հետո անձը հաստատող փաստաթղթերում անվան և սեռի փոփոխման հետ:
- Ներպետական օրենսդրությամբ այդ փոփոխությունները կատարելու մեխանիզմ նախատեսված չէ: Արտերկրում կատարված վիրահատությունների հիմքով քաղաքացիական կացության ակտերում փոփոխություններ կատարելու կարգ ևս նախատեսված չէ:
- Հայաստանը չունի գենդերային ինքնության իրավական ճանաչման մասին համապարփակ օրենսդրություն:
- Առկա օրենսդրական բացերի պատճառով տրանս անձինք առավել խոցելի են դառնում ազատազրկման ընթացքում, քանի որ առկա չէ սեռափոխության վիրահատություն կատարելուց հետո անձը հաստատող փաստաթղթերում անվան և սեռի փոփոխության գործընթացի շարունակականությունն ապահովող կամ այն քրեակատարողական հիմնարկից սկսելու մեխանիզմ:
- Այն տրանս անձինք, ովքեր անձնագրում կատարել են միայն անվան փոփոխություն, արտաքին տեսքի և անձնագրում գրանցված սեռի ու անվան միջև առկա տարբերության պատճառով կարող են կրկնակի խտրականության և խարանի ենթարկվել քրեակատարողական հիմնարկներում:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հակախտրական օրենսդրություն, քաղաքականություն և ռազմավարություններ**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծում որպես խտրականության արգելքով պաշտպանվող հատկանիշներ ավելացնել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը՝ այդ հիմքով խտրականությունից տուժած անձանց իրավական և դատական պաշտպանության մեխանիզմներով ապահովելու նպատակով:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ ազատազրկված անձանց համար նախատեսել սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունից պաշտպանության իրավական մեխանիզմներ:
- Ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ անձանց նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցներ կամ պատժատեսակներ կիրառելու, նրանց պատժաչափը կրճատելու, պատժատեսակը կամ ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու վերաբերյալ իրավակարգավորումների մեջ որպես հիմք նախատեսել անձանց սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված խոցելիությունը:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ սահմանել ազատազրկված ԼԳԲՏ անձանց պահելու պայմանների առանձնահատկությունները:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ նախատեսել ազատազրկման ընթացքում անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքի ապահովմանն ուղղված ընթացակարգեր:
- Մշակել և ներդնել քրեակատարողական համակարգում խտրականության դեմ պայքարի համապարփակ հայեցակարգ: Այդ հայեցակարգում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքի ապահովման վերաբերյալ համապատասխան գործողություններ ներառել:
- Մշակել և ներդնել ազատազրկված ԼԳԲՏ անձանց պաշտպանությանը և նրանց ներհատուկ կարիքների ապահովմանն ուղղված քաղաքականություններ և գործողությունների ծրագրեր:

*ՀՀ կառավարությանը*
*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Ազատազրկված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրների և դրանց լուծման վերաբերյալ համապատասխան գործողություններ նախատեսել մարդու

իրավունքների պաշտպանության և քրեակատարողական ոլորտի ռազմավարություններում և գործողությունների ծրագրերում:

- Մարդու իրավունքների պաշտպանության հաջորդ ազգային ռազմավարության մեջ գործողություններ նախատեսել՝ ուղղված ազատազրկված ԼԳԲՏ անձանց իրավահավասարության ապահովմանը և նրանց վիճակի բարելավմանը:
- Քրեակատարողական ոլորտի հաջորդ ռազմավարության մեջ ազատազրկված ԼԳԲՏ անձանց համար պահման հավասար պայմանների ապահովումը և նրանց վիճակի բարելավումն ամրագրել որպես ռազմավարական նպատակ և նախատեսել համապատասխան գործողություններ:
- Քրեակատարողական ոլորտի հաջորդ ռազմավարության մեջ գործողություններ նախատեսել՝ ուղղված ազատազրկված ԼԳԲՏ անձանց կարիքների ուսումնասիրությանը: Այդ ուսումնասիրության հիման վրա ազատազրկված ԼԳԲՏ անձանց վիճակի բարելավմանն ուղղված համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարել:

*ՀՀ արդարադատության նախարարությանը*
*ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը*

- Քրեակատարողական համակարգի վերաբերյալ հաշվետվությունների մեջ ներառել ազատազրկված ԼԳԲՏ անձանց առնչվող հարցերը:
- Ազատազրկված ԼԳԲՏ անձանց ներհատուկ խնամքի ու պաշտպանության ապահովումը ներառել Հայաստանի քրեակատարողական ծառայության և հիմնարկների կառավարման և գնահատման մոդելի մեջ:

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին*

- Ազատազրկված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրների ուսումնասիրությունը ներառել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի տարեկան զեկույցներում:

**Քրեական ենթամշակույթ**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դեպքերը դիտարկել որպես քրեական ենթամշակույթի հետևանք: Վերջինիս հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակներում այդ հիմքով խտրականության կանխարգելման և ազատազրկված ԼԳԲՏ անձանց վիճակի բարելավման ուղղությամբ համապատասխան քայլեր ձեռնարկել:
- ՀՀ քրեական օրենսգրքում ազատազրկված անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացման մեջ

ներգրավելը նախատեսել որպես քրեական պատժի ենթարկելու հիմք և ծանրացուցիչ հանգամանք:

*ՀՀ կառավարությանը*
*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ քրեական ենթամշակույթի հետևանքով դրսևորվող խտրականության դեպքերի կանխարգելումը և նրանց վիճակի բարելավումը ներառել ՀՀ իրավական և դատական բարեփոխումների, ինչպես նաև քրեակատարողական ոլորտի հաջորդ ռազմավարությունների մեջ:

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին*

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի տարեկան զեկույցներում անդրադառնալ ազատազրկված անձանց նկատմամբ քրեական ենթամշակույթի հետևանքով դրսևորվող սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության ուսումնասիրությանը:

**Սեռական բռնություն և շահագործում**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Մշակել և ներդնել քրեակատարողական հիմնարկներում սեռական բռնությունների և սեռական բնույթի հանցագործությունների կանխարգելման, ԼԳԲՏ անձանց սեռական բռնության կամ շահագործման ենթարկվելու ռիսկերի նվազեցման ռազմավարություններ և ծրագրեր:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ սահմանել ազատազրկված անձանց նկատմամբ հիմնարկների աշխատակիցների կամ այլ ազատազրկված անձանց կողմից սեռական բռնության անթույլատրելիությունը:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ պատժի և պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ նախատեսել սեռական բռնություն կամ սեռական բնույթի հանցագործություն կատարող ազատազրկված անձանց և աշխատակիցների համար:
- Մշակել և ներդնել բռնարարին, այլ ոչ թե զոհին մեկուսացնելու քաղաքականություն:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ ազատազրկված տրանս անձանց համար սահմանել առանձին լոգանք ընդունելու ընթացակարգ:
- ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրել ատելության խոսքի սահմանումը, սահմանել սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով

պայմանավորված հանցագործությունները: Արարքը սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով կատարելը ներառել որպես պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ:

- Մշակել քրեակատարողական համակարգում ատելության խոսքի, ատելության հիմքով հանցագործությունների, հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դրսևորումների կանխարգելման համապարփակ քաղաքականություն:
- Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնությամբ հիմքով ատելության խոսքը, այդ հիմքով կատարված հանցագործությունները սահմանել քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ՝ արարքը սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով կատարելը ներառելով որպես պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ:

**Տեղաբաշխում**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Մշակել և ներդնել քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված ԼԳԲՏ անձանց վերաբերյալ առանձնացված հաշվառում իրականացնելու մեխանիզմ:
- Այդ մեխանիզմը մշակելիս ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը և նկատի առնել այն տեղայնացնելու առանձնահատկությունները: Երաշխիքներ սահմանել առ այն, որ ազատազրկված անձինք քրեակատարողական հիմնարկներում իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին տվյալները հայտնեն ոչ թե պարտադրաբար, այլ կամավոր, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել այդ տվյալների գաղտնիությունը և ազատազրկված ԼԳԲՏ անձանց անվտանգությունն ու պաշտպանությունն ապահովելու համար:
- Մշակել և ներդնել ազատազրկված ԼԳԲՏ անձանց տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում ներգրավվելու մեխանիզմ:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ դրույթներ և ընթացակարգեր նախատեսել ազատազրկված ԼԳԲՏ անձանց տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացմանը ներգրավվելու, նրանց մտահոգությունների կամ կարծիքի հիման վրա համապատասխան որոշում կայացնելու վերաբերյալ:
- Մշակել և ներդնել ազատազրկված անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության գաղտնիության պահպանման քաղաքականություն:
- Ազատազրկված անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության գաղտնիության պահպանման պահանջն ամրագրել քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրության մեջ:
- Նախադրյալներ ստեղծել ազատազրկված անձանց որպես ԼԳԲՏ ինքնանույնականացման իրավունքի ապահովման համար:

- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ ամրագրել քրեակատարողական հիմնարկներ ընդունելու, խցերում կամ կացարաններում տեղաբաշխելու, ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու և/կամ փոփոխելու ընթացքում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքը:
- Այդ հիմքով խտրականության դեպքում պատժի և պատասխանատվության մեխանիզմներ և դրանց ապահովման համապատասխան ընթացակարգեր նախատեսել քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրության մեջ:
- Ազատազրկված ԼԳԲՏ անձանց պաշտպանության նպատակով մեկուսացնելու դեպքում պայմաններ ստեղծել միջանձնային շփման, քրեակատարողական հիմնարկներում կազմակերպվող դասընթացներին և միջոցառումներին նրանց հասանելիության և հավասար մասնակցության ապահովման համար:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ կարգավորումներ նախատեսել կալանավորված և ազատազրկման դատապարտված ԼԳԲՏ անձանց պաշտպանական նկատառումներով մեկուսի պահելու վերաբերյալ:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ ազատազրկված անձանց անջատ պահելու հիմքերի մեջ նախատեսել խոշտանգումների և վատ վերաբերմունքի, խտրականության, սեռական շահագործման, ոտնձգության և բռնության ենթարկվելու վտանգները:
- Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը դիտարկել որպես քրեական ենթամշակույթի հետևանք, և դրա հաղթահարման նպատակով իրականացվող նախաձեռնությունների շրջանակներում քայլեր ձեռնարկել հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ:

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին*

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի տարեկան զեկույցներում անդրադառնալ տեղաբաշխման ընթացքում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության ուսումնասիրությանը:

**Պահման պայմաններ**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Անազատության մեջ պահվող յուրաքանչյուր անձի համար ապահովել հավասար և նույնանման պահման պայմաններ:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ ամրագրել ազատազրկված անձանց հավասար

պայմաններով ապահովելու վերաբերյալ դրույթներ և ընթացակարգեր, խտրականության դեպքում նախատեսել պատժի և պատասխանատվության մեխանիզմներ:

- ԳԲՏ անձանց ամենավատ պայմաններով խցերում կամ կացարաններում բնակեցնելը դիտարկել որպես քրեական ենթամշակույթի հետևանք, և դրա հաղթահարման ուղղությամբ իրականացվող նախաձեռնությունների շրջանակներում քայլեր ձեռնարկել հիմնախնդրի կարգավորման նպատակով:

*ՀՀ կառավարությանը*
*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- ՀՀ կառավարության գործունեության հաջորդ միջոցառումների ծրագրով, մարդու իրավունքների պաշտպանության ազգային, ինչպես նաև քրեակատարողական ոլորտի հաջորդ ռազմավարություններով ԼԳԲՏ անձանց դիտարկել որպես հատուկ խոցելի խումբ և նրանց համար հավասար պայմաններ ապահովելուն ուղղված հասցեական միջոցառումներ և գործողություններ նախատեսել:

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին*

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի տարեկան զեկույցներում անդրադառնալ ազատազրկված ԼԳԲՏ անձանց պահման պայմանների խնդրին:

**Անձնական խուզարկություններ**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Մշակել և ներդնել ազատազրկված ԼԳԲՏ անձանց անձնական խուզարկության անցկացման հատուկ մեխանիզմ, որը նկատի կառնի նրանց ներհատուկ կարիքները՝ նախատեսելով ինչպես աշխատակցի սեռն ընտրելու հնարավորություն, այնպես էլ պաշտպանության այլ անհրաժեշտ երաշխիքներ:
- Մշակել և ներդնել այնպիսի մեխանիզմ, որ քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված տրանս անձանց անձնական խուզարկությունները կազմակերպվեն անձի գենդերային ինքնության վրա:
- Վերոնշյալ փոփոխություններն ամրագրել քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ:

**Առողջապահական ծառայությունների հասանելիություն**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Բանտային առողջապահության և քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ ամրագրել բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու ընթացքում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքը:

- Մշակել և ներդնել ազատազրկված ԼԳԲՏ անձանց առողջապահական կարիքների անհատական գնահատման մեխանիզմներ:
- Քրեակատարողական հիմնարկներում մշակել և ներդնել ազատազրկված ԼԳԲՏ անձանց առողջապահական կարիքներին համահունչ առողջապահական ծառայություններ:
- Քայլեր ձեռնարկել քրեակատարողական հիմնարկներում հոգեբուժական ծառայության հասանելիության ապահովման, բուժանձնակազմի համալրման և մասնագիտական որակավորման ուղղությամբ:
- Քայլեր ձեռնարկել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ազատազրկված անձանց ստացիոնար բուժումն առավել արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:
- Մշակել և ներդնել քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս ազատազրկված անձանց հոգեկան առողջության վիճակի գնահատման և սկրինինգային հետազոտության անցկացման ծրագրեր, ներգրավել համապատասխան մասնագետներ:
- Մշակել և ներդնել սեռական բռնության ենթարկված ազատազրկված անձանց համապատասխան բժշկական օգնություն և հոգեբանական խորհրդատվություն տրամադրելու ծրագրեր:
- Սեռական բռնության ենթարկված ազատազրկված անձանց համապատասխան բժշկական օգնություն և հոգեբանական խորհրդատվություն տրամադրելն ամրագրել բանտային առողջապահության և քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ:
- Մշակել և ներդնել ազատազրկման պահին հորմոնաթերապիայի փուլում գտնվող, սեռափոխության վիրահատություն կատարած կամ նման ծառայությունների կարիք ունեցող տրանս անձանց կարիքներին համահունչ մասնագիտական ծառայություններ և խորհրդատվության ծրագրեր:
- Ազատազրկման պահին հորմոնաթերապիայի փուլում գտնվող, սեռափոխության վիրահատություն կատարած կամ նման ծառայությունների կարիք ունեցող տրանս անձանց կարիքներին համահունչ մասնագիտական ծառայությունները և խորհրդատվության ծրագրերը ներառել բանտային առողջապահության և քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրության մեջ:

*ՀՀ արդարադատության նախարարությանը*
*ՀՀ առողջապահության նախարարությանը*

- Մշակել և ներդնել քրեակատարողական հիմնարկներում ազատազրկած անձանց շրջանում ՄԻԱՎ հետազոտությունն ազատազրկման նախնական փուլում անցկացնելու մեխանիզմ:

- Մշակել և ներդնել ազատազրկված անձանց պահպանակներ տրամադրելու և դրանց օգտագործման քաղաքականություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով ազատազրկված անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության գաղտնիության պահպանմանը:

**Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Քայլեր ձեռնարկել քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքների բարելավման, մասնավորապես մասնագետների համալրման, աշխատանքային պայմանների ստեղծման, մասնագիտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմի և մեթոդական ուղեցույցների մշակման, ազատազրկված անձանց սոցիալ-հոգեբանական կարիքների գնահատման գործիքակազմի մշակման, հոգեբանների վերապատրաստման ուղղությամբ:
- Մշակել և ներդնել ազատազրկված ԼԳԲՏ անձանց սոցիալ-հոգեբանական կարիքների գնահատման մեխանիզմ՝ ներառելով այնպիսի գործիքներ, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի պարզել նրանց՝ սեռական բռնության զոհ դառնալու կամ այլոց համար վտանգ ներկայացնելու հավանականությունը:
- Մշակել և ներդնել ազատազրկված ԼԳԲՏ անձանց սոցիալ-հոգեբանական կարիքներին համահունչ խորհրդատվությունների և խնամքի ծրագրեր:
- ՀՀ արդարադատության նախարարի 2016թ. հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանով սեռական բռնության հետևանքով առաջացած խնդիրների կարգավորման և նմանատիպ աշխատանքներ նաև կալանավորված անձանց հետ կազմակերպելու վերաբերյալ դրույթներ նախատեսել:
- ՀՀ արդարադատության նախարարի 2016թ. հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանով նախատեսել այն միջոցներն ու հստակ չափանիշները, որոնց հիման վրա հնարավոր կլինի ի հայտ բերել բարձր ռիսկայնություն ունեցող ազատազրկված անձանց:
- ՀՀ արդարադատության նախարարի 2016թ. հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանով հատուկ աշխատանքներ նախատեսել սեռական բռնության ենթարկված ԼԳԲՏ անձանց, ազատազրկման պահին հորմոնաթերապիայի կամ սեռափոխության փուլում գտնվող կամ այդ ծառայությունների կարիքն ունեցող ազատազրկված տրանս անձանց համար:
- Ազատազրկված անձանց շրջանում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման ու ռիսկերի գնահատման գործիքակազմի մշակման շրջանակներում կարևորել սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված գործոնների կամ պատճառների ուսումնասիրությունը: Կանխարգելման մենախիզմների մշակման գործընթացում դիտարկել այդ գործոնները կամ պատճառները:

*ՀՀ կառավարությանը*
*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Քրեակատարողական ոլորտի հաջորդ ռազմավարությամբ ազատազրկված ԼԳԲՏ անձանց ներհատուկ կարիքների և ռիսկերի գնահատման, պատժի և վերահսկողության պլանավորման առանձնահատկությունների վերաբերյալ գործողություններ նախատեսել:

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին*

- Հաշվի առնելով ազատազրկված ԼԳԲՏ անձանց հատուկ խոցելիությունը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի տարեկան զեկույցներում անդրադառնալ ազատազրկված ԼԳԲՏ անձանց ներհատուկ սոցիալ-հոգեբանական կարիքների ուսումնասիրությանը, այդ կարիքների գնահատման մեխանիզմի մշակման և ներդրման անհրաժեշտությանը:

**Սննդի կազմակերպում**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ մեխանիզմներ նախատեսել սննդի կազմակերպման ընթացքում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքի վերաբերյալ:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրության մեջ վերոնշյալ հիմքով խտականություն դրսևորող անձանց պատժի և պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ նախատեսել:
- Սնունդը տրամադրելու ընթացքում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրական վերաբերմունքը դիտարկել որպես քրեական ենթամշակույթի հետևանք և վերջինիս հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակներում հիմնախնդրի կարգավորման նպատակով քայլեր ձեռնարկել:

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին*

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի տարեկան զեկույցներում անդրադառնալ սնունդը տրամադրելու ընթացքում ազատազրկված անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությանը:

**Աշխատանք**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ ամրագրել ազատազրկված անձանց տրամադրվող

աշխատանքի տեսակի առումով խտրականության արգելքի պահանջը և խտրականության արգելքի ապահովմանն ուղղված ընթացակարգեր:

- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ ազատազրկված անձանց աշխատանքով ապահովելու ընթացքում խտրականություն դրսևորած անձանց համար նախատեսել պատժի և պատասխանատվության մեխանիզմներ:
- Քրեակատարողական հիմնարկներում սանիտարահիգիենիկ մաքրման աշխատանքները խոցելի խմբերի ազատազրկված անձանց կողմից իրականացնելու պրակտիկան դիտարկել որպես քրեական ենթամշակույթի հետևանք, և դրա հաղթահարման նպատակով իրականացվող գործողությունների շրջանակներում հիմնախնդրի կարգավորմանն ուղղված քայլեր ձեռնարկել:
- Քրեակատարողական հիմնարկներում անհիտարահիգիենիկ մաքրման աշխատանքների համար հաստիքներ սահմանել և վերացնել այդ աշխատանքները բացառապես խոցելի խմբերի ազատազրկված անձանց կողմից իրականացնելու պրակտիկան:

*ՀՀ կառավարությանը*
*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Քրեակատարողական ոլորտի հաջորդ ռազմավարությամբ գործողություններ նախատեսել ազատազրկված անձանց համար հավասար աշխատանքային պայմաններ ապահովելու ուղղությամբ:

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին*

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի տարեկան զեկույցներում անդրադառնալ ազատազրկված անձանց աշխատանքով ապահովելու ընթացքում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության ուսումնասիրությանը:

**Դասընթացներ և միջոցառումներ**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ ամրագրել քրեակատարողական հիմնարկների կողմից կազմակերպվող դասընթացներին և միջոցառումներին ազատազրկված անձանց հավասար մասնակցությունն ապահովելուն ուղղված դրույթներ:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ ամրագրել քրեակատարողական հիմնարկների կողմից կազմակերպվող դասընթացներին և միջոցառումներին ազատազրկված անձանց հավասար մասնակցությունն ապահովելուն ուղղված ընթացակարգեր:

- Այդ գործընթացում խտրականություն դրսևորած անձանց համար քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ նախատեսել պատժի և պատասխանատվության մեխանիզմներ:

*ՀՀ կառավարությանը*
*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Ապահովել կրթական ծրագրերին և միջոցառումներին ազատազրկված ԼԳԲՏ անձանց հավասար մասնակցությունը: Այդ նպատակին ուղղված գործողություններ նախատեսել քրեակատարողական ոլորտի հաջորդ ռազմավարությամբ և քրեական ենթամշակույթի հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակներում:

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին*

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի տարեկան զեկույցներում անդրադառնալ հիմնարկների կողմից կազմակերպվող դասընթացներին և միջոցառումներին ազատազրկված ԼԳԲՏ անձանց հասանելիության և հավասար մասնակցության խնդրին:

**Արտաքին աշխարհի հետ կապը**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Ներպետական օրենսդրության մեջ ամրագրել նորմեր ԼԳԲՏ զույգերի իրավական կարգավիճակի մասին:
- Ներպետական օրենսդրությամբ ԼԳԲՏ զույգերին տրամադրել «մերձավոր ազգականի» կարգավիճակ քաղաքացիական, ընտանեկան և քրեական օրենսդրական կարգավորման բնագավառում:
- Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ նախատեսել ազատազրկված ԼԳԲՏ անձանց իրենց զուգընկերների հետ տեսակցություններ տրամադրելու վերաբերյալ հատուկ կարգ:
- Այդ նպատակով քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ նախատեսել այնպիսի կարգավորումներ, որոնք, հաշվի առնելով ազատազրկված ԼԳԲՏ անձանց խոցելիությունը, բացառություն կսահմանեն նրանց համար՝ թույլատրելով տեսակցությունները զուգընկերների կամ փաստական ամուսինների հետ:

*ՀՀ կառավարությանը*
*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Քրեակատարողական ոլորտի հաջորդ ռազմավարության մեջ դիտարկել ազատազրկված ԼԳԲՏ անձանց արտաքին աշխարհի հետ կապի ապահովման հիմնախնդրի կարգավորումը:

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին*

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի տարեկան զեկույցներում անդրադառնալ ազատազրկված ԼԳԲՏ անձանց արտաքին աշխարհի հետ կապի պահպանման խնդրին:

**Բողոքների ներկայացման և քննության կարգը**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Մշակել և ներդնել ազատազրկված ԼԳԲՏ անձանց կողմից ներկայացվող բողոքները վերլուծելու մեխանիզմ:
- Մշակել և ներդնել բողոքների քննության ընթացքում մեղավորներին, այլ ոչ թե զոհերին մեկուսացնելու պրակտիկա:
- Մշակել և ներդնել ազատազրկված անձանց կողմից սեռական բռնության մասին բողոքների ներկայացման այնպիսի մեխանիզմ, որը կապահովի բողոք ներկայացնող ազատազրկված անձանց գաղտնիությունը և պաշտպանությունը:
- Մշակել և ներդնել սեռական բռնության դեպքերի մասին բողոք ներկայացնող ազատազրկված անձանց նկատմամբ հաշվեհարդարի, նրանց նկատմամբ հետապնդումների կամ պատժիչ վերաբերմունքի կանխարգելման մեխանիզմներ:
- Մշակել և ներդնել այդ բողոքներին արագ արձագանքելու, զոհերի պաշտպանությունը երաշխավորելու և հանցագործություն կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու հատուկ մեխանիզմներ:
- Հաշվի առնելով ազատազրկված ԼԳԲՏ անձանց խոցելիությունը՝ նրանց կողմից ներկայացվող բողոքների վերաբերյալ հատուկ կարգավորումներ և ընթացակարգեր նախատեսել քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ:

**Ազատման նախապատրաստում և վերասոցիալականացում**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Մշակել և ներդնել ազատազրկված ԼԳԲՏ անձանց կարիքներին համահունչ ազատմանը նախապատրաստելու ընթացակարգեր և այդ փուլում իրականացվող սոցիալ-հոգեբանական և իրավական աշխատանքներ:
- Այդ ընթացակարգերը և աշխատանքներն ամրագրել քրեակատարողական ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությամբ:
- Մշակել և ներդնել ազատազրկված ԼԳԲՏ վերասոցիալականացմանը և սոցիալական վերաինտեգրմանն ուղղված հատուկ ծրագրեր:
- Ազատազրկված ԼԳԲՏ անձանց պաշտպանությանը և սոցիալական վերաինտեգրմանն ուղղված քաղաքականությունները և ռազմավարությունները մշակելիս խորհրդակցություններ անցկացնել ոլորտային կազմակերպությունների հետ:

- Մշակել և ներդնել ԼԳԲՏ անձանց իրավունքների ոլորտում աշխատող հկ-ների հետ համագործակցության ծրագրեր: Մշակել այդ հկ-ների կողմից ազատազրկված ԼԳԲՏ անձանց կարիքներին ուղղված հասցեական ծրագրեր:
- Մշակել և ներդնել ազատազրկված ԼԳԲՏ անձանց աջակցության ծրագրեր այն դեպքում, երբ նրանց կապն ընտանիքի հետ խզված է:

*ՀՀ կառավարությանը*
*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Ազատազրկված ԼԳԲՏ անձանց կարիքներին համահունչ վերասոցիալականացման ծրագրեր և նրանց սոցիալական վերաինտեգրումը երաշխավորող հատուկ միջոցառումներ նախատեսել քրեակատարողական ոլորտի հաջորդ ռազմավարությամբ:

*ՀՀ արդարադատության նախարարությանը*
*ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը*

- Մշակել պրոբացիայի ծառայության և սոցիալական ապահովության մարմինների հետ համագործակցության մեխանիզմներ՝ ուղղված ազատազրկված ԼԳԲՏ անձանց համար կացարանի և զբաղվածության ապահովման գործընթացի խթանմանը:

**Քրեակատարողական հիմնարկների աշխատողների ուսուցում և վերապատրաստում**

*ՀՀ արդարադատության նախարարությանը*

- Ոլորտը կանոնակարգող վերաբերելի ներպետական օրենսդրությամբ ամրագրել քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների կողմից ազատազրկված անձանց նկատմամբ հավասար վերաբերմունքի և խտրականության արգելքի պահանջը: Սահմանել հատուկ կարիքներ ունեցող ազատազրկված անձանց հետ աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները: Ամրագրել քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների վերապատրաստման կամ ուսուցման դասընթացների մեջ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ թեմաներ ներառելու պահանջը:
- Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների համար կազմակերպել նախնական և շարունակական ուսուցում մարդու իրավունքների և խտրականության արգելքի վերաբերյալ՝ ներառելով թեմաներ սեռական կողմնորոշման կամ սեռական ինքնության հիմքով խտրականության արգելքի վերաբերյալ:
- Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների համար կազմակերպել նախնական և շարունակական ուսուցում ազատազրկված ԼԳԲՏ անձանց վերաբերող քաղաքականությունների վերաբերյալ:

